նութիւն և մարդասիրութիւն. տես, (յհ, թ.ԿԳ. ԿԼ, ժա)։ Բայց աստուածային շնորհը և ողորմութիւնը զղջումն կանչեցին Դաւթան մարգարէին միջնորդութեամբը նէ, ինքն ալ տեղի տալով այս հրաւիրութիւնին ըսաւ, Մեղայ տեառն. և Դաւթան ալ ըսաւ, «Տէր անցոյց զքո զմեղս քո, և մի՛ մեռցիս». (յհ, թ.ԿԳ. ժբ. 13)։ Բ. Հա՛ նախատահանեալն անկաւ, բայց աստուածային շնորհացը տեղի տալով յարեաւ։

Բ. Սիւս օրինակ եւս 'ի նորոցս՝ որ էր արքայութեան առաքեալն Պետրոս, որ նախատահանեալ էր 'ի Քրիստոս, բայց երբք անգամ ուրանալով ըզքրիստոս՝ ապրատփելի մեղաց մէջ ինկաւ. բայց երբ ասորալ Դաւթանայ պէս խրրկրված հրաւէր մը եղաւ աստուծմէ՝ առ 'ի ապաշխարութիւն, այնչափ զղջաց և ապաշխարեց, մինչև ինքն ալ իւր վարդապետին նման՝ անոր սիրոյն համար խաչվեցաւ։ Բ. Հա՛ նախատահանեալն անկումն, և շնորհօք յառնելն։

Լաւ որ ըսես աստուծմէ եղած հրաւէրը՝ Պետրոսի ի՞նչ էր, տես յաւետարանին Ղուկասու՝ (իբ, 61), Դարձաւ տէր, և հայեցաւ 'ի Պետրոս։ Այս հայեցողութեան շնորհացը տեղի տալով արքայութեան առաքեալը, նոյն աւետարանիչը կը վկայէ 'ի նոյն տեղին, թէ յետ հայեցմանն յիսուս 'ի Պետրոս, Պետրոս ելեալ արտաքս, և լաց գառնապէս։ Երբեմն նախատահանեալքն ըսես որուն մ' անձնիշխանեն, և ըսես որուն մ' մարդ են, կրնան իյնալ, և գարձեալ շնորհացն ոյ տեղի տալով յառնելու

Հ. Կ. Պ. Իսկ թէ հարկ կը լայ ասել, թէ ինչո՞ւ աստուած այս ինչ մարդ նախասահմանեց, և այս ինչ մարդ չի նախասահմանեց։

Պ. Այս հարցմանը պատասխանի չի կրնար տալ մահկանացու մարդ. քանզի որքան ի մարմնի եմք՝ անճառելի է մեզ, և անճառելի լինիլն, ոչ թէ ես ինձէն կըսեմ, այլ և անօրէն ընտրութեան արբազան առաքեալն Պօղոս կը վկայէ զարմանալով, յասելն՝ «Ո՛վ խորք մեծութեան՝ և իմաստութեան՝ և գիտութեան Աստուծոյ, որոյ անքննելի են դատաստանք և անքննելի ճանապարհք նորին»։

Հ. ԿԱ. Ախատահմանութիւնը որպիսութիւնը ըստ բաւականին իմացանք. և թէ կարելի է, հանմատուցանի մը նախաշարժութիւնն ալ հասկըցուր, որ իմանանք՝ թէ ի՞նչ է, կամ ի՞նչ պիտի ըլլայ։

Պ. Այդ նախաշարժութիւնը աստուածային ուսուցութեան գործն է, որ իրականապէս և ի ներքուստ և ներգործաբար կը շարժէ աստուածմարդուն կամքը առ ի առնել. քանզի իրականապէս շարժել զկամս՝ միայն աստուծոյ է. քանզի գործոցս ամենն ներգործական զօրութիւնը՝ է ի ձեռին աստուծոյ, զի նա է իշխեցող կամացն և արարիչ և պահպանիչ և կատարիչ նորա»։

Հ. ԿԲ. Արամիեան աստուծմէ է ասիր այդ նախաշարժութիւնը, որով կը շարժէ մարդուս

կամքը առ ի առնել, ապա մարդոյս կամքը անձ-
նիշխանութեամբն կելլայ, և բռնութեամբ կը
գործէ՝ ինչ որ պիտի գործէնք։

Պ. Ոչ, յնպէս չէ, անձնիշխանութեամբն չելլար.
որովհետև այն կամքին սատղծողը ինքն է, ազատ
կը մնայ և ս կամքը և կամեցողը այն գործուելոյ
շարժութեամբը։ Ոչ՝ սուրբն Օգոստինոս այս
խաչքիս վրայ խօսելով, կըսէ՝ թէ աստուած ըզ-
շար կամս փոխարկէ ի բարի, կամ մարդոյն սիր-
ոը ի բարին յօժարել կուտայ. յայտնի է որ այդ
բարի գործը՝ որ ընել կուտայ մարդոյս, արդիւ-
նաւոր գործ է, որ անոր փոխարէն վարձ պիտի
պարդևէ. թէ որ գործը՝ գործողին ազատ կամ-
քով և անձնիշխանութեամբը չըլլար՝ բռնու-
թեամբ ըլլար, ա՞ռ չէր որ վարձ ունենար՝
կամ արդիւնաւոր ըլլար. և որովհետև արդիւ-
նաւոր է և վարձուց արժանաւոր, ապա գործո-
ղը բռնութեամբ գործած չըլլար, այլ անձնիշ-
խանութեամբ։

Հ. ԿԳ. Թէ որ կարելի է, այս նախաշարժ-
ութիւնը իրականապէս աստուծմէ ըլլալուն
վրայ, ի գրոց վկայութիւն բեր, որ հաստա-
տութեամբ ընդունիմ։

Պ. Ա՛յլ թէ միայն յաստուածաշունչ գրոց,
այլև ի սրբոց հարց վկայութիւն բերեմ, թէ
և երկարութիւն կըլլայ, և նախ յաստուածա-
շունչ գրոց։ Գրեալ է ի գիրս Եսայեայ. «Տէր

թագաւոր ամենակալ, զի քում հրամանիդ սպասէ ամենայն ոք. ոչ ոք է՝ որ ընդդէմ կայ կամաց քոց։ (Եսթեր. ժգ. 9)։ Դարձեալ՝ «Մի թէ վերանայցէ փայտասա առանց փայտահարի, կամ բարձրանայցէ սղոց առանց ուրուք ձգելոյ. Նոյնպէս թէ դգաւազան ոք, կամ գփայտ առնուցուս։ (Եսայի. ժ. 15)։ «Որպէս սահանք ջրոյ, նոյնպէս սիրտ թագաւորի՝ ի ձեռս աստուծոյ, ընդ որ կողմ կամի՝ դարձուցանէ զնա։ (Առակ. իա. 1)։ Լինի թէ սիրտ թագաւորի՝ ի ձեռին աստուծոյ, ուրեմն և սիրտ ամենայն մարդկան։ «Փոփոխէ զսիրտ իշխանաց երկրի, մոլորեցոյց զնոսա՝ ի ճանապարհի, զոր ոչ գիտէին։ (Յոբ. ժբ. 24)։ Զեռ օծանելոյն թագաւոր՝ ի Սամուէլէ, այսպէս ասէ տուրբ գիրն վասն Սաւուղայ. «Հրջեանց նմա աստուած զսիրտ այլ։ (Ա, Թագ. ժ. 9)։ Լա Երեմիա՝ ի գիսանց ժողովրդեանն ասէ աստուած. «Դարձո զիս, և դարձայց՝ զի դու ես աէր աստուած իմ։ (Երէմ. լա, 18)։ Լա գլուխ ամենայն վկայութեանց որ՝ ի տուրբ գրոց, է այն՝ զոր ասէ Յովհաննէս. «Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ, որ ինչ եղևն։ (Յով. ա. 3)։

Զամբ տուրբ հարց վկայութեանց, որ այդ նախաշարժութեան աստուդութեանը կը վկայեն։ Լուրքն Օգոստինոս կըսէ. «Աստուած՝ ի կամաց մարդկան առնէ, զոր կամի և յորժամ կամի։» Լուռնելիոս այսպէս կըսէ. «Հարմի յաստուծոյ ամենայն ինչ՝ իբր յառաջնոյ շարժողէ, որ թէ

ոչ շարժեացէ յառաջագոյն՝ հարկ է ոչինչ իմիք շարժիլ բնաւ՝ ի յԵս։ Ընդրկաս Վէգեան այսպէս կրսէ. «Աստուածային զօրութիւնն անծանօթ մերձենցուն, և կամաց մերոց պրանչելի շրջուն և հակուն։ Սուրբն Դիոնէսիոս Արիս պագացին ասէ. «Սկիզբն է մի միայն՝ յորմէ է գոլ. և ամենայն զօրութիւն, ամենայն ուղղութիւն, ամենայն ներգործութիւն և շարժուն։ Սուրբն Ամբրոսիոս ասէ. «Աստուած է ամենայնի կենդանարարիչ՝ շարժիչ և կառավար, որպէս հոգին՝ ի մարմնի բովանդակ ամենայն ուրեք ազդէ, կենդանարարեալ զնա, շարժեալ և կառավարեալ։ Սուրբն Բարսեղ ասէ. «Աստուած ամէն է բնութիւն, և այլազգ քան զիրաստացեալն նորա՝ անհնար է իրին գիտիլ, զի ամենայնի է կարող, և ըստ կամն իւր փոփոխէ զամենայն։ Լ. Ուսկերբերանն ասէ. «Ամենայն ինչ յանդաշխատ ձեռանէն աստուծոյ հաստատեալ և շարժեալ՝ անօրինի՝ ի մեր փրկութիւն։ Խօսք ուրիշ վկայութիւնքը՝ որ սուրբ գրոց մէջ շատ են։

Է. ԿԴ. Հաւանեցայ բոլոր վկայութեանցդ, որ այս իրական նախաշարժութիւնը աստուծմէ է, և ամենայն ինչ նովաւ կը լայ, և նա է շարժող զամենայն գործող՝ ի գործել. ապա ինչո՞ւ համար միշտ չի շարժէր մեզի՝ ի բարի գործա՝ ինքն բարի ըլլալով, մանաւանդ շատ անգամ չար գործել կուտայ։

Պ. Հշմարիտ է՝ որ աստուած կարող է բա-
ցարձակապէս ամէն շարիքը խափանել, և ամ-
ենուն միայն բարի գործել տալ իւր ամենա-
կարող զօրութեամբը. որ մարդ չի կրնար ուրա-
նալ. բայց պէտք չէ աստուածային իմաստու-
թիւնը՝ որ ամէն շարիքը խափանէ, այլ շանիւն
ալ թոյլ կուտայ, որոնցմէ հասարակաց օգուտ
կը յառաջանայ. քանզի թէ որ ամէն շարիք
խափանիւն, շատ բարիք կը պակսին աշխարհէս։
Թէ որ հալածանք և շարշարանք չըլլար հեթա-
նոսներէն, նահատակաց համբերութեան վարձը՝
և մարտիրոսական պսակը չէր ըլլար. անոր համար
և բնաւին աստուած թոյլ կուտայ շարեաց ըլլալ,
որ ասոնց բաց գեղեցկութիւնը փայլի. քանզի
պատկերին մէջի սուներէն կը յառաջանայ պատ-
կերին գեղեցկութիւնը. այս մասը կը գրէ սուրբն
Օգոստինոս, թէ՝ "Դանեա նկարիչն ուր դիցէ
զսև որակն գոյն՝ զի վայելուչ ելցէ նկարն. և ոմն
ոչ գիտիցէ՝ ուր դիցէ զմի զաւուրն, զի գեղեցիկ
ելցեն արարածք"։

Այս որովհետև ամենարարի է աստուած, շա-
բերէն ևս մեծամեծ բարիք կը հանէ, ինչպէս
որ ուրիշ տեղ ալ խօսեցանք. և նոյն Օգոստինոս
վարդապետը կը վկայէ այսպէս ըսելով. "Ո՞չ
թոյլ տայր աստուած շարի խիզք ընել՝ ի գործս
իւր, եթէ չէր այնպէս ամենազօր և բարի՝ մինչև
՝ի շարեաց առնել բարիս"։ Վարձեալ՝ շատերը
կան, որ մեղանչական են և շատ պակասութիւն
ներ ունին, պէտք է որ աստուած այնպէս աներ

այնպէս շարժել, որ թոյլ տայ շատ անդամ անկից շարութիւն յառաջանալ. թէպէտ ինքն ամենևին չի մերձենար այն շարին՝ ըստ որում շար։

Այս ամեն փոքր ինչ դժուարութիւն պիտի երևայ, բայց գիւրին է այն և՛ հասկացուելը։ Ասել կը կամիս, թէ ի՞նչպէս կըլլայ՝ որ առաւաձայնին շարժութիւնը կը տարածի այն շար գործողութեանց վրայ։

Աստուածայնին շարժութեան տարածվիլը այն գործոց վրայ՝ ո՛չ ըստ որում շար կը տարածվի, այլ միայն ըստ որում գործ։ Այդ քեզ գեղեցիկ օրինակ մի. ամմէն անդամոց առաջին շարժողը յայտնի է՝ որ մարդոյս հոգին է, որ է պարզ էութիւն մի. բայց ամմէն անդամներն ալ մի և նոյն կերպով չեն ընդունէր նորին շարժման զօրութիւնը, այլ ամմէն մէկը իրեն պէտք ըլլալուն չափ, ոտքը՝ քայլելու չափ, ձեռքը՝ գործելու չափ, և այլն. թէպէտ շարժող հոգին միակերպ զօրութեամբ ամմէնեն ալ շարժեց՝ և ամմէնուն ալ շարժող կըսվիս։ Իմէ որ այս անդամոց մէկը խեղ ըլլայ, որպէս եթէ ոտքին մէկը կաղ ըլլայ, յիրաւի միւս ողջ ոտքին նման կը շարժի հոգւոյն մի և նոյն զօրութեամբը, բայց ողջ ոտքին պէս չի կրնար քալել։

Այդ՝ ասել կուզեմ թէ, հոգին տարածեց իւր զօրութիւնը այն կաղ ոտքին՝ որ շարժի, և ո՛չ ձուռ քայլէ. քանզի ձռութիւնը կամ ձռուքայլելը իւր կաղութենէն է, և ո՛չ թէ հոգւոյն շարժիչ զօրութենէն։ Նմանապէս և աստուծոյ

շարժութիւնը՝ ինչպէս որ ասի, կը տարածի և առ շար գործն, բայց ոչ ըստ որում շար՝ այլ ըստ որում գործ. ինչպէս հոգին պատճառ է շարժման կաղ ոտքին, բայց կաղ գնալը այն շարժմանէն չէ՝ այլ կաղութիւնէն։

Հ. ԿԵ. Ո՞ւնչ է հրեշտակն։

Պ. Հրեշտակը իմացական գոյացութիւն մի է՝ մշտաշարժ, կամաք անձնիշխան, անմարմին, առաջնոյ ստեղծեալ, ընկալեալ զանմահութիւն ըստ շնորհաց և ոչ ըստ բնութեան։

Ա՛րդ՝ իմացական գոյացութիւն ասելն, որ զանազանի բանական հոգիէն. քանզի բանական հոգին պատճառէն պատճառեցեալը կիմանայ. բայց իմացականը, այսինքն հրեշտակը պատճառը և պատճառեցեալը միապէս գիտէ։

Մշտաշարժ ասելն՝ վասն շարժման սիրոյն, քանզի հրեշտակներքս քան զամենայն ստեղծուածս մօտ են՝ էութեամբ բարոյն նոյ, միշտ շարժմամբ սիրոյն ստեղծողին հրամանի նորոգ։

Կամաք անձնիշխան ասելն. հրեշտակին անձնիշխանութիւնը՝ մարդոյս անձնիշխանութեանը պէս չէ երբեմն առ բարին և երբեմն առ չարն, այլ այսպէս իմանալ պէտք է. զի միանգամ բարի հրեշտակը՝ անձնիշխանութեամբ բարին ընտրեց, և նոյն ընտրութեանը վրայ կը մնայ միշտ՝ և չի փոփոխիր առ չարն. նոյնպէս են և չար հրեշտակներքս։

Ընդարմին ըսվեցաւ. քանզի պարզ էութիւն է բան ինքեան կայացեալ, և ոչ թէ բանական հոգւոյն պէս մարմնոյ վիճակեալ։

Աստուծոյ սպասաւոր ըսվեցաւ. քանզի իւրաքանչիւր դասք միշտ աստուածային հրամանաց կամակատար պաշտօնեայ են։

Ընկալեալ զանմահութիւն բան շնորհաց և ոչ բան բնութեան ըսվեցաւ. թէպէտ անմահ է հրեշտակական բնութիւնը, բայց այն անմահութիւնը բնականաբար ի բնութենէ չունի, ինչպէս կրակը բնականաբար ջերմ է. այլ ի շնորհացն աստուծոյ ունին, որ թէ չը լար նոյն շնորհաց զօրութիւը, ամենեն ալ յոչինչ կը դառնային։

Հ. ԿԶ. Հրեշտակները ի՞նչպէս կը ճանաչեն՞

Պ. Հրեշտակները իրենք իրենց գոյացութիւը չեն ճանչնար. քանզի իրենց գոյացութիւնը պատճառ և տոպ կամ գաղափար չէ իրաց, ինչպէս որ աստուածային էութիւնն է. այլ աստուածային անուանքներով և բնական իրաց գաղափարներով և կամ գոյաւոր եղածներով կը ճանչնան. ինչպէս մեր մտացը մէջ բնաւորական եղած է՝ առաջին սկզբանց ունակութիւնը։ Ասինք գոյաւոր եղածներով. քանզի հրեշտակները ներգործաբար գոյացեալները գիտեն, և ոչ կարելիները, որ տակաւին եղած չեն, այլ կարելի է ըսելին։

Հ. ԿԷ. Հրեշտակները կրնա՞ն բնապէս ապագայ ըլլալիքները գիտնալ։

Պ. Ապագայ բաներ երկու կերպով կիմացվի. մէկը հարկիւ ապագայ կըսվի, քանզի իրեն պատճառներուն մէջ փակեալ է. ինչպէս բանմը թէ՝ եկած տարի որսվիսաւ այս ինչ մոլորակը այս ինչ շրջանին մէջ պիտի պատահի, վասն որոյ հարկաւ կամ անձրև պիտի գայ, կամ շորու թիւն պիտի ըլլայ. այսպիսի ապագաները հրեշտակները գիտեն։ Դէ միւսը ազատ ապագայ կըսվի, որ այսպիսի ապագայն հրեշտակները չեն գիտեր, այլ իրը կարծեօք. քանզի ազատ ապագաները հարկաւորապէս հաղորդութիւն չունին երկրորդ պատճառաց հետ, այլ աստուծոյ ազատ վճռոյն և մարդկային կամաց ընտրութեանը կապված են. ուստի այսպիսի ապագաներուն նախագիտութիւնը աստուծոյ յատուկ է. այս պատճառաւ աստուած կրսէ կուռքերուն Եսայի մարգարէին բերանովը. «Պատմեցէք մեզ, որ ինչ ի վախճանին լինիցի՝ և գիտացուք թէ աստուած իցէք»։ (Եսայի. ԳԼ. խա)։ Նմա յաստուածաբանութեան Հաբերիմի 92 երես։ Արդ՝ ազատ ապագայ բաներս օրինակաւ մը և ս իմացուցնեմ։

Բանմը թէ եկած տարի յանկարծ աղքատ մը պիտի հարստանայ շատ ինչք (մալ) գտնալով ճամբորդութիւն ըրած տեղը. այդ ինչքը յիրաւի այն աղքատը պիտի գտնայ, թէ որ աստուած կամի, և ինքն ալ այն ճամբորդութիւնը ընէ նէ, ապա թէ ոչ՝ չի գտնար և չի հարստանար. արդ՝

ՈՎ գիտէ՝ աստուած պիտի կամենայ, թէ չի պիտի կամենայ, աղքատը այն ճամբորդու թիւնը ընել կը կամենայ, թէ չի կամենար. քանզի միայն աստուծոյ կամքովը չըլլար, այլ աղքատն ալ պիտի կամք ընէ։ Եւ որ այս խօսքս ծանր երևցաւ քեզ, ահա վկայութիւն. «Կամքն աստուծոյ... Եթէ զկամս մարդոյն հաղորդ իւր ուշ ունիցի, ուշինչ կարէ ներգործել յարժանաւորացն». (Մէկն. Գ-Ը)։

Ի՞նչ ազատ ազգականները այսպէս են, որոնք հրեշտակները չեն ճանաչէր և չեն գիտէր. ուստի ենենգաւոր կախարդաց թէ գիրքերուն և թէ բերանին խօսքին լսելու չէ. ըստածնին ըլլայ ալ նէ՝ պատահմամբ է. քանզի լուսեղէն հրեշտակին չի գիտցածը՝ սատանան ինչ չի գիտէր։

Հ. ԿԸ. Հրեշտակները մարդոյս սրտին մէջի խորհուրդը գիտե՞ն։

Պ. Եթէ աստուած՝ որ խորհրդոց քննիչն է, չի յայտնէ, ստուգապէս չեն կրնար գիտնալ. կամ այն մարդը իւր սրտին խորհուրդը չի յայտնէ նէ, հրեշտակները չեն կրնար գիտնալ։ Ի՞նչ վկայութիւն քեզ. «Դու միայն գիտես զսիրտս որդւոց մարդկան». (Գ, Թագ. Ը. 39)։

Հ. ԿԹ. Հրեշտակները մարդուն սրտին խորհուրդը ինչո՞ւ չեն գիտէր։

Պ. Այո՝ աստուծոյ յառաջաստեղծութիւնը կը յանձնեմք, որ սրտից մէջի ծածուկ խորհուրդները՝ իւր քննութիւնը և դատաստանին ձգեցէ։

Հ. Հ. Հրեշտակաց խօսակցութիւնը՝ մէկզմէկու հետ ի՞նչ կերպ է։

Պ. Երբ հրեշտակ մը կամք կընէ՝ որ իւր սրտին խորհուրդը ուրիշ հրեշտակ մը իմանայ, այն ատեն իւր միտքը կը շոկէ դէպի այն միւս հրեշտակին, և այն ալ կիմանայ անոր սրտին խորհուրդը. ահա այս կերպովս է հրեշտակաց խօսակցութիւնը մէկզմէկու հետ։ Որպէս մենք ալ որ աղօթքի կը կայնիմք, այս ձևովս աստուծոյ և հրեշտակաց հետ կը խօսիմք։

Հ. ՀԱ. Հրեշտակները ի՞նչպէս կուտեն։

Պ. Հրեշտակաց ուտելը՝ ուտուկացուցիչ հոգին չէ, այլ իրենց միաւորեալ օդերէն մարմինն՝ որ իրենք կառնեն։ Որդ՝ կը ձգեն կերակուրը իրենց մարմինին մէջ, և վաղվաղակի օդի կը փոխարկեն. և ապա արեգակը՝ երկրային խառնաւութիւնը կը դարձուցանէ, և գոլորշեաց նման կայրէ և կը ցրուէ. այսպէս կըսէ Կուռնելիոս։

Հ. ՀԲ. Հրեշտակաց գոյացական խմաստութիւնը՝ արդեօք օր ըստ օրէ կաւելանայ։

Պ. Ա՛յլ. քանզի գիտութիւնը պարզև մի է երանելոյ հոգւոց, թէ որ նոր ի նորոյ օր ըստ օրէ առաւելանոյին այն գիտութեամբ, կատարեալ պէս երանելոյ չէին ըլլար. քանզի օր ըստ օրէ յառաջ գնալը՝ ճանապարհորդին կը լլայ, որ առկաւին յառացած տեղը հասած չէ։ Ասոյց հրեշտակները այս կերպը չեն, այլ կատարեալ պէս արժանացեալ են իրենց ցանկացեալ երանութիւնը, անոր համար օր ըստ օրէ աճելու թիւն չունին։ Ինչպէս ըսեմք թէ կրակը իւր ջերմութիւն առնելու առաջնոյն հասնելու ըլլայ, չի կրնար այլ եւս տաքնալ, տակայն որքան աւելի նիւթ ունենայ այրման, այնքան առաւել կը տարածի։

Ինչպէս և հրեշտակները՝ իրենց գոյացական գիտութեամբը չեն կրնար աճիլ յինքեանս, և թէ ոչ պատահմամբ նորագոյն լուսաւորութեանց, որ առառած կը յայտնէ իրենց ապագայ իրողութեանց վերաբերեալ՝ կամ գերբնական խորհրդոց վերայով բան մը, որ իրենց բնութիւն բնական զօրութեամբը չեն կրնար իմանալ. քանզի շնորհաց խորհուրդը՝ միայն աստուծոյ կամացը կապված է, և հրեշտակներն չի գիտցվիր բնական ճանաչմամբ, այլ բնազանցական և երանական ճանաչմամբ ի բաներ աստուծոյ։

Հ. ԷԳ. Ի՞նչպէս օր հրեշտակները առ ղեանակ էին քրիստոսի մարդեղութիւնը։

Պ. Ի՞նչպէս պատասխան կուտայ առաքն Դիւ-

ունեափոս Արիսապագացին. «Տեսանեմք՝ զի և առաջուածային խորհրդոցն յիսուսի մարդեղութիւնն՝ նախ հրեշտակք եղեն խորհրդազգածք, և ապա ի ձեռն նոցա ի մեզ էանց նոցա գիտութիւնն հանճարոյ»։ Այսպէս ըստ լոմ՝ յայտնի կը լայ որ ան զեակ էին։

Հ. ՀԴ. Թէ որ ան զեակ էին, ինչու՞ համար քրիստոսի համբարձման ժամանակը՝ անգիտաբար կը հարցընէին՝ «Դուք այս ո՞վ է որ գիմեալ գայ յԵդովմայ, կարմրութիւն ձորձոց նորոց ի բոսորայ»։

Պ. Թէպէտ այդ խօսքիդ վրայ կերպ կերպ խորհրդական մեկնութիւններ կուտան սրբազան մեկնիչք. բայց մեք հարցմունքիդ կատարեալ պատասխանը տալ նայիմք։

Քրիստոսի մարդեղութիւնը աստուած նախատեսմանեալ էր ի յաւիտենից, և ժամանակ ժամանակ հրեշտակաց միջնորդութեամբ վարագուրաւ մը կը ցուցուներ մարգարէներուն մատը. բայց քրիստոսի մարդեղութիւնը՝ ամենեն հանգամանքներով, կամ թէ քրիստոսի գերբնական գործքերուն պատճառը ինչ ըլլալը չէին գիտեր. վասն որոյ քրիստոսի մարմնանալէն ետքը՝ եկեղեցւոյ գերբնական խորհուրդներէն շատ միայն յայտնեցան հրեշտակաց, և հրեշտակներով յայտնեցաւ գլխաւորացն եկեղեցւոյ։

Այսպէս քեզ օրինակ. Աստուած ըստ ազամայ

և և այն համար, թէ «Եղիցին երկոքեան ՝ի մարմին մի», և Քրիստոս մեկնեց այդ խօսքը՝ այսպէս ասելով. «Արդ՝ զոր աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ»։ Այս անբաժանելի զուգութիւնը՝ բաց որում օրինակ քրիստոսի միաւորութիւնը աստուծ եկեղեցւոյ հետ, հրեշտակաց հիշ մեկը չէր գիտէր։ Այս քրիստոս յերկինս կը համբառնայր, որ լուսաւորութիւն տայ հրեշտակաց, ՝ի ձեռն նոցա ուսոյց և առաքելոց. քանզի հրեշտակներդ առաքելոց ասին՝ թէ «Այս յիսուս՝ որ վերացաւ ՝ի ձենջ, այնպէս եկեսցէ, զոր օրինակ տեսիք զդա երթալ յերկինս»։ Հայր եկեղեցւոյ գլուխն՝ այսինքն քրիստոսէ ստորեցան հրեշտակներդ բազմապատիկ խնամատարութիւն։ Որովհետև բաց աստուածաբանից՝ գիտէին հրեշտակներդ քրիստոսի մարդեղութիւնը, այլ ոչ ամենեն հանգամանքներով՝ բաց թերեալ վկայութիւնք, թէ՝ «Իսկ այս ո՞վ է՝ որ գիտէալ գայ յԵդովմայ»։

Է. Հե. Հրեշտակաց երգաբանութիւնը արդեօք ի՞նչ է, կամ ի՞նչ ասմունք կրսեն։

Պ. Սուրբ Ներսէս շնորհալին ինն դասուցն՝ յասուկ յասուկ օրհնութիւն կը սահմանէ այսպէս։

Առաջին դասք Ամենայնոց կրսեն. «Ամենայն քո՝ ամենայն յաւիտեանս յաւիտենից». (Սաղմոս. խդ. 7)։

Երկրորդ դասք Քերովբէից կրսեն. «Օրհնեալ են փառք տեառն ՝ի տեղւոջէ իւրմէ»։

(Եբրայ. գ. 12)։

Երրորդ դասք Սերովբէից կրանն. «Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառաւք նորա»։ (Եսայի. զ. 5)։

Չորրորդ դասք Տէրութեանց կրանն. «Երքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից, և տէրութիւն քո յազգէ ազգ»։ (Սաղմոս. ճիգ. 13)։

Հինգերորդ դասք Զօրութեանց կրանն. «Տէր հզօր զօրութեամբ իւրով տէր կարող ի պատերազմի»։ (Սաղմոս. իդ. 8)։

Վեցերորդ դասք Իշխանութեանց կրանն. «Տացին քեզ հեթանոսք ի ժառանգութիւն և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի»։ (Սաղմոս. բ. 7)։

Յոթներորդ դասք Պետութեանց կրանն. «Դու ես քահանայապետ յաւիտենից՝ և տէր ընդ աջմէ քումմէ»։ (Սաղմոս. ճիթ. 4)։

Ութերորդ դասք Հրեշտակապետաց կրանն. «Ողորմեա՛ դու ստեղծեր, մի կորուսաներ. ըզգործս ձեռաց քոց մի անտես առներ»։ (Յոբ. ժդ. 15. և Սաղմոս. ճլէ. 8)։

Իններորդ դասք Հրեշտակաց կրանն, որք և ասացին ի ծննդեան ախտն. «Փառք ի բարձունս աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն՝ ի մարդիկ հաճութիւն»։ (Ղուկաս. բ. 14)։

Այդ՝ այժմ ասել կը կամիս թէ, արդեօք յաստուածկէ ամէն մէկ դասուն օրհնաբանուն աստուածը։ Այո թէ արդեօք միշտ այդ օրհնութիւն

ՆԵՐԸ կըսեն, թէ ուրիշ բան։

Յառաջին հարցմանդ այսպէս կը պատասխանեմ՝ Շնորհալիին առնելով, թէպէտ այս երգերը յաւուրկ է ամենն մէկ գաւուց, բայց փոխանցաբար ամենեն ալ կերգեն. քանզի թէ որ երկրպագան փառաբանութիւնը միայն Սերովբէից յատկացեալ ըլլար՝ ինչպէս որ բոլոր, և իսկոյնդ ալ միշտ աւուրց ամենայն քոյնն են՝ և ուղղ չեն խրկըվիր. Եապէ մարգարէն ի՞նչպէս կը լսէր այդ փառաբանութիւնը ուրիշ Հրեշտակներէ. ապա մերի բուած փառաբանութիւններնիս յաւուրկ է իւրաքանչիւր գաւուց, բայց փոխանցաբար ամենեն ալ կերգեն։

Ա՞խ հարցմանդ այսպէս կը պատասխանեմ՝ Ղէնցի Եապեայ Եղեկիէլ, (գ, 12), մեկնութիւնէն առվելով, որ չըլլայ՝ թէ մէկը ապիսաբար կարծէ, թէ ամենամէկ գաւուն օրհնաբանութիւնը միշտ նոյն է. և այսպէս մեր օրինակ մը կուտայ՝ ըսելով. Երբ ուրախութիւն խնճոյքի մը մէջ, մէկ կամ քանի մը քնարահար գանվին, յայտնի է՝ որ միշտ մէկ եղանակաւ չեն երգեր. ապա Հրեշտակները՝ որ առաւել գերազոյն են քան զմարդիկ, միշտ մէկ կերպ օրհներգութիւն արդեօք ունենա՞ն։ Պանզի Հրեշտակները՝ որքան բարձր են քան զմեզ ուղղութ, այնքան և գերազանցեն խմաստութեամբ. և որքան առաւել մեր են քան զմեզ աստուածային լուսոյն, այնքան առաւել քան զմեզ կը սիրեն՝ կը պաշտեն՝ կը գրաւեն՝ և բազմատեսակ օրհնու-

թեամբ կը գովեն՝ և կը փառաւորեն։

Ա՛յդ՝ թէ որ ըսես, հապա ինչո՞ւ Յովհաննէս աւետարանիչ յայտնութեան մէջ կըսէ թէ՝ «Զորք կենդանիքն՝ ի տուէ և՝ ի գիշերի ո՛չ հանգչէին ասելոյ, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ ամէն ստեղծեալ՝ որ է՝ և որ է՝ և որ գալոց է»։

Ա՛յդ չորս կենդանեացս օրհնութիւնը միայն այդ էր, և միշտ այդ կըսէին. և պէտք էր Սերովբէից պէս ըսել, «Սուրբ, սուրբ, սուրբ, ամէն զօրութեանց, լի է ամենայն երկիր փառաւք նորա»։ Ուրեմն ըստ նախատեսելոյ վարդապետին, և մեք կըսենք թէ՝ Եռայի մարգարէն ըստ պիտոյից ժամանակին այնպէս ըսեց, և խմացաւ, քանզի հոգին սուրբ այնպէս խմացոյց։

Իսկ Յովհաննէս աւետարանիչ՝ որովհետև առաջին գաղտնիքն էաքը՝ երկրորդ գալուստն ալ նկատելով՝ կը տեսնար նոյն տեսիլը, այն չորս կենդանիներն աւելի՛ օր խմացաւ. ապա համանալ արժանի է, թէ խորհրդանշիւր ժամանակ նարկ եղած են չորսի՝ երգ արքաներու թեան ասմունք երևեցաւ, և ո՛չ եթէ միապէս միշտ մէկ բան մը կըսեն։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԻՆԴԻՐՈՑ

ՄԱՍՆ · Բ

ԵԿԵՂԵՑԻԱՅԻ ԵՒՍԻՈՅ ՍՈՒՐԲԱՑ ՈՐՍՆՑ

ՀԱՐՑՈՒՄՆ ԱՌՈՒՔԻՆ

Ոչ ոչկաս առ Եւսեբիոսիչ՝ Յովհաննէս Մկրտչի թլփատութեանը համար երբ կը գրէ, կըսէ թէ՝ «Եւ եղև յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել զմանուկն, և կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զքարիայայ» · (Ղ–Դ · ա · 59)։ Ինչպէս քրիստոսի թլփատութեանը համար որ կը գրէ, չըսեր եկին թլփատել զնա, որով թլփատութիւն ընողմը յայտնի չըլլար · միայն այսքան կըսէ, «Իբրև լցան աւուրք ութ թլփատել զնա, և կոչեցաւ անուն նորա Յիսուս» · (Ղ–Դ · բ · 21)։ Ա՛յդ՝ յո՞ ուսկի՞ց թլփատվեցաւ, որ առ Եւսեբիոսիչը չի յիշեր։

Վ արդարեալք եկեղեցւոյ յիսուսը թլփատողք՝ իւր մայրն էր կրսէն. որով սիրամայրն առաւաւածածնէ սիրոյն գերազանցութիւնը կերևայ մեր վրայ. որ իւր կուսական արիւնը առաւած էր որդւոյն, թափեց մեր սիրոյն համար։ Ա՛յս խօսքքս՝ մոայց դէմ կամ տարակուսելի չիմացվի, քանզի Սեփորայ Մովսէսի կիներն ալ իւր որդիքը թլփատեց. (ԵԼԽ. գ. 25)։ Ա՛յդ՝ բան առաւածաբան վարդապետաց՝ առաւել զարմանալուն համար աւետարանիչքը՝ այս բանը չի յայտնեց։

Հ. Բ. Թլփատութ քառասնօրեայ գաղտնեան ասնին ինչն։ Տեառն ընդ առաջ կրսին։

Պ. Սրսիմեան Սիմէօն ծերունին և Աննա մարգարէն, զիմաւորեցին քրիստոսը՝ երբ տաճարը ընծայվիլ կը բերէին. այդ զիմաւորելուն պատճառաւը ըսվեցաւ այն ասնին՝ Տեառն ընդ առաջ։

Հ. Գ. Ա՛յն հարսանիքը՝ որ 'ի Կանա Գալիլեայ եղաւ, ուր առաջ քրիստոս և մարիամ առաւածածին գացին. և քրիստոս իւր մօրը միջնորդութեամբը՝ ջուրը փոխարկեց գինի, այն հարսանիքին փեսայն ո՞վ էր։

Պ. Յակոբ առաւածաբանը կիւրեղէց քարոզ գրքին մէջ կը հաստատէ Շմաւոն ըլլալը,

որ և Սիմոն Կանանացի կըսվի. այսպէս կը վկայեն սուրբն Իգնատիոս և սուրբն Եպիփանիոս։

Հ. Դ. Քրիստոս իւր պայծառակերպութեան օրը իրեն հետ ի զօր աշակերտանելու ինչու կը պատուիրէ, որ մարդու չի պատրցնեն տեսածնին, մինչև որ որդի մարդոյ ի մեռելոց յարութիւն չառնէ։

Գ. Շատ պատճառներ ցոյց կուտայ եռամեծն Գրիգոր՝ քրիստոսի այդ պատուէրին, որոնց գլխաւորները միայն ընտրեցինք մեք։

Ա. Որ՝ պատիւներին, որոնք յարութեան ժամանակը եղան, յարմար գան և ապացոյց ըլլան առաքելոց պատմութեանը, որ երկիր շարժեցաւ, վէմք պատռեցան, լուսաւորք խռաբեցան, և այլն։

Բ. Երկրորդ՝ երբ առաքեալները զօրանան ի Հոգւոյն սրբոյ հրաշքներ գործելով, այն առնելը քրիստոսի համար բաներին կրնան հաստատել։

Գ. Երրորդ՝ հրեշտակին քարոզած ժամանակը քրիստոսի յարութիւնը, հաւատան՝ թէ այն որ յարոյց ինքը գինքը, կարող էր և Մովսէսը յարուցանել ի մեռելոց։

Դ. Չորրորդ՝ երբ երկինքը համբառնայ, այն ժամանակը հաւատան՝ թէ կարող էր Եղիա բերել տալ երկինքէն, և լուսափայլ ամպերով երևնալ, և մինչև ամպով գալ, և ընտրեալները ամպովք յերկինս յարիշտակել։

Հ. Ե. Արդեաք քրիստոս չէր մարմնանայր, եթէ Ադամ չի մեղանչէր։

Պ. Քրիստոսի գալստեան պատճառը՝ երկինքէն թափած հրեշտակներուն տեղը լցուցնելու համար էր. ինչպէս առաջ Աստուածանին մէջի կորուսեալ ոչխարին և կորուսեալ դրամին օրինակը յայտնի կընէ։ Արկրորդ՝ քրիստոսի մարդեղութիւնը Ադամայ մեղքին համար էր՝ որ չէր կրնար վճարել, որովհետև աստուծոյ անհուն բարութիւնը դէմ մեղանչէր էր։ Եւ կորուսեալ կեանքը վերստին ստանալու պատճառաւ մարդացաւ. ուստի ըսաւ քր. (Յովհան. ժ. 10)։

Եւ քրիստոսի մարդեղութիւնը մեզաց բարձման համար էր, անոր համար ըսաւ Յովհաննէս Մկրտիչ, թէ՝ «Ահա գառն աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի». (Յովհ. ա. 29)։ Եւ թէ՝ «Եկն որդի մարդոյ՝ խնդրել և կեցուցանել զկորուսեալն». (Մատթէոս. ժբ. 11)։ Եւ Ի հաւատամքն այսպէս ասի, «Որ վասն մարդոյ փրկութեան իջեալ Ի յերկնից՝ մարմնացաւ»։ Եւ այս վկայութիւնից իմանալի նայելով՝ թէ որ Ադամ չի մեղանչէր, քրիստոս չէր մարմնանայր։

Հ. Զ. Եկեղեցւոյ ասածնին երբ պարգևեցան Ի քրիստոսէ։

Պ. Սրբազան վարդապետք եկեղեցւոյ այսպէս կը վկայեն։ Ինքնիրացուցութիւնն ասածնին արվեալ քրիստոս, երբ Եսայի մարգարէին գիրքը

ընթերցաւ. (Ղ-Դ. գ. 17)։ Կիսաապրկաւագութեան, երբ չուանեաց խարազանաւ ասնարկեն գուրս հանեց առուտուր ընօղները. (Յ-Ղ. բ. 15)։ Ապրկաւագութեան, երբ լուաց աշակերտաց ոտքը. (Յ-Ղ. ժգ. 5)։ Հանանայութեան, իւր մարմինը և արիւնը բաշխելով ի սուրբ վերնատունն. (Մ-Փ-Ղ-Ա. իզ. 26)։ Եպիսկոպոսութեան, երբ փշեաց յառաքեալսն. (Յ-Ղ. ի. 22)։ Կամոդիկոսութեան, երբ ձեռք դրաւ առաքելոց վրայ ի համբառնալն. (Ղ-Դ-Ա. իզ. 49)։

Հ. Է. Ո՞ր օրինաց խորհուրդները ինչու՞ համար ամենեքեան միասին չի կարդեց քրիստոս։

Պ. Ասաքեալը կըսէ, թէ օրէնքն յաստուծոյ կարգեալ են. այլ յարմար կարգը այս է, որ պատճառը իրմէ պատճառեալ գործէն յառաջ ըլլայ. արդ՝ քրիստոսի շարչարանքը նոր օրինաց խորհրդոց պատճառն է, քանզի այն շարչարանքով զօրութիւն պիտի ըլլայ խորհրդոց. ուրեմն պէտք էր քրիստոսի շարչարանացը՝ նոր օրինաց խորհուրդներուն կարգըմէ էն յառաջ ըլլալ։

Հ. Ը. Ո՞ր օրինաց խորհուրդները քրիստոսի շարչարանքէն զօրութիւն ունին, ինչպէս որ ասիր, այլ քրիստոսի շարչարանքը սանձօրութիւն մի էր. և այսպիսի սանձօրութեան նշան չի տեսաւ պատկին խորհուրդին մէջ, մանաւանդ անոր ներհականը՝ որ է փառիկութիւն և հեշտութիւն.

տարա՝ ինչպէ՞ս համար պատկը խորհուրդ կանուանեն։

Պ. Իմէպէս պատկը չի կերպարանէր մարդը Քրիստոսի շարչարանացը բան նմանութիւն պատ-ժոյն, բայց կը կերպարանէ Քրիստոսի շարչարա-նացը բան սիրոյն. ինչպէս կը հրամայէ Պօղոս ա-ռաքեալը. «Ա՛յր սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատուցց վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութիւն աւազանին բանիւ»։ (Եփեսացւոց. Ե. 25)։

Հ. Թ. Այրը Քրիստոս խաչել կը տանէին, խաչն ալ կռնակը շալկեցուցեր էին, ի՞նչ կը նշա-նակէր խաչին շալկելը։

Պ. Հրէից և հեթանոսաց խստասրտութիւնը բաւական չի համարելով խաչել տանելն յառաջ տրված շարչարանքներին, ծանր խաչն ալ կռնակը տրվին։ Խաչողներուն կողմանէ մեծ անողորմու-թիւն էր, բայց խաչեցեալին կողմանէ մեծ խոր-հուրդ և գթութիւն էր. որ խաչը իրեն փառաց ամոռ համարելով՝ ինքն կը տանէր, ինչպէս որ մարգարէն կը վկայէ. «Մանուկ ծնաւ մեզ՝ որ-դի տուաւ մեզ, որոյ իշխանութիւնն՝ ի վերայ ուսոց իւրոց»։ (Եսայի. Թ։ 6)։ Այս ըստ Պօղոսի՝ որ ասէ. Ցանձն էառ զծառայ՝ արհամարհեաց զա-մօթ»։ (Եբրայ. Ժբ. 2)։ Այս ըստ Յովհաննու՝ «Բարձեալ էր ինքնին զխաչափայտն՝ և երթայր՝ ի տեղին»։ (Յով. Ժթ. 18)։ Իր այս խօսքին վրայ այսպէս կըսէ Կուռնելիոս. «Ասորոգեալ լինէին

«վերքն որ ի ձաղանացն, և բացեալք քերանք
«վերացն հոսէին արիւնքն. վասն որոյ առաւել
«նուազիւք արիւնն և զօրութիւնն. ուստի առ-
«եալ յուսոյ նորա վասն տիարութեանն՝ եղիւ
«ի յուսն Սիմանի Կիւրենացւոյն, որպէս զի ըղ-
«յիսուս կենդանի պահեսցէ, առ ի տառաւել-
«լապէս կրել զսանջանսն խաչին։

Հ. Ժ. Բրիատոսի խաչին երկայնութիւնը որքա՞ն էր։

Պ. Լայպէս կը վկայէ Կուռնելիոս, թէ երկայնութիւնը տասն և ութ քիւլէր, և խաչանակը մէն քիւլ։

Հ. ԺԱ. Բրիատոս երբ գժոխքը իջաւ, արդեօք գժոխքին մէջ եղած ամէն հոգիներըը ազատեց մի։

Պ. Գրիգոր աստուածաբանը ազատեցան, և անոնք որ իրենց կենդանութիւնը քրիստոսի մարգարէութիւնը պիտի հաւատային, անոնք ալ ազատեցան։ Լայպէս կը վկայէ սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացին, և Սեւերիանոս Ասիորացին, և Իգնատիոս աստուածազգեացն, և Գրիգոր աստուածաբանն։ Լաւ եկեղեցին մեր յայտնապէս կը քարոզէ ըսելով. «Կենդանոցն հոգւոյն զատեալ զերանս արդարոց»։

Հ. ԺԲ. Լայդ խօսքիդ ոմանք կընդդիմանան այսպէս ըսելով. «Ադամ գլուխ էր ազգի մարդկան. թէ որ գլուխը ազատեցաւ, պէտք է որ անդամներն ալ ազատին»։

Պ. Ադամայ ապաստամբութիւնը շատ հետևանքներ եղան, բայց Ադամայ ապաշխարութիւնը քիչ հետևանք եղաւ, անոր համար ամէնն ալ չազատեցան։ Ահա քեզ վկայութիւն Ի սուրբ Եկեղեցւոյն, «Որ զմահ գերի առեալ՝ մահուամբ զմահ կոխեցեր, արձակելով գերեալս մարդոյ գերէից յանեալս քո հանգիստս»։

Հ. ԺԳ. Լաց ուրբաթ գիշեր տաներնիք մոմ կը վառեն սեղանը. ինչու տաներիկու քը կը մարեն, և մէկը վառ կը մնայ։

Պ. Այն գիշերը առաքեալները միանակ ձգեցին քրիստոսը, և իրենք ցրուեցան, վասն որոյ տաներիկու մոմը կը մարեն, և մէկը կը ձգեն, որով կիմացուի քրիստոսի միանակ մնալը անօրինաց մէջ։ Այս երկրորդական մատուցութեամբ այսպէս կը մեկնեն ոմանք, թէ այն գիշերը առաքելոց բոլորն ալ երկրայութեան մէջ մնացին, բայց միայն սուրբ կոյս Աստուածածինը աներկրայ մնաց, ուստի տաներիկու մոմը կը մարեն, և մէկը վառ կը ձգեն։

Հ. ԺԴ. Քրիստոս հրաման կընէ առաքելոց հաւատացեալները մկրտել յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ինչո՞ւ համար իրենք միայն յանուն Յիսուսի քրիստոսի կը մկրտէին. ինչպէս որ գրված է. (Գործք. Ժ. 48)։

Պ. Յիսուսի քրիստոսի անուամբը մկրտել բաւական է, այն ուր Յիսուսի քրիստոսի անունովը քրիստոսի հաւատքը կիմացվի. և քրիստոս ո՛չ միայն իրեն յատկացեալ քարոզեց նոյն հաւատքը, այլև Հօր և Հոգւոյն սրբոյ. ինչպէս որ Ուրիշ անուններ կրսեմք նէ, անոր ճառագայթը և ջերմութիւնն ալ միասին կիմացվի։

Հ. ԺԵ. Քրիստոսի երեքօրեայ թաղումը արդեօք ամբողջ երեք օր էր։

Պ. Քրիստոսի մահը երեք աւուրց հետ հաղորդութիւն ունէր, որք են՝ ուրբաթ՝ շաբաթ՝ և կիրակի. և ինչպէս որ եթէ մարդոյս մարմնոյն մէկ մասը ակարացած ըլլայ, ամբողջապէս հիւանդ կը համարի. այսպէս և քրիստոսի մահը երեք աւուր հետ հաղորդութիւն ունենալով՝ երեք օրեայ կրսվի։

Սուրբ գրոց սովորութիւնն է՝ որ երբեմն մասամբ բոլորը կիմացուցնէ, և երեք օրը մէկ մէկի հետ հաղորդութիւն ունենալով գիշերի և ցերեկի՝ կրսվին երեք օր. ինչպէս ուրբաթ օրը երրորդ ժամէն մինչև իրիկուն, որ քրիստոս հոգին աւանդեց, և ուրբաթու գիշերը մինչև ա-

բուսակին ծագիլը՝ մէկ օր. արուսակին ծագմանէն՝ որ մէկ մասն կը համարին ուրբաթ գիշերվան, և շաբաթ առաւր ցերեկը՝ երկու օր. կիրակամուտը և իւր առաւօտը՝ երեք օր։

Հ. Ժ. Զ. Լրբ. քրիստոս ասէն մեր Պիղատոսի և քահանայապետաց առաջը կայնէր էր, ինչուան ինքը կը խօսէին, ինքն պատասխան չէր խոսր։

Պ. Ապա՝ պէտք էր Դաւ. իմիմն ըսածին պէս լուռ կենալ մեղաւորաց հակառակութեան ժամանակը, ըստ այնմ՝ «Եղի պահապան բերանոյ իմոյ՝ 'ի հակառակիլ մեղաւորին առաջի իմոյ. (Սաղմ. ղ. 2)։

Լրկրորդ՝ ինքն ըսեր էր, թէ պէտք չէ որ մարգարիտը խոզերուն առջին ձգվի, ըստ այնմ՝ «Մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզացն. (Մատթ. է. 6)։

Լրրորդ՝ քրիստոս գառին նման կարիշնեերուն առջին լուռ կայնէր էր, ինչպէս կըսէ Եսայի. «Իբրև որոջ առաջի կարշի անմատնիչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւրոյ. (Եսայի. ծգ. 7)։

Չորրորդ՝ Դիոնեսիոսի ըսածին պէս, աստուածային խորհրդոց թագնուածները պէտք է ծածկել անհաւատներէն՝ որ ծաղը չընեն, և պարզամիտ եղողներէն՝ որ իրենց կասկածի պատճառ չըլլայ. ուստի շուրջը քրիստոս անհաւատ Պիղատոսին առջին, և յիմարութեան գինովցարբեալ քահանայապետաց առջին՝ իւր թագուն

աստուածութեան զօրութիւնը և խորհուրդը յայտնել, որ չըլլայ թէ ծաղը ընեն՝ կամ գայթակղին։

Ընդ երորդ՝ մարգարէին բերանովը ըսած էր. «Եղէ՛ ես մարդ՝ որ ո՛չ խօսի, և ո՛չ զոն խօսք՝ ի բերան նորա»։ (Սաղ. Լէ. 15)։

Ի Չորրորդ՝ Յովսեփոս այսպէս կըսէ. «Զուր է ճառել զօգտակար իրաց. յորժամ լսողքն ամենեքեան համաձայն միաբանին՝ ի վատթարն կոյս»։ (Բ. Դպ. Գլ. ԺԹ)։ Ի՛նչ քահանայապետները՝ դպիրները՝ և փարիսեցիները ժողովէր էին քրիստոսի վրայ վատթար խորհրդով ոսկանման. վասն որոյ լուռ կենալ կամեցաւ քրիստոս։

Ի՛նգերորդ՝ եթէ քրիստոս անոնց խօսքին պատասխան տայր, մէկ խօսքովմը ինքը զինքը կարդարացընէր՝ և մահուանէն կազատէր, և մեր փրկիչը լուռն գործը անկատար կը մնայր, և հօր աստուծոյ նախատահամանութիւնը որդւոյն միածնի մահուանը վրայով ընդունայն կըլլար։

Է. ԺԷ. Ի՛նչ քրիստոս ոչ թէ մեր մեռած օրը յարութիւն կրնար առնել. ինչո՞ւ համար երեք օրէն ետքը յարութիւն առաւ։

Պ. Ըլլայ թէ հին մէկը երկրայի քրիստոսի ճշմարտապէս մահուանը վրայ. անոր համար երեք օրէն ետքը յարութիւն առաւ։ Ի՛նչ թէ երեք օրէն յարութիւն առնելուն պատճառը այս էր, որ մեզի ցոյց տայ՝ իւր մահուամբը երեք կերպ

մահ խաւարանց, այսինքն մեղաց մահը, մարմնոյ մահը, դժոխոց մահը։

Հ. ԺԸ. Ինչու համար քրիստոս յարութիւնն եւ զքեզ յառաջ կանանց երեւեցաւ։

Պ. Որովհետեւ մահաբեր ձայնը յառաջ կնիկ (Եւայն) յայտնի եղաւ. նոյնպէս պէտք էր որ փրկութիւն առնուին առ կնիկով տարածուէր։

Հ. ԺԹ. Յարութիւնն եւ զքեզ քրիստոս ինչու համար մագդալենացիին կըսէ, «Մի՛ մերձենար յիս» (Յովհան. ի. 17)։

Պ. Լուսամէջն Գրիգոր շատ պատճառներ կուտայ այդ խօսքին, և համառօտ մը խմացուցեմ ձեզ։ Նախ՝ մի՛ մերձենար յիս ըսելով՝ կիմացուցանէ, թէ ան որ կը խնդրեա, հոգին աւելի կուգայ, կը մեկնէ քեզի։ Երկրորդ՝ մարմնով մկրտուալ չէր, անոր համար ըսաւ մի՛ մերձենար. քանզի չի մկրտուելնին կարող չեն քրիստոսի մերձենալ, թէ և իրենեն ալ ըլլան նէ։ Երրորդ՝ կիմացուցանէ, որ միայն էրիկ մարդիկ իշխանութիւն ունին պատարագ մատուցանելու, կանայք համարձակութիւն չունին այս գործոյն։ Չորրորդ՝ քրիստոս Մարիամ Մագդալենացիին ըսաւ, մի՛ մերձենար յիս. որովհետեւ անկատար էր՝ ինչպէս որ Եւայ՝ ի ծառն գիտութիւնգիտարարոյ և չարի. քանզի երբ առ Հայրս երթամ՝ որ

ՀԱԾԼԻ բնութեամբ հայր է. և առ հայր ձեր՝ որ շնորհաց ձեզի հայր է, և առ աստուած մարմնոյ իմոյ և աստուած ձեր՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և նորին աջ կողմը նստեալոյն՝ այն ժամանակը հոգին սուրբ կիջնայ որոտմամբ, և զձեզ կատարեալ կընէ շնորհաց, որով արժան կըլլաս հաղորդութեամբ ինձ մերձենալու՝ մարմնիս և արիւնս ճաշակելով։

Հ. Ի. Խրիստոսի հետ յարութիւն առնող սրբոց մէջ՝ սրբութիւն կանայք ալ կայի՞ն մի։

Պ. Այնպիսին. քանզի Յակոբ աստուածաբան կըսէ, որովհետև մայրն աստուծոյ տակաւին չէր վերափոխեալ, վասն որոյ սրբութիւն կանայք ալ յարութիւն չառին։

Հ. ԻԱ. Ընդհանրապէս Մարիամ աստուածածին ունի սկզբնական մեղք ունէր։

Պ. Այդ հարցմունքդ հաւատոյ մասն չէ, որ ի սուրբ գրոց վկայութիւնմը ցուցցուցնեմ քեզի. միայն աստուածաբանք առաւել հաւատոյ համաձայն համարելով՝ կը վարդապետեն թէ ըստ կզբնական մեղաց չի ծնաւ սուրբ կոյսն Մարիամ։ Այս բացարձակապէս ունէր ալ չեն կրնար ըսել, վասն զի սուրբ գիրքերը լուութեամբ անցեր են. վասն որոյ ողջամիտ քրիստոնէին արժան չէ սուրբ գրոց չի յայտնածը՝ մարդկային խնամութեամբ յայտնել բացատրելով կամ ստորատելով։

Հ. ԻԲ. Լրդարև շատ հաւնեցայ այդ խոչ-
գիդ, բայց աւետարանիշները ինչու համար հիշ-
բան մը չի գրեցին սուրբ կուսին վերափոխմանը
և այս սկզբնական մեղաց վրայ։

Պ. Պարզապէս եկեղեցւոյ կրանն, թէ
պէտք չէ զարմանալ. քանզի բաւական է այն՝
որ աւետարանիշները կրանն՝ յորմէ ծնաւ Յի-
սուս. որ այս խոչգով սուրբ կոյս Աստուածածնի
բոլոր կատարելութիւնները կիմացվի՝ իւր մօրը
արգանդին մէջ յղացած օրէն մինչև վերափոխ-
ման օրը։ Լաւ այս չի գրելոյնին իմացուցանել կու-
զեն՝ թէ սուրբ Կոյսին աշխարհ գալը և աշխար-
հէն ելլալը ուրիշ կերպիւ է՝ և մեր մտաց ըմ-
բռնմանը ներքև չի՛նար, վասն որոյ չի գրեցին
ո՛չ գալը և ո՛չ գնալը։

Հ. ԻԳ. Ինչու՞ համար չի կամեցաւ աստուած,
որ սրբուհի Աստուածածինը առանց ամուսնու-
թեան ծնայ կամ տաճարին մէջ՝ կամ իւր տանը
մէջ, այլ Յովսեփայ հետ ամուսնացեալ ըլլայ։

Պ. Ամուսնութիւն ըսածդ նախ պէտք է ի-
մանալ քեզ, բայց այս տեղ կարգը չէ, այլ սոյն
մատենիս բարոյական մասին մէջ իմա՛ Հարցման
Պատասխանը կարդա՛ որ իմանաս։ Լրդ՝ սուրբ
Կոյսին Յովսեփայ հետ ամուսնութեան պատ-
ճառները կը մատնվին։ 'Ի՛սկ՝ 'ի կողմանէ սրբոյ
Կուսին։ Երկրորդ՝ 'ի կողմանէ քրիստոսի։ Լրբ-
որդ՝ 'ի մեր կողմանէ։

Ի կողմանէ սուրբ Կուսին մատնելոյն երեք պատճառ կայ։ Նախ՝ հին օրինաց մէջ ամէն աղջիկ ամուսնանալու էր, եթէ ոչ՝ անիծից ներքև ընկած կը համարուէր. և որովհետև սուրբ Կուսին չէր վայլէր այս համբաւը, վասն որոյ ամուսնանալ արժան էր, և մնալով իւր դարար կուսութիւնքը՝ պատուղ բերել. ուստի միայն ինքն բանից ցաւ և եղաւ, Օրհնեալ 'ի կանայս։ Երկրորդ՝ որ իրեն արտաքին խնամատար և պահպան ունենայ։ Երրորդ՝ չը լայ քի իւր միածին որդին ծնանելն ետքը առանց հօր, քարկոծուի հին օրինաց վճռով։

Ի կողմանէ քրիստոսի մատնելոյն ալ երեք պատճառ կայ։ Նախ՝ չի կարծուի՝ թէ ապօրինաբար է քրիստոսի ծնունդը, վասն որոյ այսպէս կրէ մեղադիրը. «Ի կուսէ ամուսնացեալ ծնանելով յաւէտ կամեցաւ կարծիս տալ՝ թէ ծնաւ 'ի կնոջէ առանց կուսութեան, քան յոչ ամուսնացեալ ծնանելով՝ կարծիս տալ պոռնկութեան»։ Երկրորդ՝ սովորական կարգաւ յայտնի ըլլայ՝ որ ցեղէ պիտի ծնանի, և պէտք էր որ Հայր ամուսնով մէկը ունենայ, քանզի հօրը ցեղը ցոյց կուտար ազգը, և ոչ եթէ միայն մօրը ցեղը։ Երրորդ՝ մօրմէն զատ արտաքին ուսուցիչ և պաշտպան մը ունենայ, որ և սուրբն Յովսեփոս կրէ. «Իմաստութիւնն աստուծոյ կարգաւորեաց, զի ամուսնացեալ սուրբ Կոյսն. որպէս զի ծնունդն յիւսի ծածկեսցի 'ի սատանայէ»։ Նշանակալ պատճառներքը տես 'ի գիրս Պասկիր առնից։

Հ. Ի՞նչ. Քրիստոս տէրն մեր ինչո՞ւ սրբուհի Կոյսը կին կանուանէ, մայր չըսէր։

Պ. Այդ հարցմանդ Մատթէոսի աւետարանին մեկնիչը՝ թէպէտ շատ պատճառներ կը խօսի, բայց մեզի մեկը միայն այս տեղ գիտնալ բաւական է։ Այսինքն՝ թէ տէրն մեր իրրև զտէր խօսելով իւր մօրը հետ՝ իւր տէրութիւնը և ստուգութիւնը ցոյց տալով կին կանուանէ. և ինքը զինքը որդի կանուանէ մօրը՝ ըստ որում մարդ էր, և ըստ մարդկութեան՝ ի մօրէ ծնեալ էր. բայց ըստ որում ստուգ էր, և ըստ ստուգութեան յաւիտենականաբար՝ ի Հօրէ ծընեալ էր, այդ պատճառաւ իւր մայրը կին կանուանէ, որ ցոյց տայ՝ թէ ինքն է ստեղծող մօր իւրոյ։

Այս մայր է տիրածինն իւր որդւոյն, բայց առաջին պատճառ չէ՝ իւր որդւոյն ծնելութեանը՝ բնական մօր պէս. քանզի մարդկային բնութեան միաւորութիւնը յանձն բանին՝ բնական կարգաւ չէր՝ այլ գերբնական։

Այդ՝ սրբուհի Կոյսը թէպէտ ասոյգ մայր էր քրիստոսի՝ այսինքն բանին մարմնացելոյ, բայց որովհետև բնականաբար մարդ էր, վասն որոյ չէր կրնար գերբնական ներգործութիւն բանին միաւորութեան և մարմնոյն յաւաջ բերել՝ եթէ ոչ իրրև երկրորդական պատճառ. ուստի այս մտօք կին անուանեց քրիստոս իւր մայրը։

Հ. ԻԵ. Որ քր Կուսին հասակը քանի՞ տարուց էր վերափոխման ժամանակը։

Պ. Ի արդարեւ կըսեն՝ թէ յիսուն եւ ութ տարեկան էր վերափոխման ժամանակը. քանզի երբ յղացաւ զքրիստոս տասն եւ չորս տարեկան էր, եւ նորին հետ մնաց երեսուն եւ երեք տարի, եւ քրիստոսի մահուանէն մնաց աշխարհիս վրայ տասն եւ մէկ տարի։

Հ. ԻԶ. Արբազան հաղորդութեան խորհրդոյ հացին վրայ սուրբ պատարագ մատուցանելէն ետքը՝ ինչո՞ւ սուրբ հաց կըսուի։

Պ. Ի՞նչ արբազան խորհուրդը՝ որովհետեւ մասն հաւատոյ է, եւ բոլոր սուրբ եկեղեցիք եւ ուղղափառ սուրբ վարդապետք կը վկայեն, թէ պատարագելէն ետքը հաց եւ գինի չէ, այլ մարմին եւ արիւն յիսուսի քրիստոսի. ինչպէս որ այս խորհուրդը ինքն հաստատեց իւր անսուտ բերանովը, «Թէ հացն՝ զոր ես տայց, մարմին իմ է, զոր ես տայց վասն կենաց աշխարհի». (Յովհ. գ. 52)։ Սակայն հաց որ կըսուի, ո՛չ թէ գոյացապէս հաց է՝ այլ ըստ պատահմանց. պատահմունք բաւական այսպէս իմացիր, որ հացին վրայի գոյնը՝ չափը՝ համը՝ ձեւը՝ պատահմունք կըսուին. եւ հացին հացի դիտութեան տեսակը՝ գոյացութիւն կըսուի։ Ի՞նչ պատահմունքներըն աստուած պահելով, հացին գոյացութիւնը կը փոխէ, որ աստուծոյ ամենակարող զօրութեանը գործն է։

Հ. ԻԷ. Պատարագիչ քահանայն երբ Էական բանը կրկնէ առ բրբ խորհրդոյն վրայ, արդեօք այն ժամանակը կը լայ գոյութիւնս հացին և գինւոյն՝ ի մարմին և յարիւն տեառն, եթէ ժամանակ մը եւոքը, կամ ուրիշ արարողութեան ժամանակ։

Պ. Ասդ հարցմունքիդ վրայ գիտունները շատ վիճաբանութիւններ ըրած են, բայց ձեր անդորրութեանը համար համառօտ մը այսպէս իմացուցնեմ, որ առ բրբ պատարագը սկիզբէն մինչև վերջը քրիստոսի կենդանութեան անօրէնութեանց յիշատակութիւն է, և վերջապէս իւր անարատ մարմինը և պատուական արիւնը ի թողութիւն մեղաց մեզի տալուն խորին խորհուրդն է։

Ասդ՝ պատարագիչ քահանայն առ Հայր աստուած կաղօթէ, և կը յիշատակէ որդւոյն միածնին տալը իւր մարմինը և արիւնը՝ յայտնապէս ըսելով առ բրբ խորհրդոյն Էական բանը, թէ "Առէք կերէք այս է մարմին իմ". և թէ "Արբէք ի սմանէ ամենեքեան՝ այս է արիւն իմ". և առ ի յիշատակ իւր մեզի պատուիրեաց ադելը միշտ կատարել այս խորհուրդը. և ապա գոհութիւն կը մատուցանէ՝ որ մեր անարժանութիւնը այսպիսի անհաս որ խորհուրդ մատուցանելու արժանի ըրիր քու մարդասիրութիւդ. ուստի կը խնդրէ՝ առ բրբ հոգւոյն զօրութեամբ այն առաջի եղեալ հացը և գինին ճշմարտապէս փոխարկել ի մարմին և յարիւն տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։

Լ. Քրդ՝ սուրբ խորհրդոյն էական բանք միանգամ չասվի՝ չի կատարիր խորհուրդը, վասն որոյ նոյն էական բանին սկսեալ ժամանակէն միանգամ՝ ի բանն «փոխարկելով հոգւոյդ քով սրբով», կը լայ գոյափոխութիւն հացին և գինւոյ՝ ի մարմին և յարիւն յիսուսի քրիստոսի։ Լաւ որով հետև՝ ի յաստուած անցեալ և սրբուն ժամանակ չի կայ. այլ զամենայն ներկայաբար գիտէ և ճանաչէ, վասն որոյ այս բաներս մեր մտաց ըմբռնեմանը կոչմանէ է. ուստի հայելով անեղ և անժամանակ աստուծոյ անուանման կարողութիւնը՝ ժամանակ չեւ կրնար հաստատել, թէ այս հիշ ժամանակ կամ այն հիշ ժամանակ կը լայ։

Հ. Ի՞նչ. Լոսի լաղաար մարդկանց հաղորդութիւն տալ արժանի է։

Պ. Լոսի լաղաար բաժդ ներկու կերպ է. ոմանք սկսար միոք ուներնալով՝ սխալար կըսվին, բայց կրնան սորվիլ հաւատոյ խորհուրդը և պատիւը, այսպէս ներքին շարգիրվիր սուրբ հաղորդութիւնը. և ոմանք ամենեին բանականութիւն չունին, միայն կերպարանքով մարդ են, թէ որ ի ծնունդ են այնպէս են, պէտք չէ հաղորդութիւն տալ. բայց եթէ սուրբ հաւատքը ընդունելն ժամանակէ մը ետքը պատահած ըլլայ այդ դիպուածը, պէտք է տալ՝ եթէ փոխելու կամ թերքնելու երկիւղ մը չի կայ նէ։

Հ. ԻԹ. Քանի՞ յատկութիւն պէտք է եկեղեցական խորհրդոյն կատարելութեանը։

Պ. Որբ և ուղղափառ հարցն հետևելով, պէտք է նիւթ՝ առատակ՝ գիտաւորութիւն՝ և օրինադրեալ պաշտօնեայ խորհրդոյն՝ հանդերձ սուրբ հաւատով։

Հ. Լ. Ի՞նչ պիտի ըլլայ նիւթը։

Պ. Նիւթն այն է՝ որ բան իւրաքանչիւր խորհրդոց՝ քրիստոսի կացուցման կերպովը՝ սուրբ եկեղեցին յատկացոյց. ինչպէս մկրտութեան խորհրդոյն՝ ջուրն նիւթ յատկացոյց. պատարագին խորհրդոյն՝ հացն և գինին, և այլն։

Հ. ԼԱ. Տեսակը ի՞նչ է։

Պ. Տեսակը խօսքին ձևն է, որ 'ի քրիստոսէ կացուցաւ. ինչպէս սուրբ պատարագին բանին ձևն է, «Առէք կերէք այս է մարմին իմ. և արբէք 'ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ»։ Այսպէս է և միւս խորհուրդներուն։

Հ. ԼԲ. Գիտաւորութիւնը ի՞նչ պիտի ըլլայ։

Պ. Ասածելու կամքն ունենալ զայն առնելոյ, զոր առնէ եկեղեցին։

Հ. ԼԳ. Հերետիկոս քահանային ըրած պատարագը արդեօք ընդունելի կըլլայ։

Պ. Թէ որ քահանայն Արիոսի հետեւող է ընդունելի չէ իւր պատարագը, քանզի Արիոս պատարագված քրիստոսի աստուածութիւնը ուրացաւ։ Թէ որ Եւնոմիոսի հերձուածոյն հետեւող է՝ այն ալ ընդունելի չէ, քանզի Եւնոմիոս հոգւոյն սրբոյ աստուածութիւնը ուրացաւ՝ որ կատարելագործողն է ամէն խորհրդոց։ Թէ որ Ապողինարի հերձուածոյն հետեւող է՝ և ս ընդունելի չէ, քանզի Ապողինար՝ քրիստոսի բանական հոգին ուրացաւ։ Այսպէս իմացիր և ուրիշ հերձապետաց հետեւող քահանայից պատարագը, որոնք այս հերձուածողութեանց նման հերձուածողութիւն կունենան։

Հ. ԼԴ. Մեղաւոր վարդապետ ոմանք կըսեն, թէ խորհուրդը կատարողին վրայ՝ եթէ հաւատք և սրբութիւն շնորհք չըլլայ նէ՝ հոգ չէ. քանզի ամէն մարդ կրնայ խորհուրդ կատարել, թէ հերձուածող ըլլայ՝ թէ անհաւատ՝ թէ չար՝ թէ բարի, միայն յաւուրկ կամ հաւարակ գիտաւորութիւն ունենայ՝ այնպէս ընել, ինչպէս որ կընէ եկեղեցին։

Պ. Չար պաշտօնեաքդ խորհուրդ կատարելը բացարձակապէս չարդիւրիր. քանզի կըսուի թէ ախտաւոր բժիշկն ալ երբեմն կրնայ հիւանդ բժշկել։ Այլ անհաւատը՝ որ սուրբ երբոր-

գութեան հաւատոյն ծանօթութիւն չունի, և միայնութեան խորհրդոյն գունդը սուրբ եկեղեցին չէ մտեր, կարող չեմ ասել թէ կրնար խորհուրդ կատարել. քանզի սուրբն Կիպրիանոս կըսէ թէ անհաւատից կատարած խորհուրդը խորհուրդ չէ, այլ ծաղրածութիւն խորհրդոյ։

Հ. ԼԵ. Ուրացող քահանային կատարած խորհուրդը ի՞նչպէս է։

Պ. Քահանայական կարգին կնիքը անջնջելի կը մնայ ուրացող քահանային վրայ. հարկ եղած ժամանակը կրնայ կարգին զօրութեամբը խորհուրդ կատարել. բայց շնորհք չի կրնար բերել իւր գործած գործէն։

Հ. ԼԶ. Ժամարար քահանայն երբ սուրբ հացը կը բաժանէ, քրիստոսի մարմինն ալ բերկեալ կիմացվի մի։

Պ. Յակոբ աստուածաբանն ընդ ամենայն ուղղափառ վարդապետաց կըսէ, թէ «Բերկմամբ նշխարին՝ ոչ բերկանի, ոչ կրէ, և ոչ ցաւի մարմնին քրիստոսի. որպէս բերկմամբ հայելեւոյն՝ ոչ բերկանի ծագեալ լոյսն 'ի վերայ նորա»։

Հ. ԼԷ. Դրոշմին խորհուրդը հնարք է որ միւսանգամ ըլլայ։

Պ. Ա՛չ. քանզի աստուածաբանք կըսեն, թէ Աստուծմ՛ տուեալ լինի հնոյք, ո՛չ է կարելի կըրկնել. և արդ՝ յերիս խորհուրդս տուեալ լինի հնոյք, այսինքն՝ ի խորհուրդ մկրտութեան, դրոշմին, և կարգին. վասն որոյ ո՛չ կարեն կրկնիլ։

Հ. ԼԸ. Քահանայ մը եթէ միայն էական բանը ըսէ հացին և գինիին վրայ՝ ի խորհուրդ սուրբ պատարագին, և մուս աղօթքները չըսէ. արդեօք այն խորհուրդը կը կատարի։

Պ. Կը կատարի կըսեն աստուածաբանք. բայց այնպիսի քահանայն մահացու մեղք կը մեղանչէ։

Հ. ԼԹ. Եւ որ նեղ ժամանակ մը հարկ ըլլայ, հնարաւոր է որ այն գործը առանց մեզաց ըլլայ։

Պ. Ոչ արդարապէս չէ՛ կըսեն. քանզի հարկաւորութեան ժամանակ առանց մեզաց միայն մկրտութիւնը կըլլայ էական բանիւ, բայց պատարագին խորհուրդը չըլլար։

Հ. Խ. Ի խորհուրդ սուրբ պատարագին՝ կը հաստատեմք, որ, սրանչելեօք հացին և գինւոյն պատահմունքը կը մնայ, այսինքն գոյնը՝ համը՝ չափը՝ և այլն. բայց հացին և գինւոյն գոյացութիւնը չի մնար. այս խորհրդոյն բնականաբար օրինակ մը կրնաս տալ, որ խելքս հասնի։

Պ. Խմաստասիրական ընդհանուր կանոն է, որ սկզբնական պատճառը երկրորդ պատճառէն աւելի ներգործութիւն ունի պատճառեալ իրին վրայ։ Այսոր նշանը այն է որ՝ երբ երկրորդ պատճառը իւր գործութիւնը կը վերցուցնէ իրմէ պատճառեալէն, սկզբնական պատճառը ամբողջ կը պահէ նոյն իրը. ինչպէս ծնած մարդուն երկրորդ պատճառը իւր ծնողն է, և առաջին սկզբնական պատճառ ծնողեանն աստուած և երկնից լուսաւորաց գործութիւնքն են. և երբ կը վերցուի երկրորդ պատճառը՝ որ է ծնողն, պատճառեալը՝ այսինքն ծնեալ մարդը չի ապականիր, քանզի առաջին սկզբնական պատճառէն ևս կառնէ իւր գործութիւնը, և անով կը պահուի։

Այսպէս իմացիր և քու հարցմունքիդ պատասխանը. պատահմունք բաւական պատճառեալ բան մի է, և իրեն երկրորդ պատճառը գոյացութիւնն է. բայց սկզբնական պատճառը աստուած է. ուրեմն կրնայ աստուած պահել պատճառեալ իրը՝ որ է պատահումն, երբ երկրորդ պատճառը կը վերցուի՝ որ է գոյացութիւնն. ուստի առանց ամենայն կարծեաց կրնայ, թէ կարող է աստուած պահել զամենայն պատահմունս առանց ենթակայի, այսինքն գոյացութեան։

Հ. Խնդ. Թէ որ հացին և գինիին պատահմունքները կը մնան, և գոյացութիւնները կը վերցուին, կերևայ թէ առ աչք կամ առուերի

նման բան մը կը ձևանայ Հշմարիտ խորհուրդը. քանզի Աբրահամ կըսէ, «Մեծ մասն գիտէ ոչ մեզ զգինին՝ պատահմունքն ընձեռնեն». ապա եղաւ որ առանց գոյացութեան պատահմունք ցոյց տալ, խաբէութիւն չէ՞ մի։

Գ. Արդեաւ ոչ է՞ չէ՞. քանզի եթէ գոյացութիւնը վերցուի, հարկ է որ պատահմունք ները մնան. որուն համար աստուածաբանք շատ պատճառներ կը խօսին, որոց գլխաւորը դնեմք այս ոչ։ Այս խորհուրդը հաւատոյ խորհուրդ է, և հաւատք ըստ ծնիս յանձնութիւն է. ինչպէս բանք թէ, ցերեկ ժամանակ մէկը կըսէ քեզի, թէ արեգակը ծագեր է, ոչ անալով՝ հա՛ կըսես, այս հաւատք չէ՞ այլ գիտութիւն. բայց թէ որ մէկը ըսէ, թէ այս արեգական կառավարը՝ ընդհանրագոյն ոչերութիւն մի է ամենն ստեղծուածոց վրայ, թէ որ ասոր հա՛ ըսեմք՝ չի ոչ անալով. այն ժամանակը հաւատք է, որովհետև այն բան ընդհանրագոյն ոչերութիւնը աչքք չեմք ոչ անար։

Արդ՝ եթէ քրիստոսի մարմինը յայտնապէս մը երևար յաւուրկ կերպով մը ոչ դանուին վրայ, այն ժամանակը հաւատք չէր ըսվեր, այլ յայտնապէս պայծառ ոչերութիւն. ուրեմն հարկ է՝ որ քրիստոսի մարմինը՝ հացին պատահմանց ներքև պահվի, որով հաւատք ըսվի։ Դարձեալ՝ այս խորհուրդս խորհուրդ հաւատոյ կըսվի, և հաւատքը ոչ եթէ մեր զգայութիւններէն վերէ, այլ մտքերնուս ալ վերէ. ուստի պէտք է ըլլալ այս խորհրդոյս մէջ այնպիսի բան մը, որ 'ի վերէ

ըլլայ քան զմիտս և զզգայութիւնս. և մարմնոյն քրիստոսի հացին փոքր քանակութեան ներքև ըլլալը ի վեր է քան զմիտս. և որովհետև հացին պատահմանց ներքև՝ որ զգայութիւնը կը տեսնայ, հացի գոյացութիւն չի մնար, այս ալ զգայութենէ վեր է. ուրեմն պատշաճ է՝ որ հացին պատահմունքը առանց ենթակայի ըլլայ։

Այս այս խորհուրդը հոգևոր կերակուր կանուանի. ի՞նչ հոգևորութիւն կը մնար, թէ որ պատահմունքը մարմնաւոր գոյացութի ունենար։

Է. Խբ. Այսպիսակոպոս ձեռնադրութեան ժամանակը աւետարանը ինչո՞ւ համար գլխուն վրայ կը դնեն։

Պ. Ձեռնադրիչին ցոյց տալու համար, որ իւր ամէն պարտմունքին մէջ սուրբ աւետարանին պատիւը գերազանց պահէ. և միշտ իւր մտացը մէջ անոր հրամանները ներկայացրէ, և անով աստուածպաշտութեան վճռոնները տեղեակ ըլլայ, և աւետարանը բոլոր աստուածային գրութիւնքներէն առաւել յարգի ունենայ։ Այս մեկնութիւնը սուրբ Դիոնեսիոս Արիոպագացիէն առվեցանք, որ իւր աստուածաբանութեան մէջ աստուածագործութիւն կանուանէ սուրբ աւետարանը, որովհետև աստուածային գործքը կը ճառէ, և աստուածագործ մարդեղութեանն քրիստոսի խորհուրդը կը յայտնէ։

Հ. ԽԳ. Կարգաւորութիւն հրաման կայ մի ամուսնացելոց հետ կամ օտար կանանց հետ բնակիլը։

Պ. Նիւզելական Նիկիոյ սուրբ ժողովը՝ այսպէս կը հրամայէ։ Արգիլեալ է ամենեքին համաբնակութեան եպիսկոպոսին՝ քահանային՝ սարկաւագին և այլոց ամենեցուն եկեղեցականաց՝ ընդօտար և ներքսամուծեալ կանայս. միայն թէ կամ մայր լցնէ, կամ քոյր, կամ հօրաքոյր։ Այս մերս այնպէս է, քանզի սատանային թուն կերակուրը ընտրեալ մարդիկն են, որ մէկը որսալով՝ շատերն ալ կասկածի մէջ կը ձգէ։

Հ. ԽԴ. Աշխարհական մարդ մը քահանայութեան ինչ ըլլալը չի գիտնալով, և այլոց բրնութեամբ քահանայ ըլլայ, յետոյ իւր անարժանութիւնը գիտնալով, արդեօք կրնայ անպարտ ընել ինքը զինքը ոգիտութեան պատճառաւ։ Այնպէս ձեռնադրողը՝ չի գիտնալով ձեռնադրածին անարժանութիւնը, անպարտ կըլլայ մի։

Պ. Այդ հարցմանդ պատասխանը Յոհան Ոսկեբերանէն առրմէ, որ այսպէս կըսէ. "Ամէն ընտրեցանին, չէ՞ նոցա բաւական յարդարութիւն՝ "ասելն, ոչ ինքնակոչ ինչ եկի, ոչ զգործն ինչ "քննեցի և ոչ առի ետու։ Այնպէս և ոչ ձեռ"նադրողացն երբէք օգնեսցէ ինչ՝ եթէ ասաս"ցէն, թէ մեք զձեռնադրեալսն ոչինչ գիտէ"աք. այլ վասն այնորիկ մեծ և սս ընկեն յանցան"

«քրն, զի զոր ոչն ճանաչէին՝ ի մէջ ընծայե-
«ցին, և որ պաշտպանու թիւն իմն երևի լինել,
«նոցն առաւելու զրամբաստանեն։ Ո՛ւռ յաղա-
զ ըս քահանայու թեան։

Հ. ԽԵ. Յովհաննէս Մկրտչի ըրած մկրտու-
թիւնը՝ արդեօք խորհուրդ կը համարուէր։

Պ. Կատարմամբ իւրաքանչիւր խորհուրդ էր, քանզի
խորհուրդն է նշան սուրբ իրաց. և որովհետև
Յովհաննու մկրտութիւնը՝ քրիստոսի մկրտու-
թեանը նշանակ էր՝ որ է սուրբ իր, ուստի այս
մտօք խորհուրդ էր։ Այլ որովհետև նշանակ
էր շնորհաց՝ և ոչ պատճառ շնորհաց, չբաւիր
կատարեալ խորհուրդ, քանզի հոգի չէր տար. և
որովհետև Յովհաննէս Մկրտչէ մկրտուողներ-
ուն ամենագամ մկրտութեան առաքելներին, ուրեմն
խորհուրդ չէր, քանզի խորհուրդ ըստ դ ամենա
գամ չբլլար։

Հ. Խզ. Արեամբ մկրտիլը, այսինքն նահա-
տակ ելլալը առանց խորհրդական մկրտութեան՝
բաւական կելլայ փրկութեան։

Պ. Այն՝ որ արեամբ մկրտութեան կը մկրտ-
ուի, ամենեն մեղքերէն կարձակուի, և ամենեն պա-
տիժէն կազատի, և արքայութեան արժանաւոր
կելլայ. և այս ոչ եթէ չափահասից միայն յա-
ռուկ է՝ այլև տղայոց. քանզի տղայք՝ թէպէտ

բանականութիւն շունչին անձնիշխան կամաց սո-
փորութեամբ՝ եթէ քրիստոսի անուանը համար
նահատակվին, բայց արդարութեան արժանաւոր
կըլլան. այսպէս կը վկայեն սուրբ գրքերն։

Հ. Խէ. Հնարք է աղջայն մկրտել իւր մօրը
փորէն չի ծնած։

Պ. Ա՛չ. քանզի Պօղոս առաքեալ ի գիրս Կորն-
թացւոց կըսէ. «Բայց ո՛չ նախ հոգեւորն, այլ
շնչաւորն և ապա հոգեւորն». իսկ վերոյիշեալ ծը-
նունդն է հոգեւորական մկրտութիւնն. ապա
պէ՛տք չէ հոգեւոր ծնունդը մարմնաւոր ծնուն-
դէն յառաջ առլ։

Հ. ԽԸ. Թէ որ երկու քահանայ մէկ տեղ
ըլլան, մէկին ձեռքը կոտրած՝ և մէսրը համր,
կրնա՞ն ասոնք երախայ մը մկրտել. իբր թէ մէկը
խորհուրդը ընէ լով, և մէսրը երախայն ջուրը
ընկղմէ լով։

Պ. Ա՛չ. քանզի մկրտութեան խօսքին ձեւէն
յայտնի է, որ մէկ հոգի պիտի ըլլայ խորհուրդը
ըսող՝ և երախայն ջուրը ընկղմող. որ կըսէ՝
Ես մկրտեմ զքեզ. յայտնի է որ՝ մէկ մարդ մի
է ըսողը և գործը կատարողը։ Այսպէս կուսա-
ցանեն սուրբ գրքերն։

Հ. Խթ. Լրդեաք սրբոց բարեխօսութիւնը ընդունելի է առաջի աստուծոյ։

Պ. Որբ Գրիգոր Նարեկացին այսպէս կը հրամայէ, սրբոց բարեխօսութիւնը մեզի միջնորդ ունենալ առաջի աստուծոյ, ինքն աստուած վկայեաց, և ասոյց. ահա Նարեկացիին վկայութիւնը. «Զորոց (այսինքն սրբոց) կերպարանս և յիշատակս անուանցն աղաչել՝ աստուած խակ վարդապետեաց, և նորոք հաճութիւն 'ի մէջ խառնութեան՝ արարչիդ բան լուսաւորեաց»։ Թէ որ ըսել կամիս, աստուած ինքը ասոյց և վկայեաց, թէ սրբոց բարեխօսութիւնը ընդունելի և հաճոյ է իրեն, ահա վկայութիւն. «Յօր ծառայ արասցէ աղօթս վասն ձեր. զի թէ ոչ նմա ակն առեալ էր, և թէ ոչ վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդեաք զձեզ»։ (Յոբ. խբ. 8)։ Լսես աստուած կերևայ Աբրահամ ելքայ, և Սառայի համար կըսէ, «Արձակեա զկինդ յայր իւր, զի այր մարգարէ է, և արասցէ աղօթս վասն քո՝ և կեցցես»։ (Ծննդոց. ի. 7)։

Լսատուածաձնի բարեխօսութիւնը՝ Ջուրը գինիի փոխել սրվաս հարսանիքին մէջ՝ որ 'ի կանայ Գալիլեացւոց. (Յովհ. բ. 9)։ Որբ Սան փանենոսի աղօթքով Սօղոսը՝ Պօղոս եղաւ։ Ի ներջապէս սրբոց բարեխօսութիւնը ընդունելի ըլլալը՝ կախարդ Սիմոնը անգամ գիտցաւ, և ըսաւ առաքելոց, «Աղաչեցէք դուք վասն իմ զտէր»։ (Գործք. ը. 24)։

Հ. Ծ. Հրեշտակները կամ սուրբերը որո՞նց համար կրնան բարեխօսել։

Պ. Հրեշտակները կամ սուրբերը չեն ցաւիր դատապարտեալ մեղաւորաց կորստեանը վրայ. քանզի աստուծոյ կամաց լրումը (այսինքն արդարութեան վճիռը) դատապարտելոց վրայ տեսնելով՝ կը հանգչին և կուրախանան։ Այլ կը՝ նան բարեխօսել ոմանց համար, որոց ապաշխարութիւնը կիսատ մնացեր էր կենդանութեան ժամանակը՝ մահը արագ հասնելով, և նոր մեղք ու զօրնեղութեան կը բարեխօսեն. վերջապէս աստուածասէրս մարդիկ՝ թէ կենդանութեան ժամանակին և թէ յետ մահուան՝ հրեշտակաց և արքաց բարեխօսութիւնը արժանի կը լան։

Հ. ԾԱ. Սուրբ միւռոնը մարմնաւոր ախտերու՝ իրրև դեղ գործածել արժա՞ն է մի։

Պ. Ի գիրս կանոնաց այսպէս գրված է. «Մի՛ իշխեսցէ քահանայն զմիւռոնն 'ի պէտս դեղոց մերձենցուցանել, կամ յախանջս, կամ յաչս, կամ յանուս, և որ յանդգնի՝ նզովեալ է»։

Հ. ԾԲ. Լուսեղեցական ասմունքներուն կարգը ի՞նչպէս մնաս սուրբ աստուածը։

Պ. Այսպէս կաւանդեն վարդապետք, թէ հնագոյն էր քրիստոսի աստուածային մարմինը խաչէն իջեցնելէ հոգին աւանդելէն ետքը. քանզի

կրակի նման կայծակունք կելլային բեւեռնեբուն վերքերէն՝ եւ ակռով վիրաւորված կողէն։ Եւ յետոյ Յովսէփ Արիմաթացին ծունկ չոքելով ձեռքերը տարածեց, եւ աղօթել սկսաւ այսպէս ասելով. "Սուրբ աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ։" եւ այսպէս երեք անգամ կրկնելով քրիստոսի մարմինը խաչէն իջեցուց, ուստի առաքեալներն ալ կանուն գրին այս աղօթքը ասելը։

Եւ սուրբ աստուածածնի վերափոխման ժամանակը՝ որովհետեւ Բարթուղիմէոս առաքեալ հոն չէր, եւ երեք օրէն եւաքը եկաւ, եւ բատ բաղձանաց իւրոց աստուածածնի գերեզմանը թացին՝ մարմինը տեսնելու համար, բայց մարմինը հոն չէր, քանզի յերկինս վերափոխեալ էր. յայնժամ Թովմաս առաքեալ այսպէս աղօթեց. "Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին Մարիամ՝ մայր քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քո եւ աստուծոյ մերոյ։" Եւ այս բանն ալ առաքեալները առին՝ Յովսէփայ ասած Սուրբ աստուածին հետ կցեցին, եւ այն ժամանակէն մինչեւ ցայժմ ասվիլ սկսաւ եւ կենդանեցնելուն մէջ։ Այսպէս կը վկայէ մեր Սիմէոն Կամուրջիկոսը Պարսամաշար անուն գրքին մէջ։

Հ. Ծ. Գ. Ա Երկին յարութեան օրը՝ յարութիւն առնողները, ինչ հասակաւ կամ ինչ որպէ-

սուտ թեամբ որ մեռանի՞ նէ, այնպէ՞ս պիտի յարու-
թիւն առնէն, եթէ ուրիշ կերպիւ։

Պ. Ի՞նչ մարդ մը ինչ կերպ մարմնով մե-
ռանի՞ նէ, այն կերպով յարութիւն չի՞ պիտի առ-
նէ. քանզի ցորենը՝ մերկ հատ մի է, կիյնայ հո-
ղին մէջ և կը մեռնի. բայց այնպէս չի բուսանիր,
այլ հագուած և զարդարուած։ Այնպէս յարու-
թեան օրը՝ ոգին և ձերը կարիքի հատակաւ
յարութիւն պիտի առնեն՝ ըստ նմանութեան
հատակին քրիստոսի. (Եբէ-ա-ց. գ. 13)։

Հ. Ծ. Դ. Լուսաւորչ կատարելն յարութիւնը
ամենայն ուղղափառք. բայց քիչ մը անհաւատալի
կերևայ հնձի. քանզի շատ տարի բրէն գոյացած
բան մը, որ ապականի՝ մինչև իւր առաջին նիւ-
թին փոխուի, ի՞նչպէս կը նորոգի, և ամբողջ
մարդ կը լայ։

Պ. Հնիրաւի այդ ըսածդ բնութեան գործ
չէ. թէ որ բնութիւն գործ ըլլար, պէտք չէր՝ որ
հաւատոյ մասն ըսէր, և հարկ էր՝ որ ամենայն
ազգք և ազգեր հաւատային. բայց որովհետև
բնութեան առաջնորդն է այդ գործը կատարողը,
և ինքը մեզի կը վկայէ՝ թէ յարութիւն պիտի
տամ ամենայն ազգի մարդկան, ուրեմն աստուծոյ
կարողութիւնը նայելով՝ հիշ բան մը չէ։ Բնու-
թեան գործը և աստուծոյ գործը՝ այս զանա-
զանութիւնը ունին. առանց հօր և մօր՝ յայտնի
է որ, ծնունդ չըլլար, ահա բնութեան գործ.

բայց Աղամ առանց հօր և մօր կատարեալ մարդ ըլլալով աշխարհ եկաւ, ահա աստուծոյ գործ. ուրեմն կարօղ է աստուած վերոյհիշեալ ապականեալ մարմինը։

Է. ԺԵ. Շատ մարդիկ կան, որ մարդու միս կուտեն, և այն միսէն անուանդ ուներնալով զաւակ կը ծնանին. եթէ ըսածիդ պէս յարութիւն կայ, պէտք է որ այն կերուած միսը շատ անձի վրայ բաժին ըլլայ, որ այս ալ անյարմար բան մի է. ուրեմն յարութիւն չի կայ։

Պ. Պէտք չէ՝ որ մէկ մարդ մը բոլոր կենացը մէջ՝ ինչ որ ուներ նիւթականապէս՝ յարութեան օրը միւսանգամ առնէ. այլ այնքան մը որ՝ բաւականութիւն ուներնայ կատարեալ հասակին։ Եթէ որ կատարեալ հասակին բաւականութիւնը բան մը պակսէց. ինչպէս ըսեմ թէ տղայութեան ժամանակը մեռաւ, կամ անդամոց կոզմանէ պակասութիւն ուներցաւ, աստուածային կարողութիւնը կրնայ ուրիշ տեղէ լեցնել. ինչպէս բնութիւնը ուրիշ տեղէ կը կատարէ ծնեալ տղային հասակը՝ բաց ի հօրէն և ի մօրէն. նոյնպէս թէպէտ ոմանք մարդու միս կուտեն, հարկ չէ որ յարութիւն առած ժամանակը այն միսն ալ իւր մարմնոյն մէջ երևայ. քանզի մարդոյն միսը միշտ կը ոչնչանայ բնական ջերմութեան զօրութեամբը՝ և դարձեալ կաձի. բայց կերուած միսը՝ որոյ միս էր,

իրեն յետ յարութիւն կառնէ , թէ որ պակաս մնայ մարմնոյն լրութիւնը , աստուծոյ զօրութիւնամբը կը կատարի՝ ինչպէս որ ըսինք։

Հ. ԺԶ. Ո՞եր հաւատքին զօրութիւնը նայելով թէ որ քրիստոսիս կազմութիւնքը ի մեզաց և ի մահուանէ , պէտք է որ անունք միայն փրկութիւն արժանի ըլլան , որոնք որ հաղորդ եղան քրիստոսի հաւատոյն և խորհրդոցն . բայց շատերը հաղորդ չեղան քրիստոսի հաւատոյն , ուրեմն անունք յարութիւն չենառնէր։

Պ. Արդեն միսածին անոր համար մարդկային բնութիւն առաւ՝ որ նորոգել տայ . և բնութիւն պակասութիւն ինչ որ կայ՝ յարութիւն օրը պիտի նորոգվի , և ամենայն մարդիկ յարութիւն պիտի առնեն . բայց կատարելապէս չեն նորոգվիր ամենն մարդկանց պակասութիւնքը , այլ միայն անունց՝ որք քրիստոսի հաւատոյն արժանի գտնվեցան . ինչպէս սրբազան առաքեալը կըսէ , "Ամենեքեան յարիցուք՝ այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք"։ (Ա՝ Կորնթացւոց . ԺԵ . 51)։

Հ. ԺԷ. Լրթէ ընդհանրապէս ամենեսեան յարութիւն պիտի առնենք , ինչո՞ւ կըսէ Դաւիթ մարգարէն , թէ "Ո՛չ յարիցեն ամբարիշտք ի դատաստան"։ (Սաղմոս . ա . 5)։

Պ. Դաւթի խօսքը այսպէս իմացիր . "Ո՛չ

յարիցն՝ ամբարիշտք ՝ի դատաստան» , այսինքն՝ ՝ի դատաստան քննութեան՝ այլ ՝ի դատապարտութիւն . քանզի հիմակվընէ դատապարտեալ են . ինչպէս որ արուեստէր մէկը որ բանտը կըլայ , վերջապէս երբ կը հանեն դատուորին առանը նէ , դատաստանի համար ելլալ չըսիր անոր , այլ յետոյն վճիռը լսելու համար . այս է Դաւիթ մարգարէին խօսքին միտքը։

Եթէ մարգարէներէն վկայութիւն կուզես . ահա Յօր երանելին կըսէ , «Գիտեմ զի մշտընջենաւոր է՝ որ ըստանելոցն է զիս յերկրէ յարուցանել» . (ԺԹ . 25)։ Եւ Եսայի մարգարէն կըսէ . «Տեսջիք և խնդացիք սիրտք ձեր , և ոսկերք ձեր իբրև զդալարի զուարճացիք , և ծանիցի ձեռն տեառն երկիւղածաց իւրոց (ահա յարութիւն արդարոց) , և սպառնացի անհաւատից , (ահա յարութիւն մեղաւորաց)»։

Եւ ի՞նչ պէտք է մեզի մարգարէներէն վկայութիւն մուրալ . ահա տէրն մարգարէից ինքն կըսէ . «Եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ՝ի գերեզմանս կայցեն , լուիցեն ձայնի նորա , և եկեսցեն արտաքս . որոց բարիս գործեալ իցէ՝ ՝ի յարութիւն կենաց , և որոց զչար արարեալ ՝ի յարութիւն դատաստանաց» . (Յովհ . Ե . 28)։ Ահա ամենեքին կըսէ , և ո՛չ թէ ոմանք։ Եւ որոց բարիս գործեալ իցէ , ահա արդարոց համար կըսէ . և որոց զչար արարեալ , մեղաւորաց համար կըսէ։

Հ. ԺԸ. Հաւանեցայ բուծնեբուդ, բայց կը-սեն՝ թէ դատաստանին եղբը փառքն ալ յաւիտենական է՝ տանջանքն ալ. թէ որ աստուծոյ դատաստանը արդար է, ակ՛ար չէ պատիժը մեղքէն շատ ըլլայ. քանզի այնպէս գրած է սուրբ գրոյն մէջ. «Ըստ չափու յանցանաց եղիցի և պատիժն». (Բ, Օրէնաց. իե. 2)։ Ի՞նչդ՝ յանցանքը ժամանակաւոր է, ինչո՞ւ պատիժը յաւիտենական պիտի ըլլայ։

Պ. Ոչ արդարապէս եկեղեցւոյ այսպէս կը-սեն. թէ որ մարդ մը քաղաքական օրինաց դէմ յանցանք գործէ հինգ տարի մը չափ, և քաղաքապետը իմանայ նէ՝ հինգ տարի արդեօք պատիժ կուտայ, եթէ շատ ժամանակի. և պատճառն ի՞նչ է, քանզի մեծին հրամանին դէմ յանցանք գործեց։ Իշխանաւորն մէկը որդան գերագոյն մեծութիւն ունենայ այն յանցաւորմարդուն վրայ, այնքան պատիժն ալ առաւել կը ըլլայ։

Ի՞նչդ՝ որդին մոռնին իւր անգին և պատուական արիւնը թափեց մեր մեղացը համար, և եթէ մի՛ սանգամ մեք ընդդէմ նոյն անգին արեանը և անհուն մեծութեանն աստուծոյ մեղադարտ գտնըվիմք նէ, աստուած՝ որ յաւիտենական է, յաւիտենական պատիժ կուտայ մեզի արդարութեամբ։

Հ. ԺԹ. Որբ վերնատանը մէջ եղած ընթրիքէն՝ արդեօք Յուդա հաղորդեցաւ։ Կամ որ կըսէ, «Թացեալ պատառ՝ ասոյ Յուդայիւ. այն թացեալ պատառը՝ ի սուրբ խորհրդոյն էր։

Պ. Ոչ արդարեօք կըսեն, թէ Յուդա ընդառաջելոց ընկալաւ հաղորդութեան սուրբ ծայրն խորհուրդը. բայց գիտնալ պէտք է, որ երբ Յուդա քրիստոսի ձեռքէն թացեալ պատառը առաւ, յառաջուց հաղորդեալ էր. քանզի այն պատառը քահանայագործեալ չէր։

Հ. Կ. Ծաղկազարդի շաբաթ օրը Ղազարու յարութեան յիշատակը կը կատարեմք, արդեօք այն օրը Ղազարոս յարութիւն առաւ։

Պ. Այն շաբաթ օրը չէր, որ քրիստոս յարութիւն տուաւ Ղազարու, այլ տասն և հինգ օր յառաջ էր. եւ ինքը Հրէաներէն հեռացաւ՝ Եփրայիմ քաղաքը գնաց, և անկէ Միւսանգամ Երիքով գնաց, և անկէ Բեթանիա՝ և հացկերոյթի կը նստի, և այն տեղը եղողներուն մէկը Ղազարոս էր. և երբ խմացան Երուսաղէմացիները՝ որ հրաշք տեսնալու արժանի եղած էին, միւս օրը առաւօտուն՝ արմաւենեաց ոստ առին և դիմաւորեցին, որ Ծաղկազարդին կիւրակէն է, ինչպէս կը վկայէ աւետարանիչը. «Յիսուս վեց աւուրքք յառաջ քան զզատիկն՝ եկն ի Բեթանիա՝ ուր էր Ղազար, զոր յարոյց յառաջնուն գալստեանդ։

Հ. ԿԱ. Արբոց խնդիրքը ասուած կը կատարէ. Յակոբ Մծբնայ Հայրապետն ալ երևելի սուրբ էր, ինչու՞ համար չի ձգեց ասուած՝ որ նոյն տապանը տեսնայ։

Պ. Ընելորդ բան մի էր սուրբ Յակոբին այդ խնդիրքը. քանզի ասուածային անքաւ զօրութիւնը ցուցուցող սուրբ եկեղեցին է, որոյ օրինակ էր այն տապանը. ի՞նչ պէտք է բուն խակտանը ձգել, և երթալ օրինակը փնտրուել, որ կենդանիներու և անասուններու ժողովարան մի էր։ Նոյնպէս այս խնդիրքին աւելորդութիւնը անկէ յայտնի եղաւ, որ որքան լեռան ծայրը կը մօտենար, թմբուքիւն մը կուգար վրան, ետքը արթնցած ժամանակը ինքը զինքը լեռան ներքևը կը գտնար։ Դարձ այսու ամենայնիւ ամենևին ասուած զուրկ չի ձգեց իւր խնդիրքէն, այն տապանին փայտէն մաս մը պարգևելով հրեշտակի ձեռօք։

Հ. ԿԲ. Ընդե՞ր մինչև այն ժամանակը բոլոր տապանը ամբողջ մնացեր էր։

Պ. Յակոբ ասուածաբան դժուարահաւատալի է կրսէ, բայց կարելի է որ կտորները կար, և անկէ մաս մը տրուեցաւ սուրբ Յակոբին։

Հ. ԿԳ. Որ՞ց նշխարաց պաշտօն տալ կը վայլէ։
Պ. Դ՚Յապէս կրսէ սուրբն Յօհան Ոսկեբերան։

«Պարդապէր է ասուած , և բխոյս ընձեռէ
«մեզ փրկութեան պատճառս , հանդերձ այ-
«լովքն և զսոյն ճանապարհ երթայց մեզ , որ բա-
«ւական է յառաքինութիւն անդր հրաւիրել
«զմեզ , թողլով այժմ առ մեզ զսրբոցն ուխտաւոր։
«Բանդի յետ զօրութեան բանիցն՝ զերկրորդ
«գահ ունին շիրիմք սրբոցն , 'ի զարթուցանել
«առ 'ի նոցն նախանձ զհոգիս տեսողացն զնոսա։
«Լաւ յորժամ որ մերձ կայ այսպիսեմ տապա-
«նի , անդէն գերեզմիկս առնու զճաշակ զարդե-
«ցութեանն զայնորիկ։ Բանզի տեսութիւն
«տապանին՝ յինքն կալեալ զհոգին , յոգեշտակէ
«զնա և զարթուցանէ , և այնպէս իմն հիացու-
«ցանէ , որպէս եթէ ինքն իսկ որ 'ի նմա հան-
«գուցեալ կայ՝ 'ի վերայն աղօթս առնէ , և
«մերձ կայ և երևիցի։ Տե՛ս 'ի ճառն՝ որ 'ի
սուրբն Բարեղաս։

Հ. ԿԴ. Սրբոց նշխարքն ինչ տեսանելն ի՞նչ
օգուտ կը լայ։

Պ. Ոչն երանելոյ վարդապետն այսպէս կը
հրամայէ։ «Լցեալ ոք հասեալ 'ի վկայարան սրբ-
«բոց , այնպէս 'ի չափու ունի զանձն . որպէս
«եթէ ոք 'ի պատանեաց 'ի խրախճանի տեսանե-
«լով զդասախարակն՝ զի առ ընթեր կայ , և ակ-
«նարկի արարեալ պատուիրէ նմա՝ զի քաջա-
«վայել լուչ օրինօք արբցէ և կերիցէ և խօսեսցի
«և ծիծաղեսցի , և ամենևին պատկառ կալցէ՝ զի

«մի բնաւ ըստ շարին և լեալ աղարտեսցէ զհամ-
«բաւ անձինն։ Եւ ի տեսանել մեծին անտի յայն-
«մանէ բարեպաշտաց ոյն և յարդարեալ՝ և զե-
«բանեալսն զայն ի խորհուրդս իւր ներարեալ,
«վարդապետի մատչի ի տարանին. և հասեալ անդր՝
«մեծ և սահմանի բերանի յանձնէ իւր, և ապա
«զամենայն վասն իմիւն բարեկամակ յանձնեն ի
«բաց իմացեալ և իրրև զիմաստուն իմն իմ-
«ացեալ, այնպէս մեկնի ի բաց։ Եւ զարս միանգ-
«ամ ի բարձրէ անտի և լեալս՝ ընդառաջեալ
«գանէ ի ճանապարհին, նոքին պարկեշտաւ իմ-
«յոլ զնոսա և բիմեալ զբանս լ հոգևորապէս, ոչ
«զայն բարբառս միայն արձակեալ առ նոսա,
«նիմ ցնծացէք առաջի տեառն զարս իմ ամբ.
«այլ և զառաջի բանեալն զայն ի վերայ բերբ լոյ.
«նիմ ուտիցէք, նիմ բանիցէք, նիմ զինչ և
«առնիցէք, զամենայն ի փառս ոչ արարջիք։

Հ. ԿԵ. Արդոց մասանելքն ի ախտից բժշ-
կու իմիւն կրնան՞ ի շնորհն։

Պ. Ոչ նիմ մարմնոյ ախտք կը բժշկին՝ այլ
և հոգւոյ, և զնոսին կը խոյանաւակին. և ահա
նոյն տուրբ Ոսկեբերանն այսպէս կը վկայէ։
«Նիմ զբ ի ձեզ վասն իմիւն հոգւոյն տանջեա-
«ցի, նիմ զբ ախտիւք մարմնոյն, նիմ հարատա-
«հարու իմանամբքն, նիմ յայլ ինչ կենցաղական
«ի վիշտս, նիմ ի բերանս ինս մեզաց, հաւատովք
«ի նշխարս արդոց գիսեսցէ, և յամենայնի անտի

«զերծեալ՝ բազում մխիթարութիւն զարձցի անդրէն,
«և ի տեսութիւնէ անտի՝ միայն զիսիզմ մոռացն
«թեմեմագոյնս յարդարութեան։ Նա՛ և ի նեղբոյն՝
որ ի սուրբն Իգնատիոս։

Լոյս զեղերը հարածելոն և խոյսատուակելոն
համար, նոյն վարդապետը սյոսպիսի օրինակու-
կը վկայէ։ «Զ օրինակ (սակ.) . սուսազակա-
«սակոյ և զերբ զմանակրկիսոք՝ յորժամ ուրեք
«զարբուանական զգենեն սեսանիցեն վարդանկեալս՝
«զրահ, սուսար, կամ սարքս սրոք հանակ սակե-
«ձանձանեք՝ անդէն խորշին, և շժարհին մեռ երբ-
«թալ և շշարիլ՝ խուսանալք յանհնարին
«վանդէն, եթէ որ երբէք սս ի նոյն յանդ ըգ-
«նեացի, սյոսպիսի և զեք ձմարիս սուսազակա-
«սակոյ՝ ուր ուրեք սեսանեն հանդուցեալ ըգ-
«մարտիրոսացն մարմին, վաղվաղակի ընդ կրսուն-
«կրս ի փախուստ խուսանեն։

Հ. ԿՁ. Լրկեաք որբոց բարեխօսութիւնը
ազատեն մեղաւորին։

Պ. Լոյս. քանզի Յակոբ սուտ ասողաւն՝ ի
վերայ այնքանին՝ որ յաւետարանին Մարկոսի.
(Ե. 32). «Եւ բերին առաջի նորա խուլ մի և
համր, և աղաչէին զի ձեռն դիցէ ի վերայ նորա։
Իսկ՝ թէ աղաչանաւք բերողացն ազատեցաւ այն
խուլն և համրն։ Քանզի մեղաւորն իրրև համր
չի կրնար ինքնին մեղաց թողութիւն արտօղին
աղաչել, այլ պէտք է որ ուրիշներուն լեզուն փոխ

առնէ, այսինքն սրբոց բարեխօսութիւնը։ Ի՛հա՛ և ինքն աստուած անաստուա՛ թերանալն այսպէս կը վկայէ՝ ասելով առ Եղիսեայ թագաւորն և առ երկուսին բարեկամս նորա, որոնք արդարոյն Յովայ բարեկամք էին. «Յովբ ծառայ իմ աղօթիս արասցէ վասն ձեր, զի թէ ոչ նմա ակն առեալ էր՝ և թէ ոչ վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդեօք զձեզ զ»։ (Յոբ. խբ. 8)։

Հ. Կն. Լրիթ կարգաւորմը անիրաւ տեղը մէկը բանադրել, ընդ բանադրանաւք կը հաստատի՞ այն բանադրելոյը։

Պ. Ի՛նչ. քանզի կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը այսպէս տրվեցաւ առաքելոց, «Թէ զոր միոանգամ կապիցէք յերկրի, ի դիցի կապեալ յերկինս». և շրջաւ թէ՝ զոր իրաւամբք կապիցէք, ի դիցի կապեալ. և թէ այսպէս շրջեալ նէ՝ ընդաւանայն կրկնեալ և կենդանական կապանքը։ Ի՛հա՛ և սրբազան առաքելոյն ի խիզ կանուն իւրմանց այսպէս կարանդեն, «Տարապարտոյ կապեցեալն՝ սխալմամբ ընդունելի դիպարանան. թէպէտ կապոյն զպարտիսն պատուհասն ընդունի և ընկալանու, որովհետև անիրաւապարտ բանադրեցաւ»։

Ինչպէս թէ այդպէսակրմը իւր այդպէս զործին հրամանն արված է այդ իրին ծառերը յոտանէ, բայց չէր ասելը հանելու զիրաւորու թիր. թէ որ այդպէս զործը կանուշ և պարզասու ծառերն ալ կորէ նէ՝ կը կորըվին, բայց յետոյ այդպէսակրէն պատիժ կը կրէ։

Հ. ԿԸ. Կարգաւորմը կարգաւորի հետ ոխակալութիւն ունենալով, կրնայ պատարագ մատուցանել։

Պ. Ոչ. քանզի այսպէս կը հրամայէ առքրիստոսեան շնորհալին։ «Ի որ 'ի քահանայից պատարագողաց՝ ոխակալութիւն ունելով 'ի որոմն ընդ ուսիք, մատիցէ յատուած այսին խորհրդոյն կատարումն, և անընդունելի առնիցէ զպատարագն առաջի աստուծոյ, այլ նախ հաշտեսցի ընդ եղբօրն քան հրամանին քրիստոսի, և ապա և կիսալ մատուցէ զպատարագն։ (Այսինքն և աշխարհականաց համար կրսէ) «Եւ ասեսցեն և 'ի վերայ հաղորդակիցացն եղիցի։

Հ. ԿԹ. Եթէ քահանայ մը պատուիրանագրոց մէկը բանադրած ըլլայ, կրնայ պատարագ մատուցանել։

Պ. Եթէ աստուծոյ օրինացը դէմ մեղանչելու և չի զղջալու համար բանադրեր է քահանայն, և այն բանադրեալն ալ չէ ուղղուիր, և չէ խնդրեր քահանայէն թողութիւն, առանց խղճի մասց քահանայն կրնայ պատարագ մատուցանել, և գաստարարուելն ներքև է այն՝ որ շուղեցաւ, և թողութիւն չի խնդրեց. քանզի և քրիստոս չի հրամայեր վայրապար թողութիւն տալ որոմն ցուցանողին, այլ եթէ անկեալ առաջի կը խոստանայ ապաշխարել, «Յայնժամ (ասէ) շնորհեսցի ասա 'ի քէն թողութիւն յանցանացն՝ զոր առ քեզն յանցեալ ես։

Հ. Հ. թէ որ բանադրեալը գայ, և քահանայն թողու թիւն խնդրէ՝ խոստանալով ուղղելու իւրքը զինքը, և քահանայն մարմնաւոր որ պատճառ է մը հատար թողու թիւն չի տայ նէ, կրնայ պատարագ մատուցանել։

Պ. Հրամանե՞ն չունի այնպիսի քահանայն պատարագ մատուցանելու, միայն նոր թողու թիւն չի տայ այն բանադրեալին, և չի հաշտուիր նորին հետ։ Ի՞նչ հարցմանց պատասխանը՝ տե՛ս Հնորհալիին Ընդ հանրականին մէջ։

Հ. ՀԱ. Ի՞նչ կերպ որպիսու թիւն պէ՞տք է ունենալ պատարագատուցող քահանայն։

Պ. Իւր մատնարարու թիւնն զգեստէն թող հասկընայ. բանզի հագուած խորհրդաւոր որ զգեստին նայելով՝ պէ՞տք է իւր անձին կատարելու թիւն ունենալ. լաւ ատրուս ատրին՝ պէ՞տք է ունենալ ներեալ ատուղու թիւն ընտրողու թիւն. լաւ շապկին՝ մաքրու թիւն ոչխարհու թիւն. լաւ գօտոյն՝ ապահու ձեւ մարմնոյ. լաւ բուրվանին՝ քաջու թիւն արիւ թիւն. լաւ ու բարին՝ յարատևոյու թիւն և բկայնութիւն. լաւ շուրջառոյն՝ կատարելու թիւն սիրոյն։

Հ. ՀԲ. Ի՞նչ կերպ որպիսու թիւն պէ՞տք է ունենալ ճաշակ առնողին։

Պ. Շատ կատարելու թիւն կարօտու թիւն ունի. բանզի պէ՞տք է առաքինու թիւն գործքերով

զարդարելիս, որ այս սուրբ խորհուրդը՝ իւր հոգւոյն մէջ ընդունելու տեղի ունենայ. պէտք է մաքուր խղճմտանքով ճաշակել, ինչպէս որ Սիրելիին ունելն զբաղեցաւ 'ի սեղանին սուրբ. և ահա կը հրամայէ սրբազան առաքեալն Պօղոս, «փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ ո. (Ա՝, Կորնթ. ԺԱ, 28)։

Պէտք է սրբութեամբ մաքրիլ և օծեն մահացու մեղքերէն, քանզի նախ հպարտութեան մեղքը, որ հրեշտակները քակեց իրենց ամբոխէն, և դիրկիր թօթափեց. (Գ՝, Թիմ. Ժ, Թ). պէտք է վերցուցանել. զի հպարտութեան մեղքով մերձեցողը՝ նոյն դատապարտութեան պատիժը կը կրէ։

Պէտք է մաքուր ունել հոգին 'ի նախանձաւէ. քանզի ինչպէս հոգին սուրբ իրքեւ ազատներ եղեւ ցաւ, որ լի զի չունի, նոյնպէս և հաղորդողին պէտք չէ՝ որ նախանձի լի զիւթիւն ունենայ իւր սրտին մէջ։

Պէտք է ազատ ըլլալ բարկութեան ախտէն. քանզի ինչպէս Պիղատոսի բարկացող և կատաղի զինուորները չարչարեցին քրիստոս, նոյնպէս և բարկութեան ախտով ճաշակ առնողը անոնց կարգը կը համարուի, և անոնց պատժակից կըլլայ։

Պէտք է զգուշանալ 'ի ծուլութենէ, և առաքինական արիութեամբ կատարել խոստովանահօրը գրած ապաշխարութիւնը, և նոյն արիութեամբ գիտութիւն ունենալ միշտ դէմ դնելու երեք սեւակ թշնամիներուն, որք են՝ մարմին, աշխարհ, և սատանայ։

Պէտք է զգուշանալ յաղանդութիւնէ՝ որ չի նմանիր Յուդայի, որ իւր սրտին մէջ մատնութիւն երբեմն ալեւոր արծաթիք կար, և բերանոյն մէջ յիսուսի քրիստոսի անուն մերոյ մարմին և արիւնը. որուն կողմանէ կը գանկատէր ասուած Դաւիթ մարգարէին բերանովը այսպէս. «Որ ուտէր զհաց իմ, յանխնդրեաց առնել ինձ խաբէութիւն». (Սաղմոս. խ, 10)։

Պէտք է զգուշանալ յորկրամոլութիւնէ. քանզի որկրամոլութիւնն հեռանակը կուապաշտութիւն է, ինչպէս Իսրայէլի համար կրսէ Դաւիթ, «Պղծեցան ի Բէլփեգոր, զի կերին զզոհեալս և զմեռեալսն». (Սաղմոս. ՃԵ. 28)։

Պէտք է զգուշանալ ի պոռնկութիւնէ և ի բղջախտութիւնէ. քանզի սուրբ Հաղորդութիւնն խորհուրդը՝ հրեշտակաց հաց կանուն անի. ուրեմն ճաշակողը իբրև հրեշտակ պիտի ըլլայ հոգւով. իսկ բղջախտիքն՝ ոչ եթէ հրեշտակաց, այլ պիղծ անասնոց կը նմանին, վասն որոյ ասէին մեր յիսուս քրիստոս արդեւլուլ կը հրամայէ այնպիսիներու սուրբ Հաղորդութիւնէն, այսպէս ըսելով՝ «Մի ապիք զսրբութիւն շանց, և մի արկանիք զմարգարիտս ձեր առաջի խոզաց». (Մատթէոս. է. 6)։

Ի ի՛նչ ազգէս ամենն ուն սակ մեղքերէն՝ պէտք է որ մաքուր և սուրբ ըլլայ ճաշակ առնողը. քանզի զապիր մեղքով աղտոտելը և անզգոյշը հրամանն չունի եկեղեցին և ս մանարս. և այս պատճառաւ սարկաւագները կրսեն ողջունի ժամանակ՝ «Որք ոչ էք կարող հաղորդիլ ճաշակին

խորհրդոյս , առ դրուն ելէք և աղօթեցէք։

Հիրաւի սրբութիւն կանուանի այս սուրբ խորհուրդը , բայց սրբոց սրբութիւնէ . վասն որոյ ժամարարը սուրբ խորհուրդը բարձրացուցանելովն բարձրագոչ ձայնիւ կլսէ , Ի սրբութիւն սրբոց։

Հ. ՀԳ. Անարժանութեամբ ճաշակողները ի՞նչ պատիժ ունին։

Պ. Պատժոց անուանները անթիւ են . մինչև կը համարձակիմ ասել՝ թէ աշխարհիս վրայ որքան պատիժ և պատուհաս կը պատահի , շատը անարժանութեամբ պատարագողաց՝ և անարժանութեամբ նոյն սուրբ մարմինը և արիւնը ճաշակողաց է։ Այլ Աբելբա բոմանոգ ակն քանի մի պատժով կը լմընցուցանէ , որոնք իրր արմատներն ամենայն պատժոց , և այսպէս կրսէ , "Անարժան հաղորդութիւնն խիստարիմէ զմարդն մեղաւ՝ պատրաստէ զկորուստն . և վկայութիւն կը բերէ Պաղմոսէն . "Եղիցին սեղանք նոցա յորոգայթ։" Պայթակղեցուցանէ զընկերն , ասա այնմ՝ "Եւ ի հատուցումն։" Կուրացուցանէ զմիտս , ասա այնմ՝ "Եւ ի գայթակղութիւն։" Կուանէ ի նեղբոյ փորձութեան , ասա այնմ՝ "Կուրացին աչք նոցա՝ զի մի տեսցեն։" Օտարացուցանէ զաստուած , ասա այնմ՝ "Հեղ ի վերայ նոցա զբարկութիւն քո։" Կարձէ զժամանակաւորս կեանս , ասա այնմ՝ "Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ։" Կո-

զոպտեն ՝ի շնորհաց , ըստ այնմ՝ «Եւ ՝ի յարկ-
նոցս մի ոք իցէ՝ որ բնակիցէ »։ (Ալեքս-
գէր՝ գ։ գլ։ ժե)։

Հ։ ՀԴ։ Լ՚մեն ազգաց պատարագը արդեօք
մի և նոյն է։

Պ։ Լ՚յսպէս պատասխան կուտայ սուրբն
Ղեբսէս այդ հարցմանդ։ «Զ՚ի ընդդէմ (ասէ)
«ազգաց մեզ , այլ ՝ի շարեաց ազգայացարուք , և
«մեզ կատարեալ լերուք , քնեալ զՀնչմարտու-
«թիւնն և նմին հաւանեալ։ զի թէ զանազան
«քրիստոս է՝ կամ զանազան աստուածք ,
«զանազան զօրութեամբ իւրաքանչիւր ազգացն
«ասիրեալք՝ Հնչմարտիւ էր կարծիքդ , և ուստ էր
«զանազանութիւն պատարագին հակառակամար-
«ան աստուածոցն զօրութեամբ կատարել , զի
«այն ազգին աստուածն զիւր զօրութիւն փա-
«ռացն ՝ի նորա պատարագն տարաւորէր՝ և այսմ
«՝ի տարբերութիւն Իսկ թէ ասիցես՝ քրիստոս մի է ,
«բազց առ նա հաւատացն տարաբերակաս
«բերին։ Զանազանք , զի զոր վասն այսր բան ըն-
«գարձակ ուսուցաք որպէս զքրիստոս մի , և
«զտարա հաւատն մինչպէս՝ որ առ նա։ Լ՚սա թէ
«քրիստոս մի է , և մեր ամենեցուն առ նա յոյսն
«միով օրինակաւ , և մի հոգի անուանեալքս յա-
«նուն նորա , յիւրաքանչիւր ազգս ընկալաք , և
«զինք խորհր ՝ի հաւատացն Աբրահամու որդւոցս
«ծնեալց։ յայտ է թէ մի է եկեղեցի ընդ ամե-

«զերա, և միով հոգւով ի նոսա կատարեալ պա-
«տարագն։ Օրէ որպէս զու խնդրեա զհոգին
«կատարիչ քում ի նու իրանացն, այնպէս և նա
«խնդրէ իւրում։ Չէ թէ զանազան են լեզուքն,
«բայց ոչ թէ զանազան հոգիս խնդրեալ մի,
«մանաւանդ զի և մի բանիւք աղօթիցս, և մի
«ձև ակն ընդու թիւն առ ի նոցն ամենայն ազգաց
«քրիստոնէից խորհրդածուն թիւն։

«Զարձեալ՝ որպէս արեգակն մի է, որ զիմն
«զգալի աչս և զնորայն լուսաւորէ և տրէ, և
«իմանալի աչաց լոյս պարգևէ։ Սակ ևթէ որ ի
«շարու թենէ զրդեալ ասիցէ, եւ միայն ան սա-
«նեմ զարեգակն և ոչ զու՝ միայն զիւրն շա-
«րու թիւն ցուցանէ, և ոչ զիս ի համարիս ու-
«լուսոյն զրկէ, որչափ մաքուր է իմ հայեցուածն։
«Այսպէս ազգս որ զազգ անկատար և թերի
«յաշխարհ՝ յորոյ վերայ անուն քրիստոսի է,
«զիւրն շարու թիւն ցուցանէ. և ոչ թէ զնա ի
«հատարակաց շնորհէն զրկէ։ Զիր ապա զա-
«նազանութիւն միոյ քրիստոսի պաշտանէիցս ի
«մի խորհրդածուն թիւնս։ Չէ որք զայս այսպէս
«կարծեն՝ զանձինս իւրեանց զատապարտեն, և
«ոչ թէ զհետզուն թեան հոգիս յաշխարհաց ախտով
«ծանուցեալ կարեն։

Այլ նիւթք ասեն զանազանք են պատարա-
գին, որոց այսպէս պատասխան կուտայ։ «Չթէ
«հաց և գինի ոչ են՝ բան որում ի քրիստոսէ ա-
«ւանդեցաւ, յայտ է թէ ոչ կարեն զնոքա որ-
«ծուն թիւն հոգւոյն բան այսմ խորհրդոյ ընդու-

անել, և մարմին լինիլ քրիստոսի, ապա թէ հաց
և գինի է, ասենի սուրբ գրոցս զբոլոր թեանն
սուրբ հոգւոյն, որպէս և ապակին զարեգակն։

Հ. ԺԵ. Լուսնին մի և նոյն են խաւարումն և
անխաւարին՝ ջրախառն գինին և անապակին։

Պ. Այն սուրբ վարդապետը այսպէս կըսէ։
«Լի՞մ յանդգնութեանդ՝ և անօգուտս հայհոյա-
կոս թեանդ, որ ձգէ զմի զ 'ի շատխօսութիւն.
«ա՛ծ զմի բոյ գրեալ օրինակին 'ի մէջ. և թէ խաւ-
«նեմք ընդ ապակին որակու թիւն լինչ գուն նոյ 'ի
«պէս վայելչու թեան, թերևս այն տկարացու-
«ցանէ՞ զնա ասելոյ զբոլոր արեգականն, կարծեմ՞
«և ոչ բնաւ, ապա մի զզօրութիւն հոգւոյն
«նիւթոց ազդեսա՝ քան զարեգականն և զամենի
«տկարացուցու՞ց։

Այս այս ալ գիտնալ պէտք է, որ ընդ հանուր
վնիռ է աստուածաբանից 'ի մի բոյ իւրաքանչիւր
ազգաց քրիստոնէից, հաստատուն պահել իրենց
եկեղեցւոյն արարողութիւնը և ծէսը։

Հ. ԺԶ. Ի՞նչպէս մի մարմին քրիստոսի կրաքի
բոլոր եկեղեցեաց մէջ 'ի պատարագի՝ ինչ։

Պ. Այն վարդապետը և այսպէս օրինակ
կուտայ, արեգական մէջ զաւ զաւ քանի մի ա-
պակի դիր, նոյն մէկ արեգական լոյսը չէ՞ որ ամ-
մէնուն ջրոյ ալ կը ծագէ, և մէկ չէ՞ն անուանիր

ոյն զատ եղածներդը , և. մէկ լուսոյ զօրու թիւն ընդունող չէ՞ն մի։ Այնպէս բոլոր աշխարհիս մէջ թէպէտ զատ զատ են եկեղեցիք , բայց մէկ նիւթ կը դրմի պատարագին , այսինքն հաց և գինի , որուն վրայ կը ծագի համատարած արեգակն մի՝ այսինքն հոգի սուրբ , և ամենեն ալ մի մարմին քրիստոսի կընէ։

Հ. ԺԱ. Քրիստոս միանգամ պատարագեալ խաչին վրայ՝ մեռաւ , մեք ամենն որ պատարագելով քրիստոսի մահը մեռանիմ կընենք։

Պ. Բան լիցի . որչափ յամենայն եկեղեցիս կը պատարագեմք , ոչ եթէ քրիստոսի մահը կը կրկնեմք , այլ նոյն խորհրդոյ յիշատակը առաջի հօր սուրբոյ կը կատարեմք , որով իբր թէ կըսեմք . «Ո՛վ հայրդ սուրբ՝ հայեաց ի գրաւական մերոյ , այսինքն քո միածնիդ մարմնոյն և արեանը , որ իւր մահուանը յիշատակ ձգեց , և մեր մեղաց թողութիւն՝ և քեզի հետ հաշտութիւն միջնորդ եղաւ , որ մեզմէ առաւ այն՝ որ այժմ քեզ ընծայ կը մատուցանենք , և առով քեզմէ մեղաց թողութիւն և շնորհ կը խնդրենք։

Հ. ԺԲ. Ո՞ւրեմն ինչ ժամանակը պատարագի աթոռոյս թիւն ասուածները ի՞նչ էին։

Պ. Ուրբաթ ինչ ժամանակը որովհետև հաւատոյ գարուն նոր ծագեր էր , և ամենն ալ լի

էին հոգւով արքով, և նորին շնորհաց իրենց մեծագործն կը շարադրէին, և կրոնէին աղօթքներ բնչպէս որ հարկ և արժան էր՝ թէ պատարագի խորհրդոյն և թէ այլ արքաշնագործութեանց։ Այլոց յետոյ ելրբ նոր ազգացաւ ի մարդկանէ այն շնորհաց լուսափայլութիւնը, սուրբ և հոգեկիր վարդապետաց ելկերդեցոյ՝ այս արժանաւոր ելրան աղօթքներ և սաղմոսներ մեզ յետագայիցս աւանդեցին, բնչպէս որ կը վկայէ և սուրբ Եղիսաբէս շնորհաբին։

Հ. ՀԹ. Սուրբ պատարագին մէջ՝ Ողջոյն ամէն միմեանց՝ և Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, ի՞նչ կը նշանակէ։

Պ. Սի զանին վրայի ընծայքը՝ Քրիստոս կը նշանակէ, և սարկաւագը այս բան լով՝ խմացուներ կուգէ, թէ ամէն դուռ մարմնաւոր ժողովուրդք՝ պէտք է ձեզի իրբ մի անձն ըլլալ սիրով մէկզմէկու հետ, և այն սէրը մէկզմէկու ողջոյն տալով յայտնել, և որոնք որ ոչ ուներին իրարու հետ, եկեղեցիներ դուրս ելլան և աղօթեն, քանզի ոմանք արժանի չեն սուրբ խորհրդոյն յանդիմանեալք։ ուստի այն ողջունին փոխարէն դպիրք պատասխան կուտան ժողովրդեանն կոչմանեալ, թէ թէ շնորհաբերն մեզմէ հեռացեր է, և սէրը ամէն ոնուս վրայ տարածեր է, և մի մարմին եմք յիսուսի Քրիստոսի դլխոյն մեր։

Հ. Զ. Լայ. ողջունին ժամանակը՝ ժամանակարը կիսով չափ սկիզբը կը բանայ, և սեղանոյն մէկ կողմը կը կանգնի, այս ի՞նչ միտք պիտի ըլլայ։

Պ. Լ՝ խորհուրդ ամենասուրբ կուսական ծընանելան առաջն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի սուրբ կուսէն ծնանելով՝ երևեցաւ ի մէջ մարդկանց։

Հ. ԶԱ. Լրբ. Քրիստոս առաքելքը քարոզութիւնն ղրկեց, պատուիրեց՝ թէ «Մի բաշնայք գրաւակ, մի մախաղ, մի կօշիկս». այս ի՞նչ միտք պիտի ըլլայ։

Պ. Ուանդի իրենց հոգը՝ իրենց պիտոյքին վրայ չըլլայ, այլ իրենք խորհուրդն՝ այսմիջոցն աստուծոյ վրայ ըլլայ. որ երկնից թռչունքը կը հոգայ, աստուածն ալ և իւր աշակերտներբ։

Հ. ԶԲ. Լբա այն ժամանակը պատուիրեց ըսելով, թէ «Ի Ճանապարհի ոչինչ ողջոյն մի տայցէք». այս ի՞նչ միտք է։

Պ. Հաստատ խմանալ պէտք է ողջունին մեկնութիւնը, քանզի ողջոյնը՝ որու որ կը տրվի, անոր փրկութեան շնորհ ունենալուն՝ և երկնային փառաց արժանի ըլլալուն հայցուածք մի է յաստուծոյ։ Այսպես ինչպէս հասնար ի Ճանապարհին արգիլեց. Ճանապարհորդ եղողը դրաղմանց

մէջ ըլլալով՝ ողջունին պատիւը չի կրնար գիտնալ, և լաւ արժանաւոր պատասխան տալ, անոր համար ըսաւ՝ «Ի ճանապարհի ուստի՞ ողջոյն մի՛ տայցէք»։ Այս և ըսաւ՝ թէ «Յոր տուն մտանիցէք, նախ ասացէք ողջոյն տանս այսմիկ»։ Նոյն ըսելով՝ եկեղեցի կիսանամբ, և ի մէջ ճանապարհի եղողը՝ արտաքոյ եկեղեցւոյ ըլլալն է, և ի հարկէ քրիստոնական ողջունին արժանաւոր չէ այնպիսին, ուստի ըսաւ՝ «Ի ճանապարհի ուստի՞ ողջոյն մի՛ տայցէք»։

Ա և երկրորդ՝ ճանապարհը յայտնի է որ երկրային ճանապարհ է, որով կիսանամբ աշխարհի հեշտութեանց և մեղաց ճանապարհն գացողները, որոնք ոչ թէ միայն ողջունի արժանաւոր չեն, այլ և արգիլեալ է այնպիսիներուն ընկերը ըլլալ ի ճանապարհորդութեան։ որոց համար կըսէ Սողոմոն։ «Մի՛ երթար ի ճանապարհ ընդ նոսա, խափանեա՛ զոտն քո ի շաւղաց նոցա»։ (Ա—ի։ ա։ 15)։ Հանդի այնպէսները իրրև աղբ ասից կոխան են՝ և որպէս գիտաց գոն հաց։

Հ։ ԶԳ։ Առաքելոց քարոզութեան վիճակը շէր է։

Զ։ Հայկոր ասուածաբան առեալ ի կանոնաց որոց առաքելոց՝ այսպէս կը գրէ։ Հռոմ և ասիանայն Իտալիա, Սպանիա, Բրիտանիա, Գալլիա, Սիւրիա, Կիլիկիա, Գալատիա, մինչև ցՊոնտոս՝ Պանտոսի առաքելոյն վիճակն էր։

Իրուսաղէմ, և ամենայն աշխարհն Պաղեստինոյ, և Սամարացիք, Փղշտացիք, Արաբիա, Փիւնիկէ, և բնակիչքն Կեսարիոյ առին ձեռնադրութիւն 'ի Յակոբ առաքելոյէ։

Աղեքսանդրիա, Թեբայիդ, Եգիպտոս, մինչև 'ի սահմանս Հնդկաց Եթիոպիոյ, առին ձեռնադրութիւն Մարկոս աւետարանչէ։

Բրեն և լեռան Հնդիկք մինչև 'ի ծով վերջին, առին ձեռնադրութիւն Թովմաս առաքելէն։

Իտիւռայ և Թեւտարոնիկէ, և բոլոր փոքրն Ասիա, Կորնթոս և Աքայիա առին ձեռնադրութիւն Յովհաննէս աւետարանչէ։

Նիկիա և Նիկոմիդիա, և աշխարհն Բիւթանացւոց և Գուտիացիք առին ձեռնադրութիւն Անդրէաս առաքելէն։

Իսպանիա և աշխարհն Թրակացւոց՝ մինչև ցմեծ գետն, որ որոշէ զաշխարհն բարբարոսաց՝ Ղուկաս աւետարանչէ։

Հռոմ, Մծբին, Միջագետք, Հայք՝ 'ի հիւսիսոյ մինչև ցհարաւ՝ Թադէոս առաքելէն։

Պարսք և Պարթևք, Ասորեստան և շրջակայք Բաբիլոնի, մինչև 'ի սահմանս Գեթաց, կի բարապարծ Ադդէէն։

Հ. ՁԳ. Յետ պայծառակերպութեան ժամանակը 'ի միասին եղջ առաքելանն՝ Մովսէս և Եղիան մինչ 'ն ճանչցան, քանզի Մովսէս շատ տարի

յառաջ մեռած էր, և Եղիա հրեղէն կառք ամբարձեալ էր։

Գ. Ասացեալս կըսեն ոմանք, թէ Մովսէսի և Եղիայի պատկերները ունէին առաքեալք, անկից ճանչցան. բայց այս անյարմար խօսք է, քանզի այն ժամանակը սովորութիւն չէր մարդու պատկեր նկարելը. ուրեմն կերևայ՝ թէ քրիստոս անուններին տալով, առաքեալք ալ գիտցան. կամ թէ Մովսէս ի մեռելոց յարուցեալ ըլլալով տակաւին մեռելոց թեւան նշան ունէր, և Եղիա ողջ ըլլալով՝ դրախտին անմահութեան հոտը կը բուրէր։

Եւ կամ առաքեալք ըսեր էին Մովսէսի համար՝ թէ տակաւանօրուս և թեթեւախօս է, և Եղիայի համար՝ թէ մազոտ և համարձակախօս է, անկից գիտցան։ Այս խօսքերը հաւանական են, բայց առաւել հաւանականագոյն է, թէ քրիստոս՝ որ արժան համարեցաւ այն առաքեալները մատամբ իւրեք առնել իւր աստուածութեան փառքը, այս մասնաւոր շնորհքն ալ արքաւ, որ իրենց չի տեսած և ժամանակակից չեղած Մովսէսը և Եղիան ճանչնան։

Հ. ԶԵ. Աւետարանիչները ինչու համար չորս են, և ոչ աւելի կամ պակաս։

Գ. Իրենց կոչին աւետարանիչներ, բայց արքազան հայրապետաց այս չորսը ընտրեցին, և խորհրդաւոր պատճառներ կուտան՝ ըստ-

լով, թէ քրիստոսի վերաբերեալ աւետարանչութիւնը գլխաւորաբար չորս բանի վրայ է, այսինքն մարդեղութիւնը, թաղաւորութիւնը, խաչին վերայ զենումը, և փառաւոր յերկինս համբարձումը։

Ղուկաս՝ ըստ մեծի մասին քրիստոսի մարդեղութիւնը վրայ կը խօսի. Մարկոս՝ առաքելական թաղաւորութիւնը վրայ կը խօսի. Ղուկաս՝ պարարտակ եղին նման զենումը վրայ կը խօսի. Յովհաննէս՝ արծուոյ նման փառաց և բարձրագոյն խորհրդոց աստուածութիւնը վրայ կը խօսի։

Լաւ այս պատճառաւ՝ երբ այս չորս աւետարանչաց պատկերը կը նկարեն, այս ըստ չորս կենդանեաց պատկերն ալ ի միասին կը դնեն, որոնք իւրաքանչիւրոց իբր խորհրդաւոր ցուցանին են։ Լաւ թէպէտ չորս են, բայց մի միայն սիրտն ունին. ինչպէս որ Եզեկիական գրախտին բղխած աղբիւրը մի էր, բայց չորս բաժին կը լար. նոյնպէս և չորս աւետարանիչք ի մի միայն աղբերէ հոգւոյն աստուծոյ յաւաջանալով՝ աշխարհիս չորս կողմը ճաճանչաւորութիւնամբ փայլեցուցին։

Հ. ԶԶ. Քրիստոս յետ յարութիւնն երբ առաքելոց երևեցաւ, ինչու այնպէս յարմարեց, որ Թովմաս անունց մէջ չի գտնըվեցաւ։

Պ. Ըստ սրբազան վարդապետաց համառօտմբ համացուցեմք. քանզի եթէ ամենն առաքեալք

'ի միասին անկասկած հաւատացին, ըստ կը լսեր թէ խարեր են անմիտ մարդկանց նման, որ առանց քննութեան վաղվաղակի հաւատացեր են, ուստի Թովմաս դուրս ձգեց, որ երկրորդ երևման ժամանակը սրբազան առաքեալք առաւել և հաստատուին 'ի հաւատս։ Լսես ըստ Ոսկեբերանին՝ «Յետ ութ աւուր երևի Թովմայի և ոչ առ ժամայն, որպէս թէ յաւուրսն յայնոսիկ կրթեսցի յաշակերտաց, և առաւել սէրն բորբոքեալ լիցի 'ի սանսանելն զքրիստոս»։

Հ. ԶԷ. Խորհեր կանայք արդեօք ովքեր։

Պ. Մարիամ Մագդալենացի քոյրն Ղազարու, և Մարիամ Կղէոփայայ. Սողոմէ՝ մայրն որդւոցն Զեբեդեայ. Մարիա՝ քոյր Մարիամու Մագդալենացւոյն. Յոհաննա՝ որ էր կին Քուզայ Հերոդէսի հազարապետին. և Շուշան՝ որ կը յիշատակէ Ղուկաս աւետարանիչ. (Ը. 3)։

Հ. ԶԸ. Երբ սոմբուրթիւն կայ՝ որ աւագ շաբաթի օր գերեզմանատուն կերթան, այս ի՞նչ միտք պիտի ըլլայ։

Պ. Ասաց Ոսկեբերանին և այլ վարդապետաց՝ որովհետև այն օրը քրիստոս ինքն 'ի դժոխս հոգիները ազատելու համար, նոյնպէս և քրիստոսի փոխանորդք՝ այսինքն սրբազան կարգաւորքն այցելութեան կերթան նենգեցելոց հոգւոց 'ի գե-

բեզմանատունս գնալով, և փրկաւէտ օրհնութեամբ պարտասին առ քրիստոս, զի որպէս իւրով մարդասիրութեամբն 'ի նոյն աւուր էջ առ կապարանն՝ որք էին 'ի գերութեան սատանայի, նոյն գթութեամբ ողորմեալ գթացի 'ի հոգիս ենջիցերց մերոց՝ որք միշտ ակնկալեալ ճեան ողորմութեան նորին։ Այս պատճառաւ և սեպով ենջիցերց կը պարգևեն զողորմութիւն՝ քրիստոսի բարեկամաց, այսինքն կարօտեալց և աղքատաց։

Հ. ԶԹ. Ապրաշէն եկեղեցին ինչո՞ւ համար կօրհնեն, և արքայոյս միւռոնիս կոծեն։

Պ. Հինգ պատճառ կուտան սրբազան վարդապետք։ Այսիք՝ որ սատանայական իշխանութիւնը անկէ հալածի. այս պատճառաւ սուրբ կանոնաց մէջ այնպէս հրաման եղեր է՝ և թէ ուղղափառք՝ արիանոսաց եկեղեցի մը ուներլու ըլլան, առանց օծութեան այն տեղը եկեղեցական խորհուրդ մատուցանելու հրաման չի կայ. քանզի արիանոսաց եկեղեցին է բնակարան դիւաց։

Երկրորդ՝ անոր համար կոծմէ եկեղեցին՝ զի ծնելոյն աստուծոյ յիսուսի քրիստոսի հարան պիտի անուանի, և ինչպէս երկնաւոր փեսայն իւր մարդեղութեամբը ընկալաւ եօթնարիւնեան շնորհս վասակից սուրբ հոգւոյն, հարկ է և նոյն շնորհք իւր հարսին զարդարեալ ըլլալ։

Հրրորդ՝ ինչ կերպ որ յանցաւոր ըլլայ մարդ մը, և երթայ յեկեղեցին իբրև յօժեալ աղքատ բան և ի տաճար երկնաւոր խոստաւորին, ալ չի բռնիլիր, և չի պատժըվիր, և այս է ի մէջ կանոնաց եկեղեցւոյ սահմանեալ։

Չորրորդ՝ անոր համար կօժվի, որ այն տեղի եղած ազօթքը առաւել հաճոյ ըլլայ աստուծոյ. ինչպէս Սողոմօն յետ օրհնութիւն և օժանդակութիւն, այսպէս խնդիրք ըրաւ աստուծմէ. ԱՌ՛ որք ապաշէսցէ զքեզ ի տեղւոջս յայսմիկ՝ լուիցես նմա ասէր։ Քանզի ըստ վարդապետաց՝ ձայն սիրտը՝ աչքը՝ և ականջը եկեղեցւոյն մէջ են, սիրտն յուղիրմէլ, աչքն ի տեսանել զարտասուս աղօթողացն, և ականջն ի լսել զձայն նոցա։

Հինգերորդ՝ աստուծոյ տուրը խորհրդոց սրբոյ բաշնագործութիւնները՝ այն օժեալ տաճարին մէջ պիտի կատարվին։ Լմիտ տուերական պատարագին մատուցումը յօրհնեալ տեղւոջ պիտի ըլլար, ի հարկէ և առաւել փրկական խորհուրդք շնորհական սրբոյ օրինացս։

Հ. Ղ. Ի՞նչ կերպով պէտք է մեզի յեկեղեցին մտնալ։

Պ. Պէտք է մեզի տուրը սիրտ և խոնարհ հոգի ունենալ, որ արհամարհ չերևամք առաջի երկնաւոր խոստաւորին, որ անտեսաբար բաղձմեալ կայ ի վերայ սրբոյ տեղանոյն. և որչափ որ առաջը եկեղեցւոյն մէջ եմք, պէտք է մեզի՝

որ միշտ քրիստոսի ներկայութիւնը մեր միտքին մէջ ունենանք։

Եւ պէտք է մեր արտաքին հինգ զգայարանքները բարի գործով պատրաստ ունենալ։ Աչքերնիս պատրաստել՝ ի տես թշուառներուց։ Կանչնիս՝ ի լսել զգաստութեամբ զհոգեւոր բաներ մաղթանաց, որք երգին՝ ի մէջ սուրբ եկեղեցւոյ։ Հոտոտելիքնիս՝ ի զմայլութիւն անոյշ հոտոյ երկնաւորի փառացին, որ անտեսարար բազմեալ կայ՝ ի վերայ սուրբ սեղանոյն, որ կարօղ ըլլամք լսա բանի երգոյն ասել, «Զհետ քո՝ ի հոտ իւղոց քոց ընթացուք» (Երգ. ա. 3)։ Խերանիս՝ մաքուր պահել առ՝ ի մատուցանել աստուծոյ պատարագ օրհնութեան։ Շօշափելիքնիս հանդերձ ամենայն մարմնով կորացընել, և միշտ ծնրադրութեամբ և աղօթիւք աշխատիլ, և՝ ի վերայ այսր ամենայնի պէտք է զմիտս մեր միայն առ աստուած ունենալ և ոչ յայլ ինչ զբաղուիլ։

Հ. ՂԱ. Եկեղեցւոյ համար ի՞նչպէս կըսվի գերեզմանց քան զերկինս։

Պ. Ի՛նչուն՝ որ երբեմն երկնից համար աթոռ աստուծոյ ասվեցաւ, և երկրի համար պատուանդան ոտից աստուծոյ. այժմ սուրբ սեղանն է աթոռ մարմնացեալ բանին, և երկինքն պատուանդան ոտից նորա։

Հ. ՂԲ. Լինել հեթանոսք եկեղեցւոյ մէջ մնան, եկեղեցին պղծեալ կը համարվի։

Պ. Հ. քանզի Սողոմոնի տաճարին մէջ հեթանոսք ալ կը մտնային երկրպագութիւն ընելու. (Յ-Ա. ԺԲ. 20)։ Լուսաւորիչն Սաբայ՝ Սողոմոնի տաճարը մտաւ, և ողջակէզքը տեսաւ. (Ղ. Թ-Գ. Ժ. 5)։ Լուսաւորչեցւոց ժամանակը շատ անգամ հեթանոսք կելլոյին կը մտնային տաճարը, բայց նոր գրոց մէջ հիշ տեղ մը բաված չէ, թէ հեթանոսաց տաճարը մտնալով և ելլալով՝ նորէն պրբագործեցին և օծեցին տաճարը։

Հ. ՂԳ. Ի՞նչպէս քանի՞ պատճառաւ պղծեալ կը համարվի եկեղեցին, մինչև վերստին օծվելու կարօտ ըլլայ։

Պ. Ութ պատճառաւ յաստուածաբան վարդապետաց՝ ասելով։ Ա. եթէ բռնութեամբ մարդասպանութիւն ըլլայ եկեղեցւոյն մէջ, վերստին օծելու է։

Բ. Երկրորդ՝ թէ որ այն տեղ թաղված ըլլայ անհաւատի կամ բանադրեալի մը մարմին, պէտք է այն եկեղեցին վերստին օծել։

Գ. Երրորդ՝ թէ որ անպատշաճ և անյիշելի մեղք մը գործված ըլլայ եկեղեցւոյն մէջ, ինչպէս շնութիւն՝ և այլն, պէտք է վերստին օծել։

Դ. Չորրորդ՝ եթէ եկեղեցւոյ գլխաւոր տեղը այրի, որպէս ասելով թէ՝ պատերը, տեղանը, պէտք է օծել. և եթէ մնայն աւատարը այրած

ըլլայ՝ վերատին օձել արժան չէ, քանզի յառաջուց ալ առաստաղը օձուխիւն չունի։

Հինգերորդ՝ եթէ օձուածն ներքը սեղանին վրայ երկաթեայ գործիքով բան բանել հարկ ըլլայ, վերատին պէտք է օձել։

Վեցերորդ՝ եթէ սեղանը սեղէն խոխոր՝ կամ կոտրի, վերատին պէտք է օձել։

Հօթներորդ՝ այրեալ սեղանը, թէ և լրման ձեռցած ըլլայ, պէտք է կրկնել օձումը, բայց միայն սեղանը պէտք է օձել՝ և ոչ եկեղեցին, եթէ վերոյ գրեալ պատահմունքներուն նման բան մը եղած չէ նէ։

Ութերորդ՝ թէ որ ձեփը վատ եկած ըլլայ, և նորէն ձեփելի, այն նորոգեալ սեղերը օձել պէտք է։

Իններորդ՝ եթէ եկեղեցին օձողը բանադրեալ ըլլայ, կամ այնպիսի հերետիկոսական ուղղադոյ հաւատած ըլլայ, որ կատարելապէս հաւատացեալ չըլլայ ի սուրբ երրորդութիւնն, այնպիսի օձուած ընօրին մկրտութիւնը և օձումը ընդունելի չէ, ապա վերատին պէտք է օձել։

Տասներորդ՝ եթէ ակամայ կամ պատահական ապականութիւն եղած ըլլայ, ինչպէս ասենք թէ պատահմամբ մէկին վրայ քար մը իյնալով մեռնի, կամ թէ խեղճագար մը ինքը զինքը պատէն ձգելով՝ մեռնի, այս պատճառաւ պէտք չէ վերատին օձել։

Հ. ՂԴ. Լսիմ բռնութեամբ մարդասպանութիւն բլլայ տաճարին մէջ, պէտք է՝ որ վերանայ օծելի բլլար։ Եհան Զաքարիայ քահանայապետը սպանուելու ցաւ տաճարին սրահին մէջ, և կամ թէ ինչպէս Քրիստոս կը վկայէ "Ընդ մէջ տաճարին և սեղանոյն. ինչու տաճարը վերանայն չի սրբազործեցաւ. (Մ. Մաց. իդ. 22)։

Պ. Զաքարիայն սպանուածը Յովսաթ թագաւորը՝ յիրաւի անօրէնութեամբ գործ գործեց, բայց Զաքարիա քահանայապետին արիւնը անարիւն ելլալով՝ ոչ ելիմ տաճարը պղծեցաւ, այլ առաւելեալ մարտիրոսական արեամբ սրբեցաւ։

Հ. ՂԵ. Կարդ արքեպիսկոպոսը, թէ որ ձեռնադրութիւն պրպիսութեանը առ ղեկութիւն չունենայ, պրպիսութիւն կունենայ մի ձեռնադրողը։

Պ. Ձեռնադրողը՝ եւ չէ՛ գիտեր ձեռնադրեալին պրպիսութիւնը ըսելով, չի կրնար արդարանալ. քանզի սրբազան առաքեալն Պօղոս այսպէս կը գրէ իւր Հարազատ Տիմոթէոս աշակերտին. "Ձեռս վաղվաղակի յոյսուք վերայ մի դնիցես, և մի կցորդ լինիցիս մեղաց օտարացն. (Ա. Տիմ. ե. 22)։

Պետրոս ցիկ կը գրէ Յոհան Ոսկեբերան. "Եթէ "եւս (ասէ) լինին յանցանքն, ասէ այնպիսեաց, "զի զոր ոչն ճանաչէին՝ ի մէջ ընծայեցին, և "որ պարշաւանութիւն իմն երևի լինել, նոյն ա-

«ուսուցչաց զբամբասանսն։ Բանդի զիարդ չիցէ
«անտեղի, եթէ ոչ յանապատիկս զոչ գնել
«կամեսցին, բժշկաց ցուցցեն, և յերաշխաւո-
«րաց գնոյն պահանջեսցեն, և ի մերձաւորաց
«անաւր նորա սուրգեսցեն, և յեռ ամենայնի
«այսորիկ՝ և ոչ զարձեալ զլիովին վասահ եղ-
«եալք, և ժամանակեսս բազում ի վերայ խրնդ-
«բեսցեն ի փորձել զնաս։ Իսկ որք մինդամ
«հանդերձեալն իցեն գրել զոչ յայդչափ ապա-
«սաւորութիւնդ, թերեւս կարծեսցէ ոչ՝ եթէ
«անխորհուրդ և վարիպարարդի՝ կամ ի շնորհս
«այլոց, կամ ի շարակնութիւն՝ վկայութիւն
«ասցեն և դատեսցեն, ոչինչ այլ ի ներքս բե-
«բերելով քննութիւն։ Զոր ոչ որ ապա վասն մեր
«արդահատեսցէ յայնժամ, յորժամ որք պար-
«ատան էին վերակացու լինել. և նոքա զլիո-
«վին վերակացուաց ոմանց կարօտք եղիցին։
Զսուն՝ յաղագս քահանայութեանն։

Հ. Ղ. Զ. Եթէ ձեռնադրիչդ անարժան
ելցայ, և քանի մի անձինք վկայեն՝ արժանաւոր է
բանելով, ձեռնադրոցին քով յանցանք կը մնայ մեզ։

Ղ. Ձեռնադրողը գոնէ քաղաքական իրողու-
թեանց վերաբերեալ կանոնով ընդունի վկայից
վկայութիւնը. ինչպէս ասեմք՝ թէ մէկը ծանրա-
գին բեհեզմը կը ծախէ, և գնողը չի գիտէր
արժողութիւնը, եթէ իրեն հարազատ և ան-
կեղծ բարեկամաց մէկը ասէ, թէ այդ բեհեզը

այնչափ արժողութիւն ունի, և իրենք ալ չի հասկըցող ըլլան այն բնութիւն արժողութիւնը։ արդեօք այն մարդը առանց վկայութիւնը կընդունի՞, յայտնի է որ չէ։ Այնպէս եթէ քանի մի անձինք ընծայացուցի մը համար իրը արժանաւոր ըսելով վկայեն, պէտք է ձեռնադրողին նախ տեսնալ, թէ վկաները քահանայական կարգին որպիսութիւնը՝ և պատուոյն արդեօք տեղեակ են, և ապա ինքն թող սկսի քննել այն ընծայացուն։

Եհա այն վկայից և ձեռնադրողին պատիժը վերոյին կուսանիմք Մոսկերեբանէն, որ այսպէս կըսէ առ ձեռնադրողն։ «Դանդի թէպէտ և «զընտրողան կցորդս ունիցի տանջանաց ի մեղան «անդ, այլ սակայն և ուշ ինքն յաղագս այդ որիկ «ապրեսցի ինչ ի պատուհասէն, նա առաւել և «պատժեսցի, վասն եթէ ուշ ի պատճառս մարդ «կոյին ինչ խնդրոյ ընդդէմ քաջախորհուրդ «անուանութեան խրատանց գործեսցին նոքա յընտ- «րութեան անդ։ Օրի եթէ ի գոյն յանցանս «ընդունեսցին երբէք, և գիտելով զանարժանն՝ «զնա ի պատճառս ինչ յառաջ կոչեսցին, զնոյն «օրինակ տանջեսցին ընդ նոսա, այլ թերևս և «առաւել քան զնա՝ որ ուշ ի նենգս ընծայի- «ցոյց գյարմարութիւն։ Դանդի որ վասնզամ «զիշխանութիւն ի ձեռս տայ այնմ, որ խան- «գարելն կամիցի զեկեղեցի, նա ինքն է պատ- «ճառ չարեաց գործոց նորա։ Եւ ճառն՝ յաղագս քահանայութեան։

Հ. ՂԷ. Ի՞նչպէս հաղորդ կըլլայ ձեռնադրողը անարժան ընծայացուին գործակցի մեզացը։

Պ. Ոչն վարդապետն կուսանիմք, որ այսպէս կըսէ։ «Բանզի իշխանութիւն ի ձեռս «ընծայեալս ապիրատութիւն։ Եւ զոր օրինակ՝ որ «զուրն արեալ, մոլեգնեալ ոչն ի ձեռս ասցէ՝ «կամ անմտին, և նա մոլեալ՝ սպանութիւն գործեսցէ նոցա. նա ինքն որ զուրն է՝ ընդ «բամբասանօք է մեզացն. այսպէս և որ զիշխանութիւն պատուոյս այսորիկ ի ձեռս ասայ առն «ապիրատի, բռվանդակ զհուր մեզացն այնոցիկ «և զյանդգնութիւնն յիւրականն կուտեսցէ «գլուխ. Բանզի որ զարմանն շնորհէ, նա և «բռվանդակ ամենայնին՝ որ ի նմանէն շատա«ւելէ, պատճառ է։ Ի նեղբոցն՝ որ ի սուրբն Իգնատիոս։

Հ. ՂԸ. Ամուրբ յարութիւն երրորդ կիւրակէ օրը՝ ինչո՞ւ համար Աշխարհամատեան կիւրակէ կըսեմք։

Պ. Ասուակատիս է արքոյ տաճարին՝ որ յերուսաղէմ, և նաւակատիսն՝ եկեղեցոյ նորոգութիւն ըսելէ, որ և նոյն օրը լրացաւ շինութիւն այն գերասուրբ տաճարին, զոր և Մակարիոս եպիսկոպոս օծեցաւ։ Եւ և ասի ինչպէս որ ամենն տարբաւարաց տօնեցուն երկրորդ օրը՝ մեռելոց կըսեմք, նոյնպէս և այս կիւրակէիս՝ առաջին կիւրակէն եաքը, կը տօնեմք սուրբ յա-

բուն թեան տաճարին բոլոր եկեղեցեաց մօրը տօնը։ Ի՛նչ այս է Աշխարհատարածեան կիւրակէի տօն կատարելոյ պատճառը։

Հ. Ղ. Թ. Ինչո՞ւ համար երբեմն անդամատանեաւ աշխարհիս շորս կողմը կօրհնեմք ՝ի մէջ սուրբ եկեղեցւոյ։

Պ. Հայրմարտական խորհրդով կուսուցանեն մեզ սուրբ վարդապետք այսպէս. Իբր թէ գոհութիւն տալով աստուածային պարգևաց՝ շորս կողմը կօրհնեմք, միաբ բերելով առաւել մերոյ յիսուսի քրիստոսի փրկական անօրհնութիւնը, որոյ շնորհօք բոլոր աշխարհի տարածեցաւ սուրբ աւետարանին քարոզութեան ձայնը ՝ի ձեռն առաքելոց, և մինչև ՝ի ծագս աշխարհի կը քարոզի անոնց վարդապետութիւնը, որ յառաջուց Դաւիթ հոգւով տրբով գուշակեալ էր։

Բ՛դ՝ նախ արևելեան կողմը օրհնելով այսպէս կիմանամք, որ ինչպէս առաւօտեան ժամուն յարևելից կողմանէ արեգական ծագեալ ճառագայթը գիշերային մթութիւնը կը փարատէ մեր վրայէն, և կսկըսիմք այն լուսով արտրածոց գեղեցկութիւնը նկատել. ահա նոյնպէս և ճառագայթ փառացն հօր որդին մեռածին՝ յիմանական արեգանէ հօր աստուծոյ ծագեալ, փարատեաց մեզմէ անաստուածութեան խաւարը, և՝ գեղեցկացոյց աշխարհս աստուածգիտութեան լուսով. ինչպէս որ ինքն միայնաց. Ես

եկի՝ զի զկնանս ունիցին, և առաւել ևս ունիցին»։ (Ցհ. Ժ. 10)։

Արևմտեան կողմը օրհնելով՝ այսպէս կիմանամք, թէ որպէս արևմուտքը ցերեկվան վերջն է և գիշերվան սկիզբը, նոյնպէս դատաստանին օրը այս աշխարհիս աւուր վերջն է, և սկիզբն յաւիտենական գիշերոյ. և ինչպէս ծնանիլն քրիստոսի՝ ի կուսէն՝ և օր դատաստանին պիտի ըլլայ՝ ի մէջ գիշերի, ուստի արևմտեան կողմամբ ցոյց կուտամք՝ թէ նաև անէր կենդանեաց և մեռելոց. և քրիստոնէից թագաւորութիւնը կը յիշատակեմք, որպէս զի իրենք իրենց ստուերը ըլլալը գիտնան, և զորդին աստուծոյ միայն թագաւոր ճանաչեն երկնի և երկրի՝ փառս և պատիւս մատուցանելով նմա, ըստ այնմ՝ «Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք զտէրն»։ (Սաղմ. կէ. 33)։

Հարաւային կողմը՝ որ է ջերմ, միտք բերեմք մարդացեալ յոյն աստուծոյ անճառելի սէրը՝ որ առ մարդկային բնութիւնս մեր, որոյ ջերմութեամբ և իւր սիրովը բորբոքեալ, սկսաւ առաքինութիւնն պատուելներ տալ, և այս խորհրդով երբայն կողմը կօրհնեմք, երկիր, անդաստան, և պտղաբերութիւն տարեւոյս կրանեմք։

Հիւսիսային կողմը օրհնելով, որ է բարձրագոյնն ի չորից կողմանց աշխարհի, կիմանանամք որ անքննելի սիրոյն աստուծոյ բարձրացաւ քան զամ աղգս և ազգինս՝ շնորհական որդիս լինելով մեր հոգևորական ծնունդեամբ աստ բրբ աւազանին։

Հ. Ճ. Ի՞նչ է խորհուրդ մասին՝ որ յետ արձակման պատարագին կը բաշխի ժողովրդոց 'ի մէջ սուրբ և կենդանագործ։

Պ. Որովհետև որ չեն կրնար հաղորդիլ քահանայքն կամ արժանաւորացն հետ սուրբ խորհրդոյն, գոնէ օրհնեալ և սուրբ մասին հաղորդելով. հաղորդ կը լլան շնորհաց այն սուրբ խորհրդոյն, որպէս թէ 'ի փշրանաց սեղանոյ ուտեն աստուծոյ կերակրելով։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ԲՆՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈՑ

ՄԱՍՆ · Գ

ՄԵԿԵՆԻՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՑ Ա ԳՐՔՑ

ՀԱՐՑՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ

Բոլոր ազգերը աստուած է ստեղծեր, ինչո՞ւ համար միայն Իսրայէլի ազգին համար կըսէ, թէ «Եա ստեղծի զքեզ». և այս խօսքն ալ շատ կայ մարգարէական գրոց մէջ. ինչպէս Եսայի, (խգ. 1)։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Այո՛ ամէն ազգն ալ աստուած ստեղծեր է, բայց յատկապէս Հրէից ազգը, քանզի ուրիշ ազգաց նման նէսպէն չի սերնցան, այլ յատուկ ոյ ձեռաց զօրութեամբը։ Քանզի յայտնի է որ Իսրայէլի սկզբնաւորութիւնը Իսահակէն և

Յակոբէն է, որ շատ անգամ սուրբ գրոց մէջ մասնաւորաբար Իսրայէլի ազգը Յակոբ կոչուած է։

Լոգ՝ Աբրահամու որդին Իսահակ՝ ամուսնացաւ Սառայէն ծնաւ բնական կարգէ դուրս, քանզի Սառայի յղանալուն ժամանակը անցեր էր։ (ծն. ԺԸ. 14)։ Լոգ Յակոբ նահապետը՝ որ ի Ռեբեկայ ծնաւ՝ այն ալ ամուսնացեր էր, որ և այս ալ բնութիւնն կարգաւ յղանալու սեղի չունէր։ (ծն. ԻԹ. 21)։ Լոգ որովհետև Իսահակաւ և Յակոբաւ բոլոր Իսրայէլի ազգը յառաջ եկաւ, ասոնք ալ լոկ աբրահամի օրէնքն ծնան՝ և ոչ թէ բնական կերպով, ուստի Իսրայէլի ազգին համար կըսէ, «Եւ սեղմի զքեզ»։

Հ. Բ. Ա՞րդեօք համար կըսուի ըստ պատկերի աստուծոյ սեղծուած. ի՞նչ պիտի ըլլայ ըստ պատկերի աստուծոյ ըսելը։

Պ. Լոյսէս կը պատասխանէ սուրբն Ոսկեբերան, ըստ պատկերի աստուծոյ ըսելը այս է. մինչև յերկինս ի միջ քան զաստուած մեկը չի կայ, ոչինչէս յերկրի գերազոյն քան զմարդ կենդանի մը չի կայ։ Լոգ աստուածաբանք կըսեն թէ մարդն կըսուի ըստ պատկերի աստուծոյ, որովհետև աստուծոյ նմանութիւն ունի ներքոյ և արտաքոյ. քանզի ի ներքոյ ունի նմանութիւն յիշողութեան թեամբ՝ խորհրդածութեան թեամբ՝ և կամքով, «մինչև հրեշտակներն ալ այս նմանութ-

թիւնը ունին։ Եւ արուարձան և ունի նման-նութիւն զոր չունին հրեշտակք, քանզի ինչպէս որդին մրուտին է ի հօրէ աստուծոյ նոյն բնութիւնամբ, այսպէս և մարդն է ի մարդոյ նոյն բնութիւնամբ։ Եւ ինչպէս իշխող է աստուած բոլոր ստեղծուածոց՝ որ ի նեղքոյ ինքեանն, նոյնպէս և իշխող է մարդ այնոցիկ՝ որ ի նեղքոյ ինքեանն. ըստ այնմ՝ «Զամենայն ինչ հնազանդ արարեր ի նեղքոյ ոտից նորա»։ (Սաղմ. ը. 8)։

Հ. Գ. Կայենի մատաղին հաւնար աստուած կըսէ Կայենին, «Ո՞չ ապաքէն ուղիղ մատուցանես, և ուղիղ ո՞չ բաժանես՝ մեղարդ»։ (Ծննդոց. դ. 7)։ Ի՞նչ պիտի ըլլայ այս ուղիղ մատուցանելը, և ո՞չ ուղիղ բաժանելը։

Պ. Ուղիղ մատուցանելը՝ պարզապէս ըսելով, կիմացվի թէ մատուցանելոյդ գործը ուղիղ է. որովհետև պէտք է մարդոյս, երկրի բերքերուն՝ որոնք աստուծոյ տուքովը կը վայելենք, մէկ մասը ի փառս պարգևողին աստուծոյ ընծայել։ Բայց ուղիղ ո՞չ բաժանելս ըսելը այս է, որ երկրի բերքերուն ազէկը իրեն պահեց, և գէշերը աստուծոյ մատուցց։

Հ. Գ. Ինչո՞ւ այս Կայենի մեղքը թողուցիր չունեցաւ։

Պ. Բանզի Կայէն կըսէր, թէ «Մեծ է պատիժ իմ՝ քան զիմ ողորմելոյ զիս»։ (Ծնն. դ. 13)։

Հրով ասել կը կամէր, թէ իմ մեղքս քու ողորմութիւնդ մեծ է. արդ՝ առ ողորմութիւնն աստուծոյ նայելով՝ աշխարհի բոլոր մեղքը ջուրի կաթիլի կը նմանիմ։

Հ. Ե. Աստուածաշունչին մէջ նախատատիպից համար կրսի, թէ «Եւ անուանեաց զանուն նոցա Ադամ, յաւուր յորում արարաւ զնոսա». (ԾՆՆԹՈՅ. Ե. Բ)։ Ո՞ւր կը մնայ արդեօք կոչակցին Եւայ անունը։

Պ. Ադամ բառը՝ առաջին մարդ յատուկ անուն է, և երկրորդ մարդ՝ հասարակ անուն է։ Բայց երկրորդ մարդ Ադամ, մարդ ասել է. և որովհետև մարդ բառը հասարակ է, թէ այր մարդու և թէ կնոջ, նոյնպէս և Ադամ բառը։ Այսպէս ասելն երբայեցական լեզուին՝ բառս Ադամ, դնի Ադամիս, որ ասել է՝ հող ի հողոյ. ուստի Եւայ ասելն ալ Ադամ ասել է, այսինքն մարդ, որ է հող։ Երկրորդ մարդ մի անուն դրաւ աստուած, որ գիտնան կոչակիցներդ՝ թէ մի մարդու պէս են իրարու հետ՝ երկու մարմնի մէջ. և ինչպէս որ անուանով մի են, նոյնպէս պէտք է իրենց հոգւով և կամքով միաւորիլ, և մի հոգի և մի կամք ըլլալ։

Հ. Զ. Ադամին մեղանչելէն ետքը աստուած կը կանչէ ասելով, «Ո՞ւր է». արդեօք ո՞ւր ըլլալը չգիտէր աստուած։

Պ. Բաւ լիցի, ամենայն ինչ յայտնի է իրեն. բայց որ կրսէ, ուր է, ասել կուզէ, թէ է քիզի անմիջ առեղծելի, և օմանարիւան շնորհաց զարդարեցի, այժմ ուր մնացիր, ինչու մի բիկացար այդ աստուածապարգև փառքը։ Այս և յանցանք ունեցող մարդը յայտնի է՝ որ կամենայ երեալ, բայց աստուածային անճառելի ներողութիւնը ամենեւին յետս չի քաշէց իւր մարդասիրութիւնը Աղամայ վերայէն, այլ համարձակութիւնն առի կուտայ, սիրտ կուտայ, ուր է ասել ասել, որ գուցէ այն աղ յանցանքը ճանչնալով, մեղայ գոչէ. սակայն Աղամ արժանի ընել չի արվաւ ինքը զինքը զղջման շնորհաց։

Հ. Ի. Զրհեղեղն եղաքը տապանին մէջէն Նոյ ագռաւ մը թող կուտայ, և կրսէ տուրբ գիրը, թէ "Էլ ագռաւն, և անդրէն ոչ դարձաւ" (Ծննդոց. Ը. 7)։ Այս յետոյ աղաւնին թող տալուն համար կրսէ, թէ՝ "Զգուանալ հանգիստ աղաւնոյն տոյց իւրոց, դարձաւ առ Նոյ ի տապանն" (Ծննդոց. Ը. 9)։ Այդ՝ եթէ ուրեմն չի կար աղաւնիին դադարելու, ագռաւը ուր դադարեցաւ։

Պ. Ագռաւը երբ թող տրվեցաւ, իւր ուզածին պէս իրեն ուտելիք գտաւ ջուրին երեսը, որ էր խզդիսող կենդանեաց և մարդկան մարմինները. բայց աղաւնիին յարմար ընդունելի բան մը տակաւին չէր երեւար, վասն որոյ աղաւնին իւր ինքնցանեցողին քով վերադարձաւ։

Հ. Ը. Լրբ Ղուկա Սոդոմ քաղաքին կերկար, բնչա՞ւ աստուած պատուիրեց հրեշտակաց միջնորդութիւն՝ որ եւսելը չի նայի. (ԾՆՆ. ԺԹ. 17)։

Պ. Հոգս պատճառ կուտայ Կուռնելիոս։ Լսեր՝ Ղուկայ հնազանդութիւնը փորձելու համար։ Երկրորդ՝ չէր ուզէր աստուած, որ պատմողներուն դառնալով Ղուկա, ցաւակից ըլլայ անոնց։ Երրորդ՝ արագ հեռանալու համար։ Չորրորդ՝ չըլլայ, որ Ղուկայ միտքը դառնայ։ Սակայն մեզ ալ պէտք է տրմիլ, մեզաց կամ անզգուշ մեղաւորի վրայ չի նայիլ, քանզի աստուծոյ կամացը դէմ է։

Հ. Թ. Ոմանց կնոջը համար կըսուի, թէ արձան ալի եղաւ. այդ ի՞նչպէս չի հալիր անձրեւէն։

Պ. Ո՞ւ զարմանար չի հալելուն, քանզի ալին անձրեւէն հալիլը՝ բնութիւն գործ է. բայց աստուած այնոր կարողութիւնը ամէր և իշխանէ բնութիւն, ուրեմն աստուած ինչ որ կը գործէ, գործոյն որպիսութիւնը մի հարցներ։ Սա քան զհարցմունքդ աւելի՝ զարմանալի ինչ կայ այդ կնոջը վրայ, քանզի կըսեն ոմանք այսպէս, եթէ կարծր մը կարեւ այդ արձան ալիէն, վաղվաղակի արիւն կը հոսի, և ան ալը կը լցուի։ Եթէ ըսես, արձան է՝ ի՞նչպէս արիւն կը հոսէ, կըսեմ՝ թէ ըստ օրինակի վիմին, որ Իսրայէլացւոց ջուր կը բղխեր Յանապատին. ահա և անկենդան արձանն արիւն կը հոսէ։

Հ. Ժ. Իսրայէլացւոց ազգին գերի մնալուն համար Եգիպտոսի մէջ՝ սուրբ գիրքը չորս հարիւր երեսուն տարի կը գրէ. «Եւ բնակութիւն որդւոցն Իսրայէլի՝ զոր բնակեցան յերկրին Եգիպտացւոց, և յերկրին Քանանացւոց ինքեանք և հայրք իւրեանց, ամք չորեք հարիւր և երեսուն»։ (ԵԼԻՑ. ԺԲ. 40)։ Այս նոյն սուրբ գիրն է, որ կը վկայէ, զոր ասաց աստուած առ Աբրահամ. «Գիտելով գիտասջիր, զի պանդուխտ եղիցի զաւակ քո յերկիրս ոչ իւր իցէ, և ծառայեցուսցեն զնոսա, և չարչարեսցեն, և տառապեցուսցեն զնոսա ամս չորեք հարիւր»։ (ԾՆՆԴՈՑ. ԺԵ. 13)։ Ուշ պիտի ըլլայ այս նեղութիւնը, որ մէկ անգ չորս հարիւր կըսէ, և միւս անգ չորս հարիւր և երեսուն կըսէ։

Պ. Ամենեւին ընդդիմութիւն չի կայ այս իրարու մէջ. երկուքն ալ Մովսէսի բառերն են, մի թէ ինքը իւր գրածին կը նեղհակի, քան լեցի. այլ երկուքն ալ ճշմարիտ են։ Հայտնի է՝ որ Յովսէփ իւր եղբայրներն գերի ծախելեն յետոյ Եգիպտոս, և ինքը յետոյ Եգիպտոսի տէր եղաւ. և սրբութիւն տարին ցորենի համար եկող իւր հարազատ եղբարցը ծանօթութիւն տալու, անոնք ալ գայթին՝ իրենց հոգը խնայեցուցին, որ և այն ալ իւր բոլոր պարագայութիւնը յետոյ եկաւ՝ և հոն բնակեցաւ։

Արդ՝ եթէ Իսրայէլացւոց ազգին Եգիպտոսի մէջ ըլլալն գերութիւնը՝ չորս հարիւր երեսուն տարի իմանան, գիտցի որ Յովսէփայ գերի ծախ-

մելն է սկիզբը. և երբ քորս հարիւր տարի իմանաս, գիտցի որ Յակոբ նահապետին յԵգիպտոս մտնալն է սկիզբը, քանզի Յովսէփ երեսուն տարի յառաջ ծախված էր. ապա եթէ մտադիր քննութեամբ կարդաս սուրբ գիրքը, քաջ կիմանաս ասուց ամենեքեան։

Հ. ԺԱ. Ի՞նչ ցոյց կուտայ Մովսէսի գաւազանը, որ յօձ դարձաւ։

Պ. Կիմացվի Եբրայեցւոց ազգը, որ Յովսէփին ժամանակը իշխանութեան գաւազան ունէր Եգիպտացւոց մէջ. երբ Յովսէփ մեռաւ, Եբրայեցիք Եգիպտացւոց մէջ օձու նման առելի և գարշելի եղան. բայց ասուածային զոյցի բութեամբ վերասին գաւազան եղան Մովսէսի միջնորդութեամբ։

Հ. ԺԲ. Ի՞նչ ցոյց կուտայ Մովսէսի ձեռքը ծոցը տանիլը՝ և բորոտ հանելը, և վերասին բժշկելը։

Պ. Մովսէսի ձեռքը՝ Եբրայեցւոց ժողովուրդը կը նշանակէր, որ երբ սկսան Մովսէսի կամացը հակառակ խոսութեամբ վարիլ, իրբև բորոտ համարեցան. և երբ Մովսէս գիտութեամբ զատուած կաղաչէր անոնց համար, և յանցանքնին կը ներէր, բորոտութենէ սրբուած կը համարվէին։

Հ. ԺԳ. Ո՞ՄԷՍ՝ գեմէն ջուր առնել և յարիւն դարձուցանելը ի՞նչ ցոյց կուտար։

Պ. Կը նշանակէր Եբրայեցւոց արտաքսումն ջուրը թափիլը Եգիպտացւոց անիրաւութեամբը, որ փարաւոն թագաւորին ժամանակը կընէին. որ և յետոյ առաջնոյ վրէժխնդրութեամբը իրենք ալ կարմիր ծովուն մէջ խեղդուեցան։

Հ. ԺԴ. Ո՞ՐՆԻՒՆ՝ որ Մովսէսի երեւեցաւ, որ կը վառէր և չէր այրէր, ի՞նչ ցոյց կուտար նեռկայապէս (իբր այն ժամանակին), և զի՞նչ ապագայապէս։

Պ. Ո՞ՐՆԻՒՆ մէջի կրակը կը նշանակէր աստուած, և մորենին՝ Եբրայեցւոց ազգը, որոնք խրատական գաւազանաւ կը ատնջուին ի ձեռս Եգիպտացւոց, բայց օրէ օր կը զօրանային՝ և չէին ոչնչանար, ինչպէս որ մորենին կը վառէր և չէր այրէր, այս մեկնութիւնը նեռկայապէս է։ Սակայն ըստ ապագային և ըստ խորհրդականն մեկնութիւնն՝ ամենն աստուածարանք և վարդապետք եկեղեցւոյ՝ կիսանան յիսուսի քրիստոսի անունն մեր ամենասուրբ ծնողը ի կուսէն Մարիամայ, յոր վառեցաւ Հուրն աստուածային որդին միածին, և անխախտ պահեցաւ զկուսութիւնն ամենասքանչելի ծնունդին իւրոյ։

Հ. ԺԵ. Հին օրինաց մէջ զգեստուց մէկը տախտակ զատատանի կըսէր, որ քահանայապետը կուրծքին վրայ կը կրէր՝ որ մեծագին բան մը էր, և վրան գրել տրված էր առաւած, յանդիմանութիւն և ճշմարտութիւն. ի՞նչ մեկնութիւն ունին այս երկու բառը։

Պ. ԽԱ. Եօթանասուն թարգմանիչքն՝ և թէ մեր թարգմանիչքն այս մեկնութիւնը կուտան, այսինքն յանդիմանութիւն, կամ յայտնութիւն կամացն առաւծոյ, և ճշմարտութիւն ապագայից և գաղտնեաց, որ առաւած կը յայտնէր քահանայապետին՝ այն խորհրդաւոր տախտակին միջնորդութեամբը, անոր համար հրաման եղաւ գրել այդ երկու բառը այն տախտակին վրայ, և միշտ կուրծքը կրելու վրայ ունենալ՝ երբ 'ի սրբութիւնն կը մտնայ առաջի տեառն։ Խարոյակնատակ տրվիլ պէտք է և մեր քահանայից և քահանայապետաց՝ միշտ սրտին մէջ ունենալ զյանդիմանութիւն հրամանացն առաւծոյ՝ իրենց պաշտօնին նայելով, և ճշմարտութեամբ գործ ածել թէ իրենք իրենց, և թէ իրենց ժողովրդոց վրայ։

Հ. ԺԶ. Ո՞ ասեալ մարենիին համար ներ-կայապետս և ապագայապետս և խորհրդապետս մեկնութիւն տրվիր. եթէ կարելի է այլաբանօրէն մեկնութիւն մի և ս տա՞ր։

Պ. Յայտնի կուտուցանէ առաքն Գրիգոր

աստուածարան։ «Ի առեալ մարմնեալս՝ զի՞նչ
«ինչ այլ խմացուք , կամ թէ զի՞նչ այլ եցոյց
«մեզ աստուած , եթէ ոչ զի յայտնանէ ժողո-
«վրդենէ երանելոցն էր՝ որ ՚ի հրամ աստուա-
«ծութեան , զգաւառն մարմնոյ մերոյ , իբրև զգ-
«փուշս մարմնեալս ընդունելոց , և զանձամբն
«գոյացութիւն մարդկութեան մերոյ՝ և ս ինք-
«եան բոցուամ աստուածութեան պահելոց։
Ա՛յսմիկն ինչպէս մարմնին կը վառէր և չէր հատ-
նէր , նոյնպէս քրիստոսի աստուծ մարդկային բ-
նութիւնը մեզմէ , որ աստուածային անձին հետ
միաւորեց , մարմնաւոր փշի նման երկաթ մարդկայ-
ին բնութիւնը , չի ոչնչացաւ ՚ի հրոյ ճաճանչութեան։
Ա՛յլ անհասանելի զօրութիւն՝ գործ ամենա-
հրաշ , որ նախ՝ զգալի օրինակաւ ցոյց կուտայ ,
որ յետոյ լուսաւ ժամանակներս չի կասկածինք։

Հ. ԺԷ. Փարատումն առջև Մովսէսի լուսաւ
պատանի լիքին ներքուն Համար՝ մէկ երկու հարցմունք
առնենարուս պատասխանս , նախ՝ պատանի լիքն ի՞նչ
է՝ այն կուզեմ իմանալ։

Պ. Պատանի լիքն է յաղթող ամենայն զօրու-
թիւն բնութիւն և ամենայն բնական պատնա-
ւոց և կարողութիւն մարդկան և հրեշտակաց։
Ա՛յս սահմանէն իմանալ պէտք է մեզի , գործ մի՝
կամ հնարք մի՝ որ արհեստն ճարտարութիւնքն ,
կամ հրեշտակաց զօրութիւնքն՝ կամ բնութիւն
հեղինակութիւնքն կրլլայ , պատանի լիքն չ-
ամիր ։

քանզի սրանչելիքն այն է, որ ասոնց ամենուն կարողութիւնն գերազանց պիտի ըլլայ, մինչև որ ըսես՝ թէ մեռեալ աստուծոյ է նման, ահա այս է կատարելապէս գործ սրանչելեաց։

Հ. ԺԸ. Այս բաներդ հարցնելը հարկ եղաւ, կախարդներըն՝ կամ թէ գեներըն՝ որ կախարդաց ակը են, զարմանալի գործեր կրնան գործել և ցուցնել, անոնց սրանչելիք շրջանքը։

Պ. Որոմեան ըսի թէ սրանչելիք աստուածային կարողութեան գործ են, ապա գեր սրանչելիք չեն կրնար գործել. բայց մարդկային մտաց զարմանալի բաներ կրնան. ինչպէս առ աչք բան մը ցոյց կուտան շատերուն՝ որ իրականապէս չէ. ըսենք թէ առ աչքի մէկին գլուխը կը կտրէ՝ և վերատին տեղը կը դնէ. եթէ կտրած գլխոյն տեղը իրաւ ցրնէ մեռաւ՝ և յետոյ կենդանացաւ, հաստատ սրանչելիք ըլլալուն։ Այս եթէ սուտ և առ աչքի ըլլալը կուզես հաստատել, դու կտրէ այն մարդուն գլուխը՝ թող այն կախարդը կենդանացնէ. յայտնի է որ չի կրնար։

Բազմ արուեստ ուղղախոհութիւն կրնան, որոմեան թեթեթև և պարզ հոգիք են հրեշտակաց նման, ինչպէս որ Սեմեան կախարդը յոգը հանեցին արուեստութեամբ մը՝ բայց վար ձգելէն ետքը՝ կարելանալնին ամենիւ եղան։

Անկենդան իրաց մէջ կը բնակին և խօսել կուտան՝ ինչպէս կռոց մէջ։ Արդոյ կամ կեն-

գանելի մարմին կառնեն, և կը պրարտին գիշերը՝ որ երկիւղ ասն մարդոց, և իրենց ծառայող կախարդներուն ժողովուրդը շատցընեն՝ նուա-խայ գրել տալով։

Ասոր կայնն կիրքը կայլայլեն, ըսելով թէ երկու սիրելեաց մէջ թշնամութիւն կը ձգեն։ Անեկան պատճառաւ ներկայանալ կուսան մէկ գործի մը արագ ապէս. ինչպէս ըսելով՝ թէ բնական պատճառաւ՝ այսինքն ասրերաք շատ ժամանակի կարօտ եղած բան մը՝ որ յառաջ գայ, այն ասրերաց զօրութիւնը սատակացընելով՝ քիչ ժամանակի մէջ յառաջ կը բերեն։

Ասոնց բոլոր հնարքները ոչինչ կրլան ճշմարիտ քրիստոնէին առջեւ, երբ միշտ իւր հոգեւորական զէնքովը վառեալ և պատրաստ կրլայ. ինչպէս որ կը հրամայէ Դաւիթ. «Ընկցին ի կողմանէ քում հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին» (Սաղմ. զ, 7)։

Հ. ԺԹ. Երբ փարաւօնի կախարդները իրենց գաւազանները գետինը ձգեցին՝ այն գաւազանները օձ դարձան. առուք ճշմարիտ օձ էին, եթէ սուտ։

Պ. Իմանք սուտ երևմունք կը համարին, և ոմանք ճշմարիտ էր կրսեն. քանզի այս պատճառը կը խօսին՝ եթէ սուտ ըլլար, ապա Աստուծոյ օձը՝ որ այն օձերը կրլլեց, այն ալ սուտ կրլլար։ Երբ

եթէ ըսեն՝ ի՞նչպէս ըրին, ահա մի՛ ըրի ըսած պատասխանէս խնայիր. որովհետև՝ ի բնական պատճառաց օձ կը լայ, բայց ժամանակի կարօտ է. գեր ը նոյն պատճառաց զօրութիւնը սասկացնելով՝ ապագ մը ընել կուտան, ինչպէս մի՛ ը ըսի. կամ ուրիշ կերպիւ։

Հ. Ի. Ուրիշ կերպիւ ըսածդ ի՞նչպէս է։

Պ. Հարցնի՛ Նեմեն սասուսածայնին զօրութիւն չի կրցին գաւազանին փայտն ոչ՝ գոյացութիւնը՝ ի գոյացութիւն ճշմարիտ մարմնեն ոչ՝ օձի փոխարկել. այլ գիւաց միջնորդութեամբ ուրիշ տեղ՝ կենդանի օձեր բերել արին, և իսկոյն այն գաւազանեն ը անտես ընելով՝ անոնց տեղը կանգնեցուցին։ Այսպէս խնայիր այլ մեւս կախարդական գործքն ինին, որոնցմով իբր Նեմանեցան Մովսէս։

Հ. ԻԸ. Ինչո՞ւ սասուսածայդչափ թոյլատրութիւն կրնէ կախարդներուն, որ այդ զարմանալի բաները կրնեն։

Պ. Խնայելու համար թէ՝ որչափ մոգութիւն արհեստը կրնայ աշք կապել. և սա կախարդները Մովսէսին յաղթելով՝ յայտնի ըլլայ, որ Մովսէսի գործը սասուսածովէ՝ և ոչ թէ արհեստով։ Իսկ զի ցոյց տայ՝ որ միշտ չարն ը բարուց հակառակ են, բայց բարուց հաստա-

քով՝ ուշինչ կը լան շարաբերին հնարքները. և վերջապէս սատանային զօրութեան պատիւը կախարդաց անգամ փարաւոնի և Եգիպտացւոց առջին խոստովանեցընել տայ, թէ մատն սատանայ է այդ։

Է. ԻԲ. Ո՞ւրեմն և ի՞նչ էին Եգիպտացւոց պատիժները, որ Մովսէսի ձեռքովը կրեցին։

Պ. Տասն էին։ Առաջինն՝ ջուրին յարիւն փոխելն էր։ Երկրորդ՝ գորտերուն գալն էր։ Երրորդ՝ մուն, այսինքն սիսրիանէին էր։ Չորրորդ՝ շանատանձն էր։ Հինգերորդ՝ կենդանեաց ժանտամահ և սատակումն էր։ Վեցերորդ՝ մարդոց և անասնոց վրայ պարար՝ այսինքն խոպաս ձրխ, և ուռուցեալ վէրքերն էր։ Եօթներորդ՝ անհնարին որոտումն՝ կարկուտ՝ և փայլատակումներ էր։ Ութերորդ՝ մարախն էր։ Իններորդ՝ երկրօրեայ թանձրամած խաւարն էր։ Տասներորդ՝ անդրանկաց կոտորումն էր։

Է. ԻԳ. Ո՞ւրեմի ժամանակ սկսեց այդ պատիժները։

Պ. Կարդանելիս կրկ՝ թէ քսան և եօթն օր սկսեց։

Հ. ԻԴ. Այդ ըսած պատիժներուդ մէկը ջուրին յարիւն փոխուիլն էր, որ փարաւօնի կախարդներն ալ ըրին, ինչպէս որ կը վկայէ սուրբ գիրքը. եթէ Եգիպտոսի բոլոր ջուրերը յարիւն փոխուեցան. ի՞նչ ջուր էր՝ որ կախարդները յարիւն փոխեցին։

Պ. Զանազան մեկնիչք՝ զանազան մեկնութիւն կուտան այդ հարցմանդ. բայց Օգոստինոս կըսէ՝ թէ Գեսեմայ երկիրէն բերին, որ Եգիպտոսի մօտ է։ Կրուանելիոս կըսէ՝ թէ Մովսէս տրվաւ այդ ջուրը կախարդներուն, քանզի Եբրայեցւոց ջուրը յարիւն փոխված չէր։ Դ. ինչպէս որ միւս ինն պատիժներուն հաղորդ չէին Եբրայեցիք Եգիպտացւոց հետ, նոյնպէս ջուրին յարիւն փոխելուն ալ հաղորդ չեղան։

Հ. ԻԵ. Ինչո՞ւ փարաւօնի խղդըված ծովուն՝ կարմիր կըսվի։

Պ. Երբայկերբայ կը խօսին զանազան անձինք, բայց մեզի հաւանականը այս է որ, այն ծովուն յատակի աւազը կարմիր է, անոր համար կարմիր կըսվի։ Դ. ամանք կարմիր ըսվելուն պատճառ կուտան՝ թէ այդ ծովուն մէջ բուսա (մերձան) կը բուսանի։

Հ. ԻԶ. Ամպերէն սիւնը՝ որ առաջնորդ էր զաւ Իսրայէլացւոց. երբ Եգիպտոսէ ազատե-

ցան՝ և առեալաց երկիրը կերթային, ինչուն հա-
մար ցերեկը ամպի նման կերևար, և գիշերը
հրոյ նման։

Պ. Լոյսդ կը վարդապետէն՝ թէ ցերեկը՝
այսինքն՝ ի կեանս արդարոց ամպի նման հովա-
նաւորութիւն ունի քրիստոս. բայց գիշերը՝ այս-
ինքն՝ ի կեանս մեղաւորաց է իբրև հրեղէն և
զարհուրելի։

Հ. ԻԷ. Ինչու թող չէր տար աստուած Եբ-
րայեցւոց՝ յերկնից իջեալ մանանայն շատ ժող-
վել, այլ օրվան բաւականին չափ ժողվել հրա-
ման ըրաւ։

Պ. Լոյս պատճառաւն էր՝ որ աստուծոյ նա-
խատեսութիւնը կապվին, և տրվին՝ թէ ինքն է
օր ըստ օրէ կերակրողը. և չի հոգան իրենց տա-
բեկան կամ շաբթվան առաւելքը. ինչպէս որ և
մեք տրվելցանք հանապազորդական հացը խընդ-
րել աստուծմէ։

Հ. ԻԸ. Ի՞նչ է աստուածային այս հրամանին
մեկնութիւնը՝ սեղանի շինութիւն համար, որ
կրսէ «Սեղան հողեղէն արասջիք ինձ. . . ապա-
եթէ սեղան ի քարանց առնիցես ինձ, մի շինես-
ցես զնոսա կոփածոյս (չէրթնալ տաշած)» (ԵԼԻՑ.
Բ. 24)։

Պ. Հին բարեառնեաց մեկնութիւնքն մէկ

զի ձգելով՝ ըստ Կոռնելիոսի ասելոյ, թէ Սե-
զան 'ի հոգոյ կամ յանուաշ քարանց արարցեա
ինձ. քանզի Եբրայեցիք զէպ 'ի կռապաշտու-
թեան կողմը զիւրաւ կը սահէին, անոր համար
ձուլածոյ կամ տաշած կամ ձարտարու թեամբ
շինեալ սեղան չի ուզէր, որ կռապաշտութենէ
հեռի մնան։ Այս հաւանական չորս պատճառ
կը խօսին։

'Ալտար՝ հին կտակարանի պատարագին կամ
զոհին՝ կոպիտ և ազեղ էին, այսինքն միայն իրը
օրինակ էին պատարագին յետոյ քրիստոսի, որ
'ի սեղան խաչին միանգամ արիւնամատաղ եղև։

Եբրայեցի՝ որ ցոյց տար, թէ որքան խիստ և
անուաշ պիտի ըլլար՝ քրիստոսի նոյն սուրբ սե-
զանը, այսինքն սուրբ խաչը։

Այրարդ՝ անկարգ և անկանոն ընել կուտայ,
որով իմացնէ հին պատարագին անհիմն ըլլալը,
մանաւանդ ժամանակէ ետքը խափանվելը։

Զորրորդ՝ ինքն ասուած՝ որ ընդունողն է
այն զոհին, առաւել 'ի զոհն հայի քան թէ 'ի սե-
զանն, և առաւելապէս անոնց մաքրութեանը և
արբութեանը ուշէր հաճիլ՝ քան թէ սեղանին
յարմար կամ անյարմար ըլլալուն։

Հ. Ի Թ. Ի՞նչ նշանակութիւն ունին այս չորս
նիւթերը, բեհեզն, կարմիրն, ծիրանին, և կա-
պուտակն, որոնցմէ եղաւ հին խորանը։

Պ. Կուռնելիոս կըսէ՝ թէ այս չորս նիւթքը՝ չորս տարրերքը և բոլոր աշխարհը կը ցուցուցնեն, որոյ օրինակ էր հին խորանը. քանզի բեհեզը կը ցուցուցնէ հողը. ծիրանին՝ ծովը. կապուտակը՝ օդը. կարմիրն՝ հուրը։ Նմանք կը նշանակեն աստուծոյ հանդիսաւոր հութիւնը, և օրինակ խրատու է մեզի, թէ ինչպէս յարգութեամբ և մաքրութիւն մտնալ պէտք է 'ի խորանն և 'ի տաճարն։

Հ. Լ. Հին խորանը՝ ինչո՞ւ սուրբ գրոց մէջ Խորան վկայութեան կըսվի։

Պ. Կուռնելիոս կըսէ՝ թէ խորանը կը պարունակէր օրէնքը, որ էր վկայութիւն աստուածային կամաց և աստուածային ուխտի, ասոր համար Խորան վկայութեան կըսվէր։

Հ. ԼԱ. Մովսէս երբ Սինէական լեռը աստուածախօսութեան գնաց և ուշացաւ, Իսրայէլացիք ժողովրդեան Ահարոնի վրայ, և ըսին թէ՝ Մովսէս գնաց չեկաւ, մեզի աստուած մը ըրէ՝ որ պաշտենք. և Ահարոն ալ ոսկերչին զարդերնին ուզեց, և ձուլածոյ ոսկի մը շինեց՝ որ պաշտեն, ինչո՞ւ ուրիշ կենդանիի կերպարանքով բան մը չի շինեց։

Պ. Հայտնի է որ Եբրայեցիք Եգիպտացւոց հետ սորված էին, և Եգիպտացիք կուռք կը պաշտէին, և պաշտած կուռքերնուն անունը Սարա-

պիս կամ Սերապիս էր. այս կուռքը եգիպ կերպարանքով էր, որոնք Եգիպտոսի մէջ շատ տեսած էին, վասն որոյ եգիպ կերպարանքով շինեց։

Հ. ԼԲ. Ո՞ղղակի՞ չէ՞ Ահարոն այդ գործոյն համար։

Պ. Իւր ուղղակիով չի գործեց Ահարոն այդ գործը՝ այլ երկիւղէն, եթէ քիշ մը դէմ խօսած ըլլար՝ պիտի քարկոծէին. և ինքն ալ իւր իշխանական պատիւը չի կրցաւ գործածել, ուզեց որ հնարքով մը արդիւէ այդ գործը. և այս պատճառաւ ըսաւ՝ թէ ձեր կանանց զարդերը բերէք, որ ձեզի ձուլածոյ աստուած մը ընեմ։ Որովհետև կանանց զարդը և ոսկեղէն ինչքը իրենց հոգիէն աւելի է, վասն որոյ էրիկ մարդոց ըսաւ՝ թէ կնիկներնուդ ոսկեղէն զարդերը բերէք, իբր այս մտօք՝ թէ կնիկները իրենց զարդերը չեն խնայեր։

Իսկ Ահարոն մտածեց ձուլածոյ շինել, որ մինչև գաղափարը շինելն՝ և ոսկեղէն զարդերը հաշին, Մովսէս կուգայ լեռնէն, և ինքն ալ կազատի։ Բայց այդ կարծիքները ոչինչ եղաւ, քանզի այնպան կուապաշտութեան ախտը տիրեր էր Եբրայեցւոց սրտին վրայ, որ չէ՛ թէ իրենց կանանց զարդը, այլև բոլոր ինչքերնին եթէ ուզէր՝ պիտի տային։

Շինած կուռքն ալ եգիպ կերպարանքով շինելուն՝ այնպէս կը կարծէր, թէ որովհետև

Եգիպտացիք այդ կերպարանքով կուռք ունէին, որ ոչ պատիժները կրցաւ արգիլել, և ոչ ալ փարաւօն կարմիր ծովէն ազատել, և գուցէ Եբրայեցիք ալ այդ միտք բերելով՝ կամք չի տան այդպիսի կուռքի։ Այց ասոնց բոլորը ընդունայն եղաւ, և Աստուծոյ ակամայ և ակարութիւն մեզանչեց, և յետոյ ըստ օրինացն արարողութիւնց քաւեցաւ 'ի մեղաց։

Հ. ԼԳ. Ո՞ովսէս երբ տեսաւ ժողովուրդը կռապաշտութիւն մէջ ինկած, ինչո՞ւ լեռնէն բերած աստուածային պատուիրանաց երկու տախտակը՝ բարկութիւնամբ մը կոտրեց։

Գ. Յոգէս կըսեն աստուածաբանք, թէ 'ի սուրբ նախանձուէ շարժեալ՝ անոնց հրապարակական ամբարշտութիւնը գէմ՝ արժանի չի տեսաւ, որ աստուածային օրէնքը այնպիսի մոլեգնեալ և արբեալ ժողովրդեան բերէր։

Հ. ԼԴ. Յն որմէ ինչո՞ւ Մովսէս այրեց, և խարեց, և ջուրին երեսը ցանեց, և խմցուց Իսրայէլացւոց. (ԵԼԷ. ԼԲ. 20)։

Գ. Յրհամարհելն ցոյց տալու համար իրենց պաշտած կուռքը. և խարեալով խմցուց, որ յետոյ տեսնան իրենց աստուածին ինչ ըլլալը, և գիտնան անոր անզօրութիւնը և անարգութիւնը։

Հ. ԼԵ. Երբ Իսրայէլացւոց ազգը Եգիպտոսի գերութիւնէն ազատեցաւ, քառասուն տարի անապատին մէջ մնաց, ուսկից հանգերձ կառնէր կը հագնէր այնքան տարիին մէջ։

Պ. Եգիպտէն ինչ հանգերձով որ ելան՝ անով մնացին, քանզի այն քառասուն տարիին մէջ հագերձնին չի հիներցաւ սաստուածային նախախնամութեամբ, ինչպէս որ կը վկայէ եւ նոյն նախամարգարէն Մովսէս, որ կըսէ իւր ժողովրդոցը. «Եւ ահա էած զձեզ զքառասուն ամն ընդ անապատս, ոչ հնացան ձորձք ձեր, և ոչ մաշեցան կօշիկք յոտից ձերոց» (Բ, Օրէնաց. ԽԹ. Ճ)։

Հ. ԼԶ. Իսրայէլացւոց ազգին վրայ Մովսէսի ուղղած երախտագիտութիւնը Համար Դաւիթ մարգարէն կը գրէ, «Ի վիմէ մեղրս յագեցուցից նոցա». սուրբ գրքին մէջ տեղ մը գրված չէ, թէ Մովսէս վէմէն մեղրս վարցուց. Դաւթի այս խօսքը ինչպէս իմանալ պէտք է։

Պ. Յայտնի է կըսէ Յովհան ոսկիբերան, թէ ժողովուրդը երբ անապատին մէջ ծարաւ մնաց, յայտնի է՝ որ աստուծոյ հրամանաւ Մովսէս ջուր քղեցուցց ապառաժէն։ Ժողովուրդը կարի ծարաւ և ջուրի կարօտ ըլլալով՝ յանկարծ այն պաղ և պարզ ջուրին վրայ որ թափեցան, այնքան անոյշ եկաւ իրենց, որ ըսին՝ թէ այս ջուր չէ, այլ մեղր է, վասն որոյ մարգարէն կըսէ՝ «Ի վիմէ մեղրս յագեցուցց նոցա»։

Հ. ԼԷ. Մովսէս մարգարէին պատկերը երբ կը նկարեն, գլուխը երկու եղջիւրի նման բան կը դնեն, այս ի՞նչ նշան պիտի ըլլայ, կամ ի՞նչ միտք է այդ եղջիւրները։

Պ. Ըսելայք կըսեն, թէ երբ Մովսէս Սինեական լեռնէն կիջնար օրինաց տախտակները բերելով, լուսեղէն երկու եղջիւր կերևար ճակատը. իբր բերած օրէնքը խեթիկիչ (պույնուզով զարնող) և ծառայեցուցիչ էր. ուստի ահ և երկիւղ տալուն նայելով՝ եղծական էր, և անդրադարձելի էր աւետարանական քաղցր և համեղ շնորհաց օրէնքին, անոր համար և Քրիստոս կըսէր, "Լուծն իմ քաղցր է, և բեռն իմ փոքրիկ է։

Հ. ԼԸ. Ո՞ովսէս մարմնոյ բորոտութենէ սեպհական եղած արարողութիւնները աւանդելէն ետքը, կրսէ և հանդերձի բորոտութեան համար, "Եւ ձորձ՝ յորում լիցի ապած բորոտութեան, և այլն. (ՂԵՒՏԱՑՈՅ. ԺԳ. 47)։ Ո՞ատմինը բորոտութեան կը պատահի, բայց հանդերձը ի՞նչպէս կը բորոտի։

Պ. Ամանք իմացան, թէ հանդերձին բորոտութիւնը ցեցին կերածն է, բայց անյարմար է այդ մեկնութիւնը, քանզի ցեցին կերածը միայն բրդեղէնը կըլլայ, և հանդերձ ըսածդ ուրիշ նիւթերէ ալ կըլլայ, և Մովսէսի խօսածները ցեցի կերած հանդերձի համար իմանալ չի վայլէր։

Յարմար մեկնութիւնը այս է՝ որ բորոտելալ

հանդերձ ասելով, թորոտ անձանց հանդերձը պիտի խմանամբ՝ մանաւանդ շապիկներին. քանզի հոտած շարաւ մը՝ կամ ուրիշ խիժային ժանտ կծու հիւթ մը, որ թորոտին մարմնէն կը վազէ, և կը տարածի հանդերձներուն վրայ. այն ժամանակը Մովսէսի ըսած գոյները կը ցուցուին թորոտին վրայ՝ կարմիր՝ կանաչ՝ դեղին, և կծվութեամբը հանդերձը կուտէ և կը մաշէ։ Եթէ լուացվի այն հանդերձը՝ հազիւ կը պատռի, և վրայի արատները դժուարաւ կը մաքրին։ Լաւի կը հրամայէ Մովսէս՝ այնպիսի տպաւ կանեալ հանդերձը այրել, որ չըլլայ թէ մէկը հագնի և թորոտի. քանզի օգուտ չունի թորոտաւորին՝ եթէ դեղ ընէս, քանի որ այն շարաւոտ հանդերձը վրան է։

Այս կանոնը թժիշկներն ալ կը գործածեն, երբ այսպիսի ախտաւորի կերթան, նոր հանդերձ կը հագցուցնեն, որ չըլլայ թէ հին հանդերձէն ախտը անդարձ ըլլայ։

Հ. Լթ. Անանց թորոտու թիւը քանի՞ պիտի ըլլայ։

Պ. Սմանք՝ ի գիտնոց փիլիսոփայօրէն կը մեկնեն տանց թորոտութիւնը այսպէս, թէ պատին քարերուն անյարմար շարքէն կըլլայ, և պատճառն ալ այս է որ՝ ապի և թորակի և ծծումբի մասնիկներն են՝ որ օդոյն խոնաւութեամբը կը թանձնան, և քարին բարակ ծակուածը մէջ միջոցներս վազելով, կուտեն կը մաշեն քարին գոյա-

ցուցանեն մանուշիկ յոդուածներդ, որոնցմով քարին ամուր կառուցմանդդ աւագն պէս կը փրշրին. և անկից կանաչ՝ կարմիր արատներ կը տարածին պատին երեսը, ինչպէս բորոտութիւնը մարդոյն մարմնոյն վրայ։ Այդր պատին երեսի ծեփը թափիլ կըսկըսի, և գէշ բորակը շոգիներ այն պատէն դուրս կուգան այն տունը մէջ, և օդը ապականելով՝ կերպ կերպ ախտերու պատճառ կը լլան այն տունը կամ սենեակին մէջ բնակողներուն։ Այս եթէ այսպիսի տուներուն հոգ չի տարուիր՝ և շատ մնայ, տուներդ վտանգի մէջ կըլլայ, և այն խոնաւութեան շատութիւնը՝ մէջը եղողներուն բարին ալ կապականէ։

Դարձ տուրը գրոյն երեսին մեկնիչներին տաներ կրանն, թէ ինչպէս Իսրայէլացւոց նորանշան պատիմներդ, նոյնպէս և այս մանաւորապատիմ մը կը համարին աստուծմէ իրենց վրայ մեղքերնուն համար։ Այս մեկնութեամբ Մովսէսի խօսքը կը հաստատուի, որ 'ի գիրս աստուծոյ կըսէ, "Յորժամ մտանիցէք յերկիրն Քանանացւոց, զոր ես տայց ձեզ 'ի տունս երկրին ըստացուածոց ձերոց" . (Ղեւտացւոյ . ԺԴ . 34)։

Այս այն տանց բորոտութիւնը ուրիշ թուանաւորպիսութեամբ էին, կամ այժմեան փիլիսոփայից ըսածին պէս այնպիսի մանեկուներ էին, որ ոչ միայն պատերուն մէջ, այլ և տունը բնակիչներուն և ընչից կրնան ապականութիւններին նեղդարձել, և անով փոխադրական ախտերը պատ-

հաւել. անոր համար հրամայեց Մովսէս, առնել
'ի հիմանէ քակել, և այն քակածը բանի մը չի
գործածել՝ ոչ քարը և ոչ փայտը։ Ի Երջապէս
այս ասոնց բոլոսոս թիւնը պատիժ կը համարիմ,
և ոչ բնական ինչ։

Հ. Խ. Մովսէս և Ահարոն ասոնց առջին
նախապատիս էին Իսրայէլացւոց ազգին մէջ։
Այլ ժողովուրդը ճանապարհին զանազան մո-
լութիւն գործելով, Մովսէս և Ահարոն չի կրցին
մնալ Աստուծոյ երկիրը. ասոնց յանցանքը ի՞նչ
էր, ինչպէս արժանի չեն զուն։

Պ. Այդ ճանապարհորդութեան մէջ երբ Իս-
րայէլացիք Կադէս եկան, ջուր չի գտնուելուն
համար արտունջ ըրին՝ ըսելով, թէ քերիք մեզի
այս անապատ տեղը, որ ծարաւ պիտի ջարդէք.
Մովսէս շատ բարկացաւ ժողովրդոց, և անոնց
ապերախտութիւնը համար կասկածեցաւ, թէ
կամք չունէր աստուած իրենց ողորմիլ. վասն որոյ
երկրպագութեամբ ըսաւ, "Մի թէ 'ի վիմէս յայս-
մանէ հանիցեմք ձեզ ջուր։ այսպէս ըսելով
իր խնայութիւնել կուզէր, որպէս թէ աստուած
իրենց հետ չէր այն ժամանակը։

Այլ աստուած ըսաւ Մովսէսի և իւր եղ-
բօրը, որ խօսքով հրաման ընեն ապառաժ քարին՝
որ ջուր բղխէ, բայց չի խօսեցան, այլ Մովսէս
միանգամ գաւազանաւ քարին զարկաւ՝ և ջուր
չի լաւ։ քանզի աստուած ուշացոյց իւր պատիժ-

ելքը՝ իրենց երկմտութեան պատճառաւը, ինչ-
պէս և սուրբ հարք կը վկայեն. ապա հարկ ե-
ղաւ, երկրորդ անգամ և զարկաւ Մովսէս գա-
ւազանաւը այն քարին, և առատ ջուր բղխեց։

Այս երկրայութիւնները՝ համար՝ որ ժո-
ղովրդեան առջին ցոյց տրին, և աստուծոյ հրա-
մանը բաժին պէս չի կատարելուն համար, այ-
սինքն ապառաժ քարին հրամանն չընելուն հա-
մար՝ Աւետաց երկիրը մտնալու արժանի չեղան.
և սուրբ գիրն ալ կը վկայէ՝ ի գլխաց աստուծոյ
այսպէս. «Խօսեցաւ ամէն ընդ Մովսէսի և ընդ
Ահարոնի՝ և ասէ, յաւելցի Ահարոն առ ժողո-
վուրդ իւր, զի մի մտցէք յերկիրն՝ զոր տուս
որդւոցն Իսրայէլի, քանզի բարկացուցէք զիս՝ ի
վերայ ջուրցն բամբասանաց»։ (Թուոց. ի. 24)։

Այլ ըստ խորհրդական մտաց, որովհետև
Մովսէս և Ահարոն ոչ իրենք մտան Աւետաց
երկիրը, և իրենց ձեռքովը Իսրայէլացւոց ազգը
մտաւ, ասոնք երկու եղբայր կը նշանակէին հին
օրէնքը, որ չի կրցաւ Աւետաց երկիրը՝ այսինքն
երկնից արքայութիւնը տանիլ իւր ժողովուրդը,
որովհետև այդ շնորհը նոր օրինաց յատկացեալ
պահեալ էր յիսուսն քրիստոսի ձեռքով, որոյ
օրինակ եղև Յեսու։

Հ. ԽԱ. Մովսէս երբ յետին օրհնութիւնը
տրաւ ժողովրդոց, սկսեց Իսրայէլի երկոտասան
ցեղը մէկիկ մէկիկ անուանով յիշել. Նախ Ռու-

բենէն սկսեց այսպէս ասելով, «Կնցցէ Ռուբէն և մի մեռցի, և եղիցի թագաւոր թուոյն։ (Բ, Օրէնից։ ԼԳ։ 6)։ Յակոբ նահապետ այս երկոտասան ոգեաքը երբ օրհնեց, Ռուբէնի համար ասաւ։ «Ռուբէն անդրանիկ իմ, դու զօրութիւն իմ և սիրզբն որդւոց, խաւսութեամբ գնացեր, և խաւսութեամբ յանդգնութեան թշնամանեցեր, իբրև զջուր մի եռացիս, զի ելեր յանկողինս հօրդ։ յայնժամ պղծեցեր զանկողինն՝ յոր ելեր։ (քանզի շնացեր էր Բաղղայի հետ՝ որ իւր հօրը հարճն էր)։» (Ծննդոց։ Լե։ 22)։ Լուս անէծքը տես Ծննդոց, (Գ-Ը, խԹ։ 3)։ Արդ՝ շատ զանազանութիւն կերևայ Յակոբայ և Մովսէսի խաւսքերուն մէջ Ռուբէնի վրայ, ի՞նչպէս պէտք է իմանալ։

Գ։ Այնենք զանազանութիւն չի կայ երկուքին ալ խաւսքին մէջ։ մի և նոյն է Յակոբայ և Մովսէսի օրհնութեանց միտքը։ Մովսէս կըսէ՝ Կնցցէ, օրհնութիւն մի իմանար, այլ ցնորք չի պակասիր համար կըսէ։ «Եւ եղիցի թագաւոր թուոյն» ասաւ, որով իմացուցանել կուզէ, թէ թագաւորութիւն ցնորք նորա եղիցի թուով, այսինքն շատաւոր համրանքով, որ ասել կուզէ՝ թէ չի շատնայ՝ չի աճի՝ այլ միայն մնայ։ Այնպէս և Յակոբայ խաւսքը առ որդին իւր Ռուբէն, թէ «Իբրև զջուր մի եռացիս», իբր ասել կուզէ՝ թէ ջուրի պէս չի եռաս, այլ ինչ եւ նէ՝ նոյն մնաս։ Այսպէս Յակոբայ և Մովսէսի խաւսքը առ Ռուբէն՝ երկուքն ալ մէկ միտք ըլլալը յայտնի եղաւ։ և ոչ թէ միմեանց ներհակ խաւսքեր են։

Հ. Խբ. Ի՞նչպէս այս օրհնութիւնը մէջ Իսրայէլի տան և մէկ ցեղին նահապետաց անունները կարգաւ կը յիշէ, բայց Շմաւօնը բերան չի բերէր. այս ի՞նչ միտք պիտի ըլլայ։

Պ. Ի՛նչ չէ Շմաւօնի անունը չի յիշելը, որուն համար զանազան կարծիքներ կերևայ։ Ոմանք կրսեն, թէ Շմաւօնի օրհնութիւնը Յուդայի օրհնութեան մէջ կիմացվի, քանզի իրենց բաժինները մէկզմէկու սահմանակից տրվեցաւ, և Շմաւօնի ցեղը Յուդայի ցեղին բաժնին մէջ խառնրվեցաւ, և իրարու հետ առաւել միաբան և սիրելի էին, ինչպէս որ յայտնի է Ի գիրս Յեսուայ, (Գ. Ժթ. 1)։

Բայց ոմանք կրսեն, թէ երկրատաման եղբարց մէջ՝ նախ և յառաջ Շմաւօն անօրինեցաւ, և իրենց փոքր եղբայրներն՝ Յովսէփը սպանանելու կամ ծախելու խորհրդոյն գլուխ գանելվեցաւ. թէպէտ սուրբ գիրքը Յովսէփայ պատմութեան մէջ այս խօսքը չի յայտնէր։

Բայց ոմանք և այս կրսեն, թէ Մովսէս ամոր համար չի յիշեց Շմաւօնը, քանզի Իսրայէլացւոց ազգին մէջ միշտ Շմաւօնի ցեղը ապստամբաց գլուխ գանելվեցաւ, ուստի և աստուածային պատիժը ասոր ցեղին վրայէն անդադար էր։

Բայց մեկնութիւնը թէպէտ ընդունելի է, սակայն կարելի է որ՝ Մովսէսի միտքը ինկաւ Յակոբին անիծելը Շմաւօնը և Ղեւին, վասն որոյ Շմաւօնը չի յիշեց։ Բայց գիտեմ՝ որ այս տեղ երկու հարցմունք ունիս. մէկը Ղեւին և Շմա-

ուծը ինչու՞ անիծեց Յակոբ. և միւս՝ եթէ Մովսէս այդ պատճառաւ չի յիշեց Շմաւօնը, պէտք էր որ Ղեւի ալ չի յիշէր։

Ա՛ռաջին հարցմանդ պատասխանը սա՛ւ ի գիրս ծննդոց. (Գ.Ը.ԼԳ), միւնչև՝ ի վերջն նոյն գլխոյն, ուր սա՛դ յայտնի կը լայ անիծելոյն պատճառը ի՞նչ յանցանք ըլլալը։

Ա՛ւս հարցմանդդ պատասխանը այս է, այն մեղքը՝ որ Շմաւօն և Ղեւի միասնդ գործեցին, Ղեւայ ցեղը առաջինի արարողութեամբ ըստ հին օրինաց քահանայ ելլաւ. բայց Շմաւօնի ցեղը որ քան զոր առաստացաւ յոյժ ի գործս չարութեան, վասն որոյ Մովսէս՝ Ղեւին կը յիշէ, և Շմաւօնը չի յիշէր։

Հ. ԽԳ. Ա՞ովսէսի վախճանն ի՞նչպէս եղաւ։

Պ. Հրաժարական ողջոյնը և մարդարէական օրհնութիւնը տալէն ետքը՝ աստուծոյ հրամանաւ դէպ ի Նաբաւ լեռան կերթայ՝ որ Մովաբայ երկիրն էր, և ժողովուրդը հետուէն արտասուօք անոր կը նայէր ետևէն, քանզի հրաման չի կար՝ որ հետը մարդ երթայ։ Ետսոր Մովսէս Միքայէլ հրեշտակապետը իրեն ընկեր ունենալով՝ լեռը կելլէ, (քանզի ըստ հաստատակ կարծեաց վարդապետաց՝ Միքայէլ հրեշտակապետն էր, որ միշտ Մովսէսի կերևար, և իւր հետ կը խօսէր ի դիմաց աստուծոյ, իբր թէ դեսպան էրկրին)։ Այն լեռան մէջ իւր հոգին առաւ-

գելով Մովսէս ՝ի ձեռս աստուծոյ , մարմինը ձգեց ՝ի ձեռս հրեշտակին։

Հ. ԽԴ. Յուդա առաքեալը Մովսէսի մարմնոյն համար այսպէս կը գրէ . «Եւ Միքայէլ հրեշտակապետ՝ յորժամ ընդդիմանարկուելն սատանայի վիճեալ ասէր պատասխանի՝ վասն Մովսիսեան մարմնոյն , և այլն . (Յոտ. ա. 9) . այս ի՞նչ վիճմունք պիտի ըլլայ։

Գ. Այսպէս կը վարդապետեն՝ թէ յետ մահուան Մովսէսի մեծ հակառակութիւն եղաւ Միքայէլ հրեշտակապետին և բանսարկու սատանային մէջ . քանզի սատանայն կուշխատէր՝ որ Մովսէսի մարմինը Աստուծոյ երկիրը տանի , յուսալով՝ որ ժամանակէ մը ետքը ժողովուրդին կռապաշտութիւն ընելը կուտայ , և այն մարմնոյն սատուածային պատիւ տալ կուտայ։

Միքայէլ հրեշտակապետ դիմանալով այդ վտանգը՝ դէմ կենցաւ , և ինքն իրեն չի կրնալով կամ իւր իշխանութեամբը հալածել չար սատանայն , աստուծոյ անուամբը սատանց և հալածեց . և Մովսէսի մարմինը Մովաբայ ձորոյն մէջ թաղեց , և անոյշոյ ըրաւ գերեզմանը , որ այն ժամանակը մարդ չի գիտցաւ։

Հ. ԽԵ. Յօրայ պատմութեան մէջ գրված է , թէ «Երկին հրեշտակք աստուծոյ կալ առաջի

«տեսան, եկն և ասասնայ ընդ Նոսա. . . և ասէ
«ցնա տէր, Նայեցարս մասք քովք ընդ ծառայ իմ
«ընդ Յօր, զի ո՞չ գոյ իրրև զնա 'ի վերայ երկրի
«այր անարատ՝ ճշմարիտ՝ աստուածապաշտ՝ մեկ-
«նեալ յամենայն իրաց չարաց։ Եւ պատաս-
«խանի ասասնայ. . . մի թէ ձրի՞ պաշտիցէ Յօր
«զտէրդ։ և այլն։ Զարմանալի կերև այ ինձի այս
խօսքը, ասասնայն ի՞նչ համարձակութիւն ունի
գալ աստուծոյ առջին, և աստուած ալ Յօբայ
վրայ պարծի ասասնայի դէմ։

Պ. Ուրաջին մասին մէջ ըսինք, թէ սուրբ
գրոց մէջ երբ կըսուի՝ Աստուած խօսեցաւ,
Աստուած երևեցաւ, այն իսկապէս աստուծոյ է-
ութիւնը չէ՝ այլ հրեշտակ աստուծոյ, որ 'ի դի-
մաց աստուծոյ խօսելով՝ և իրը փոխանորդ աս-
տուծոյ գոլով՝ աստուած կանուանին։ Ինչպէս
Յօբայ տանը պահապան հրեշտակները երբ խոր-
հուրդ կընէին, թէ ի՞նչպէս պէտք է Յօբայ տա-
նը վարվիլ փորձութեան ժամանակը՝ որ մօտե-
ցեր էր, քանզի աստուած այն հրեշտակաց յայտ-
նէր էր. այդ խորհրդոյն մէջ ասասնայն ալ ներկա.
և հրեշտակաց մէջի նախապատիւը՝ որ էր 'ի դի-
մաց աստուծոյ, գովել սկսաւ Յօբայ աստուած-
պաշտութիւնը։

Որովհետև բարեգործ մարդիկ՝ թէպէտ ու-
բախութիւն և պարծանք են բոլոր հրեշտակաց,
բայց առաւելապէս իրենց պահապան հրեշտակ-
ներուն. ասասնայն ըսաւ այն հրեշտակին, Մի
թէ Յօր ձրի՞ կը պաշտէ իւր աստուածը, ո՞չ ա-

պարէն դուն հաստատեր և ցեր ես իւր տունը ներքին և արտաքին բարիքները. արդ՝ մեռ իրմէն իւր բոլոր ինչքը, տե՛ս ի՞նչպէս երեսդ ի վեր քեզ կանիծէ։ Լա՛ հրեշտակը ի գիսաց ասուածոյ թող տրված սատանային, նախ որդիքը և ինչքը և բոլոր բարիքը ցրուել, և յետոյ մարմինք գանազան ախտերով և վէրքերով լեցուել, և այլն, ըստ կարգին, տե՛ս ի գիրն Յովբայ։

Հ. Խ Զ. Ինչո՞ւ համար ասուած ըստ Մովսէսի հրաշքներուն ժամանակը Եգիպտոսի մէջ, թէ Ահարոնի տո՛ւր գաւազանը՝ որ փարաւոնի առջին ձգէ. և Մովսէսի ձգել չի տրված. (ԵԼԷՅ. Է. 9)։

Պ. Լուսաբանեն վարդապետք այսպէս, թէ "Որովհետև Մովսէս՝ փարաւոնի պալատին մէջ մեծ էր, ապրելախտ չի գանըվելու համար Ահարոնի հրաման ըրաւ"։

Հ. Խէ. Յովէլ մարգարէն ի գիսաց հոր ասուածոյ կըսէ, "Յաւուր յայնմիկ հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ". (Յ-ԷԼ. Բ. 28)։ Ի՞նչդ՝ հոգւոյն սրբոյ գալստեան ժամանակը, արդեօք բոլորն ալ հոգւոյն սրբոյ շնորհը առի՞ն։

Պ. Ի՞մենայն, կամ Ամենեքեան բառը, գրոց մէջ միշտ բոլորը մեկտեղ զատ զատ, այսինքն մեկը անգամ դուրս չի ձգելով չմացընէր. վասն

որոյ սուրբ գրոց մէջ այսպիսի բառերը երբեմն բառ առ զ-ոյն կիմացվին։ Բ.հա քեզ օրինակ մի, Ծննդոց գրքին մէջ կըսվի, թէ "Ապա-կանեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի" · (Ծննդոց · զ · 12)։ Յայտնի է՝ որ նոյ և իւր որդիքը իրենց ճանապարհը չէին ապականէր։ Այլեպէս իմացիր և քու հարցմունքիդ միտքը։

Հ · ԽԸ · Յաւուրս զատուորացն Իսրայէլի երբ Յեփթայէ զատերազի կերթար Ամմոնայ որդւոց վրայ, ուխտ բրաւ առուծոյ հետ ըսելով, եթէ Ամմոնայ որդիքը յաղթել տաս ինձի, և երբ տունս զառնամ, ով որ իմ տանս մէջէն նախ առջևս ելլայ, քեզի մատաղ ընեմ։ (Դատաւորաց · ժա · 30)։

Յեփթայէ յաղթութիւնը բրաւ, և տունն դարձաւ, և նախ իւր մէկ հատիկ աղջիկը գիմացը ելաւ, և ինքն ալ ուրախանցաւ՝ որովհետև խոստացեր էր՝ որ մատաղ պիտի ընէ։ Աղջիկը որ իմացաւ՝ յոժարութեամբ յանձնառու եղաւ, և հորը ըսաւ՝ մի՛ ուրախիր, ուխտդ կատարէ · միայն երկու ամիս ժամանակ տո՛ւր ինձի, որ երթամ ընկերներուս հետ կուսութիւնս լամ, և լեռները շրջիմ։

Կերթայ աղջիկը և երկու ամիսն ետքը կուգայ · սուրբ գիրը կըսէ՝ "Եւ ուրար (հայր աղջը կանչն) նովաւ զուխան՝ զոր ուխտեաց, և ոչ գի-

ակը նա զայր, և այլն։

Ա. Այդ՝ եթէ այդ մարդը աղջիկը ապանեց մատաղ բրաւ, և զաւ մեղք որդեապանութեան և մարդապանութեան, որ աստուծոյ կամացը դէմ է. եթէ չբրապանեց՝ ինչո՞ւ կըսէ սուրբ գիրը, «Եւ արար նոքա զուխան՝ զոր ուխտեաց»։

Պ. Այդ երկար հարցմանդ՝ երկար պատասխանի պէտք է. գանագան մեկնութիւն կայ այդ հարցմանդ, որոնցմով հասկըցուցնեմ քեզի, թէ ի՞նչ ուխտ բրաւ, և ի՞նչպէս կատարեց։ Հին և նոր վարդապետներէն շատերը՝ Յեփթայեայ ուխտ բրածը կխմանան յաստուկ աստուծոյ մատուցանելի ողջակէզ՝ բան հին օրինաց մարթելով և այրելով. և որովհետև իւր աղջիկը պատահեցաւ՝ կը հաստատեն անխոհեմ ուխտ ըլլալը, թայց կարդարացընեն Յեփթայէն՝ գոնէ ի ծանր մեղաց, իբր կըսեն՝ թէ Յեփթայէ պատերազմող մարդ ըլլալով, և այն ժամանակը բոլորովին բարբարէր էր ազգին փրկութիւնը համար, ուստի միայն կը խորհէր աստուծոյ և ազգին թշնամիները ցրուել, վասն որոյ առանց զգուշութեան և հարկաւոր ընտրողութեան, մտնաւանդ բան ոմանց՝ անյարմարի ազխուութիւն, համարելով՝ նոյ ընդունելի մեծ բան մը ընել, այնպէս անորոշ ուխտ մը բրաւ։ Լաւ ոմանք ի սուրբ գիրն հայելով, որ ուխտին խօսքէն յառաջ գրուած է, «Եւ եղև ի վերայ Յեփթայեայ հոգի Տեառն. (Դատաւորաց. ժա. 29)»։

Ասկից կը համարին թէ, հոգւոյն սրբոյ ազդեցութիւնամբ ըրած կըլլայ այն ուխտը՝ առանց

մանուս որ անուն մը դնել լոյ։ և այս միտքը՝ կրանն թէ, իւր լացը և ողբը և հանդերձները պատռելը կը հաստատէ, երբ դառնալուն յանկարծ աղջիկը դիմացը ելած տեսաւ։ Այս այսպիսի բարեմասութեամբ մեկնելով՝ կարդարացընեն Յեփթայեն, թէ ուխտած ուխտին համար՝ և թէ կատարելուն համար. մանաւանդ կրանն, թէ աստուած պարգևեց իրեն այն յաղթութիւնը, որուն համար այն խոստմունքը բրաւ, կերեւայ թէ հանձնցաւ ուխտելին բարեմասութիւնը, որ կը կարծէր թէ անով աստուած պիտի փրկուի, և ոչ թէ պիտի դառնացուցանէ։ Այս մասին գուցէ արդարանայ Յեփթայէ՝ գոնէ ի ծանր մեղաց՝ մեր բը գրեած պատճառներուն համար. բայց և սարակուսութիւնեմս կը մնայ խոստմանը կատարման վրայ։

Բազումք կան, որ աստուածային սատիկ պատուիրանքը գիտնալով, որ սուրբ գրոց մէջ կարդիլէ մարդ զոհելը, չեն հաւանիր՝ թէ Յեփթայէ մարթեալով մատաղ բրած ըլլայ իւր աղջիկը։ Ճշմարիտ է, որ աղջիկը երկու ամիս ժամանակ ուզեց՝ իւր կուսութիւնը լալու համար, ինչպէս սուրբ գիրքը կը վկայէ, «Թողացո՛ ինձ զերկուս ամիս, և երթայց շրջեցայց ընդ լերինս, և լացից զկուսութիւնս իմ»։ Այս ժամանակը առաւ, և իւր կուսութիւնը լեռներուն վրայ լացաւ։ Այս առջի մեռնելու խօսք չի կայ կրանն, այլ միայն ողբ իւր կուսութիւնը համար՝ որ առանց երիկ մարդու մնալու էր իւր բոլոր կենացը մէջ։

Կրսեն թէ, եթէ առաջին ըսօղներուն պէս ոգիառութիւն ըրաւ Յեփթայէ այդ խոստմունքին, մի թէ այն երկու ամսվան մէջ չի կրցան քահանաներէն կամ իշխաններէն ճշմարտութիւնը ստրվիլ. կամ անոնք այնպիսի ոգի՞ս եղան, մինչ զի հարկ համարին որդեսպան ըլլալը՝ խոստմունքը կատարելու համար։ Չէ թէ անոնցմէ ստրվիցաւ, թ՞ենչպէս հաւանական կերևայ, ոմ կը հաւատայ՝ թէ Յեփթայէ իւր մարար խղճմտանացը վրայ այնպիսի յամառեալ մնայ, մինչ զի սրտի կսկծանքը այն գործը գործեց, որ գիտէր ոչ հաճոյ չըլլալը. ուրեմն ասոնց կարծեացը նայելով Յեփթայէ իւր խոստմունքը այնպէս կատարեց, ինչպէս որ կարելի է օրինաց և սրբութեամբ կատարել, իւր աղջկան քաղաքական կեանքը մեռցնելով և ոչ թէ բնական կեանքը, քանզի զբրկեց ինքը զինքը իւր յոժարակամ հաւանութիւն՝ ոչ եթէ միայն ամմէն կերպ մարդս հետ կենակցութիւն, այլ և որդեծնութիւն յոյսէն, որ այն ժամանակները նախատելի և ընդ ոնգովիւք բան մի էր համարված, պարտաւորը ըրած կըլլայ մինչ անցնելնաւ որ կուսութեամբ ծառայել աստուծոյ, բստ ոմանց՝ առանձնանալով տան մը մէջ՝ վկայութեան խորանին մօտ, կամ բստ ոմանց՝ իւր հօրը տանը մէջ առանձին ըլլալով՝ իբր թէ այսպիսի կեանք վարելն ալ կենդանի ողջակէզ կը համարվի՝ տունց արոյ և հրոյ մատաղ ընծայել իւր հոգին և մարմինը, որ չի զանազանիր՝ արիւնահեղ զոհէն։

Զոմանք կասեն թէ, կերևայ որ սուրբ գիրքը և այդ միտքը կը գիտէ, քանզի ինչպէս որ ասելն յառաջ, նոյնպէս և ասելն ետքը, թէ Զաստուածաց զուխան, չի յայտնէր զաւակին մահը, այլ միայն կուսութիւնը՝ և առանց երիկ մարդու ձեռքը. ինչպէս որ կրսէ՝ «Ցեռ երիկուց ամոց դարձաւ առ Հայր իւր, և ապար նուիրագուխան՝ զոր ուխտեաց, և ոչ գիտէր զայրս։ Իբր թէ ասել կուզէ, թէ Հայրը խոստմունքը բրաւ, բայց ի՞նչպէս, իւր կամքը և Հաւանութիւնամբը՝ չի կարգեց ինքը զինքը. և այդ ճգնողական կուսութիւնամբ կենանքը կենդանի մատաղ բլլալու պէս բան մի է։

Զոմ՝ այս երկու կարծեացը վրայով շատ վարդապետք և մեկնիչք՝ ողջակէզ բառին նայելով, արիւնաւոր մատաղ ընել իմացան. ողջակէզ ուխտեց կրսեն՝ ուրեմն ողջակէզ մատաղց. և այս կարծեացը միտքաւն բլլալով՝ միայն ուխտին որպիսութիւնը յայտնեցին, որ ոմանք՝ ինչպէս յառաջ ասինք, կը հաստատին թէ յազգեցութիւնն հոգւոյն սրբոյ բրաւ, և նոյն հոգւոյն շնորհքը կատարեց. այն պատճառաւ կրսեն՝ թէ գովութիւնամբ կը խօսի Պօղոս առաքեալ Ցեփիմայեայ յիշատակը. (Եբրայ. ժա. 32)։ Բայց ոմանք՝ թէպէտ կը գովեն Ցեփիմայեայ պաշտօնատիրութիւնը՝ որով բրաւ այս ուխտը, բայց կրսեն՝ իւր զինուորական փափաքին չի բռնութիւնն յաստուծոյ կարգնալ սահմանէն դուրս ինկաւ՝ առանց մատաղութիւնն ուխտաղրութիւն ընելով, որ անյայտ-

մար բարեպաշտութեամբ և հաւատով յետոյ
կատարեց, իբր ըստ կուզեն՝ թէ մարթեցաւ։

Հերոնիմոս 'ի մեկնութեան Երեմիայի, (գ. ԺԷ.
Է.) կրսէ՝ եթէ «Յեփթայէ մատոյց զդուստրն
իւր կոյս ասուծոյ, ոչ պատարագն է հաճոյ, այլ
անձն մատուցողին։ Եւ Ամբրոսիոս կրսէ, «Ո՞չ
կարեմ ամբաստանել զառնէն, որ հարկեցաւ լը-
նուլ՝ զոր ուխտաւոր էր, բայց աշխարհի հարկ՝
որ որդեսպանութեամբ վճարիւր։ Եւ Եղիշէ
վարդապետն մեր կրսէ, «Ասուած՝ որ զմիս
«զուարակաց ոչ ուտէ, և զարիւն նոխազաց ոչ
«ըմպէ, զիարդ արիւն մարդոյ թաղթանայցէ
«նմա, զոր և մարդոյս թնութիւնն ոչ առնու
«յանձն։ . . . իսկ ընդէ՞ր ասէն պատարագեցաւ
«դուստրն Յեփթայեայ. . . թուի ինձ՝ թէ պա-
«տարագն այն ընդունելի չէ. . . . այլ վրիպա-
«կան բանք եղին 'ի տպագնապ ժամանակին. . .
«մի՛ դատարկաբանութիւն ինչ թուիցի քեզ այս-
«պիսի խնդրուածս տղջկանն (վասն ըստ զկու-
«սութիւնն)։ ըստ ազգին է քան զյանձնատու-
«թիւն պատարագելոյն։ . . . մի՛ որ ասէն թէ
«յանուս ուսանելոյ թէ՝ զայս պատարագ ասուծոյ
«կարծիցէ հաճարեալ հաճոյական։

Եւ 'ի վերայ այսոր ասելոյն սուրբ հարքն չէն
երիմաստք 'ի կարգ արդարոց և սրբոց դասել ըզ-
Յեփթայէ։ բայց որոնք որ աղջկան կուսական
անարիւն մատաղ ըլլալը կընտրեն խմանալ, նայե-
լով այն ծանր դժուարութեանց վրայ՝ որ արիւ-
նաւոր մատաղ ըլլալն յառաջ կուգայ՝, ասոր

բան մը չէ կրնան տալ զրոց շարադրութիւնէն, որ բոլորական ընծայումն անձին՝ այլաբանօրէն զոհ կամ ողջակէզ ըսել է. ինչպէս որ ասուած նայելով ընծայումն հեթանոսաց 'ի հաւատն քրիստոսի, ասէ Եսայեայ բերանով. «Ողջակէզք նոցա և պատարագք նոցա ընդունելի ի զլիցին 'ի վերայ սեղանոյ իմոյ» - (Եսայի. ԺԶ. Ը)։

Ի՞նչպէս այս սեղ ըսուած կարծիքները և մեկնութիւնները՝ որ գրինք, որուն կը հաւանիս նէ, քու կամացդ կը յանձնենք։ Ինձ այնպէս հաճոյ է գիտնալ, զի որովհետև պատարագը աստուածակոչս կոչմանէ է, Յեփթայեայ յաղթութիւն տրվողը աստուած է, և իւր խոստմունքն ալ ընդունողը աստուած է, չի կարելի աստուած իւր կարգեալ օրինացը դէմ մեզմէ զոհ և ողջակէզ ընդունիլ։

Իրմէ ըսես Յեփթայէ իւր յամառութեամբը աղջիկը մատաղ ըրաւ, կրնամ թէ՝ որովհետև աստուածային օրինաց դէմէ այդ գործը, պէտք չէր՝ որ սրբազան առաքելոյը Յեփթայէն տուրը նահատակաց կարգը շարէր։ Իւ թէ՝ այս խոստմունքէն յառաջ տուրը գիրը կըսէ, «Եւ եղեւ հոգի տէրոնն 'ի վերայ Յեփթայեայ». եթէ տուրը հոգւոյն շնորհը ունէր իւր վրայ, ապա տուրը հոգւոյն դէմ գործ չէր կրնար գործել։ Իւ եթէ կատարեց իւր անօրինաբար խոստմունքը՝ թշնամեաց յաղթութեան փափաքով, բայց կատարեց աղջիկանը յոժարութեամբը՝ կուսութեամբ և սրբութեամբ՝ անարիւն մատաղ ընծայելով նոյ։

Իսկ թէ արիւնաւոր մատաղին բարեգործութեան արարողութիւնը՝ մէկ օրման առաքինութեան գործ է, բայց բոլոր կենացը մէջ իւր անձը անարիւն մատաղ ընծայելը աստուծոյ՝ մաքրութեամբ, սրբութեամբ, և կուսութեամբ, հանապազընծայ մատաղ է. և որքան որ մարդը աւելի բարգոյն է քան զանբան անասունս, այնքան նախապատիւ է և այսպիսի նուիրումն նորա։

Հ. Խթ. Սամփսոն ի կարգս նահապետաց կը դրուի, և ա կը զարմանամ՝ որ իւր վախճանը անձնասպանութեամբ և մարդասպանութիւն եղաւ։ Անձնասպանութեամբ՝ որովհետև անձնասպան գտնուիլ ցաւ. Դարձեալ ասածարին ներքև ը։ Մարդասպան՝ որովհետև այն տեղը իրեն հետ երիք հազար մարդ սպանեց. այսպիսի մարդը նահապետաց կարգը ի՞նչպէս կրնայ ըլլալ։

Պ. Յապէս կը պատասխանէ Օգոստինոս «Այս արար Սամփսոն՝ ոչ մարդ կորէն խար-«նեալ, այլ յաստուածոյ հրամայեալ, ոչ մո-«լորեալ՝ այլ հնազանդեալ. չէ՞ մարթի մեզ այլ «ինչ հաւատալ վասն նորա։ Յորժամ աստուած «հրամայէ, և նորին ըստ ոգւոյ ցուցանէ զկամս «իւր՝ որոյ մ չէ՞ մարթի կալ հակառակ, ոմ ի չ-«խեսցէ իրրև ամբարիշտ յանդիմանել զնա, որ «անկեալրութեան ետուն աստուծոյ իւրոյ հնա-«զանդիւ։ Յայտնի է՝ որ աստուած հաճեցաւ Սամփսոնի մահուանը, և զորս թէ ասէիս իրեն,

որ այն յետին գործողութիւնը սքանչելի օրէն գործեց։

Մանաւանդ և ս կըսեն, թէ Սամփսոն առանց մեղանչելու որ և նեղբին աստուածային յայտնութիւն եւ ս, միայն իւր պաշտամանքը՝ որ էր գաստուր, կրնար իւր ժողովրդեան թշնամիները ջարդել, թէ և կը տեսնայ՝ որ իւր անձն ալ պիտի շատրի, և անոնց հետ ինքն ալ պիտի մեռնի։ Բայց Օգոստինոսի աստուածային կարծիքը առաւել ընդունելի է։

Հ. Ծ. Աբիսողոմայ համար Թագաւորաց գրքին մէջ այսպէս գրուած է. «Բայց Աբիսողոմ մինչդեռ կենդանի էր՝ կանգնեաց զիւր արձան, և կանգնեաց ՝ի Յարին զարձանն ՝ի հովիտս Թագաւորաց, քանզի ասաց թէ չիք իւր որդի, որ յիշիցէ զանուն նոր»։ (Բ. Թագ. ԺԸ. 18)։ Բայց այս բանէն կը հետեւի՝ որ Աբիսողոմ որդի չունէր։ Բայց նոյն Թագաւորաց գրքին մէջ՝ (ԺԴ. 27). կըսուի, «Եւ ծնաւ Աբիսողոմայ երիք ուստերք և դուստր մի». արդ՝ ինչպէս համար անդաստակ կըսուի։

Պ. Աբիսողոմի գեղեցիկ թեւանը նման գեղեցիկ մը չի կար երկրի վրայ, քանզի ամենեին արատաւոր թիւն կամ արատ մը չունէր իւր անձին վրայ. և իրեն պէս գեղեցիկ զաւակ չունենալուն համար կըսուի անդաստակ. և յիրաւի երիք ուղայ և մէկ աղջիկ ունէր, բայց իրեն նման գեղեցիկ չէին։

Հ. ԺԸ. Գիր կենաց կրավի երբեմն սուրբ գրոց մէջ, ի՞նչ պիտի ըլլայ այդ Գիր կենաց բովանդակը։

Պ. Լաւուծոյ անմոռաց յիշուն է, որ յաւիտենականապէս փրկելիները անմոռաց և անջնջելի կը պահէ աստուած իւր մատաղը մէջ, որ հնար չէ անկից ջնջելիլ. բայց ժամանակաւոր գպրութիւն և գիր կենաց առաքինութիւնք կրավին, որոնցմէ մարդս կրնայ ինքը զինքը ջնջել։

Հ. ԺԲ. Լրիթէ առաջին բուած Գիր կենացին մէջ գրուածները չեն ջնջուիր. ինչո՞ւ համար Մովսէս՝ աստուծոյ ազատչանք բրած տեղը ժողովրդոց համար՝ կրսէ թէ «Եթէ թողուս զմեղս ժողովրդեան՝ թող. ապա թէ ոչ՝ ջնջեա զիս ի գրչագրութենէ քումմէ՝ յոր գրեցեր։» (Է Ելից. լե. 32)։

Պ. Կուռնելիոս այսպէս կը պատասխանէ, Մովսէսի այնպէս ըսելը՝ ժողովրդեան փրկութիւնը համար իւր սասակիկ խղճը ցոյց կուտար. ինչպէս ըսելմը թէ, մարդ մը ունի որդի մը և ծառայ մը. որդին սեսաս որ՝ հայրը գուրս կընէ ծառայն. և որովհետև որդին այն ծառայն շատ կը սիրէ, հօրը կաղաչէ և կրսէ, մի՛ վռնտեր այս ծառայն, և եթէ վռնտես՝ զիս զուրկուիր ինձմէ։ Այնպէս Մովսէս կրսէր, կամ ժողովրդոց յանցանքը ներ՝ կամ զիս ջնջէ. և ոչ եթէ ճշմարտապէս ջնջելիլ կը ցանկայր, քանզի այն անկարելի էր. այլ մանաւանդ այն խօսքին կար-

գէն առաւելապէս սիրով աղաչելուն և զանակը յայտնի կընէր։

Հ. ԺԳ. Սուրբ գրոյն մէջ Սաւուղ թագաւորին համար կը գրուի թէ, «Որդի տարեւոր Սաւուղ ՝ի թագաւորել խրատմ» . (Ա՝, Թ-գ . ժա. 1)։ Իրր թէ մէկ տարեկան էր. արդ՝ մէկ տարեկանը ի՞նչպէս կրնայ թագաւոր ըլլալ։

Պ. Երկու անգամ օծուցաւ Սաւուղ թագաւոր, մէկ մը առաջ ՝ի գիրս (Ա՝, Թ-գ. ժ. 1)։ Յայց երկրորդ՝ Եւասա Ամմոնացին զարնուելէն ետքը վերստին օծուցաւ և թագաւոր եղաւ բոլոր Իսրայէլի վրայ. առաջ (Ա՝, Թ-գ. ժա. 15)։ Արդ՝ որդի տարեւոր էր Սաւուղ, իրր մէկ տարեկան օծուած առաջին օծուելնէն ետքինէն մինչև երկրորդ օծումը։

Հ. ԺԴ. Իսրայէլացւոց յԵգիպտոսէն ելլելու ժամանակին համար Ելից գրքին մէջ կը գրուի, թէ գիշեր էր, ինչպէս որ կըսէ, «Գիշերի՝ որ յաւուցաղաղեալ էր առաւն, հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց» . (Ելից. ժբ. 42)։ Խուսոց գրքին մէջ կը գրուի, թէ առաւօտ էր, «Զայգ ոչ զատկին ելին որդիքն Իսրայէլի» . (Թուոց. լգ. 3)։ Երկրորդ օրինաց գրքին մէջ կը գրուի, թէ իրիկուն էր, ինչպէս որ կըսէ, «Զենցես ըզզատիկն ՝առ երեկս ընդ արեւմուտս ՝ի ժամանակին՝ յորում ՝ելեր յԵգիպտոսէ» . (Բ՝. Օրինաց.

ժգ. 6)։ Այս խոսքերը մեկզմեկու յարմար չեն, թե՞նչպէս պիտի խմանամք։

Պ. Կրուանելիոս Մոսկէսի հինգ գրոց վրայ բրած կանոնների մէջ, այսպէս կըսէ. «Եբրայեցիքն առնուն զրանս արդէն կատարեալս ներգործութեամբ, մերթ ի շարունակութեան և մերթ յսկսմանէ, զի առնելն նոյն է՝ որ և պատկել, հնարել, զինուել, և սկսիլ առնել զոր ինչ։ Այնքան բանին այս է, իբր Եբրայեցւոց համար ուրեք գրված է իրիկուանը և լուսնին, ուրեք գիշերը, և ուրեք և առաւօտուն։ Բանդի իրիկվան ժամանակ զատկական գառը մորթեցին, որ և լուսու պատանան և սկիզբն և զատ։ Գիշերն ալ՝ որ Եգիպտացւոց անդրանիկները ջարդ ելին լսիլ, փարաւօնն թագաւորը թող արվաւ իրենց և լսալ, որ Եգիպտացւոց կանանց զարդերովը և իրենց բոլոր կարասիքը և լսալ սկսեցին, և առաւօտուն ալ ամբողջ և լան։ ուստի երբեք առանձակ գրված ալ ճշմարիտ են։

Է. Ծ. Ե. Լախարդ կինը կենդանի ցոյց արվաւ Սամուէլ մարդարէն՝ Սաուղ թագաւորին։ արդեօք կախարդական զօրութեամբ էր, կամ Սամուէլէր ասոյդ երևցողը, եթէ ստա երևցեալ մի էր։

Պ. Թէպէտ կան ոմանք՝ որք կախարդական արհեստիս և դեռ կրանեն։ բայց շատերը այսպէս կը հաստատեն ըսելով, թէ այն կախարդ կինը իւր

կախարդական գործերը երբ կը պատրաստէր, և աստուած ալ կուգէր՝ որ այս վերջին անգամին ալ Սաուղին յօդնութիւն հասնի, որ դարձի գայ այն յանցանքը, որ պիտի մեռնէր. կնոջը կախարդութիւնէն յառաջ վարվարական ըրքանչելիք ըրաւ աստուած, որ այն կախարդ կինը իւր բոլոր դիւական հնարքներովը կարող չէր ընել. այլ միայն աստուծոյ միջնորդութեամբ դուցէ ցնորք մը ցուցնէր, կամ սուտ օրինակ մը Սամուէլի կերպարանքովէ Այլ դժոխոց բոլոր զօրութիւնը կարող չէ՝ որ մեռելներէն մէկը ոգիընցուցնէ, և կարող չեն՝ որ ապագայ բանը ուղղութեամբ գուշակեն։

Հ. Դ. Զ. Գրված է թէ «Եսայ Դաւիթ յաւուր յայնմիկ, ամենայն որ հարկանիցէ զրով զՅերուսաղէմն, և մատիցէ զրով 'ի կաղան և 'ի կոյրս յատելիս անձին Դաւթի, վասն այնորիկ առանձն՝ կոյրք և կաղք մի՛ մտցեն 'ի տուն տեառն». (Բ. Թագ. Ե. Ց)։

Այս տեղ երկու տարակուսելի բան կայ. նախ՝ որ ըսաւ, ամենայն որ հարկանիցէ, և չի լրացուցեր խօսքը՝ թէ ո՞նչ կրնայ. և երկրորդ՝ ինչո՞ւ ըսաւ, կոյրք և կաղք մի՛ մտցեն 'ի տուն տեառն։

Գ. Երբ Դաւիթ Երուսաղէմի մէջի բերդը պաշարեց, ուր տեղ Յեբուսացիք պատսպարվէր էին. անոնք բերդին մէջ կոյրերը և կաղերը դրին՝ Դաւթի հետ պատերազմելու համար, որով՝ պա-

բրապին ամբոխութիւնը և Դաւթի սկարուխութիւնը խնացուցին, և հասկցուցին՝ թէ կաղն ու կոյրն անդամ քաղաքը կրնան պահպանել. և այս կաղն ու կոյրն իրենց լիրբ յանդգնութիւնը ապաւինելով՝ Դաւթի դէմ դրին իրենց կաղ և կոյր ըլլալնուն չի նայելով. վասն որոյ առաւել հպարտութիւն համարեցաւ կաղերուն և կոյրերուն լրբութիւնը՝ առողջ և զօրեղերուն բրածէն էվէլ. և այս պատճառաւ վճիռ եղաւ իրենց վրայ՝ չի մնալ ի տուն ոչ առն, թէ և չի կրցին Յեբուսացւոց հետ անդամ դէմ կանգնիլ։

Լրա միւս ասրակուսութիւնդ որ էր՝ «Ամենայն որ հարկանիցէ զրով զՅեբուսացիսն», որոյ հետևութիւնը այս կը դնեն մեկնիչք, Զօրասպետ ըլլայ Իսրայէլացւոց զօրքերուն, որ և Յովաբ զօրասպետը՝ որ ինկած էր Դաւթի երեսէն, կը խնդրէր կորիւնութեան յարմար ժամանակ մը, որ առաջին ասիճանին հասնի, վասն որոյ ամենէն յառաջ անցաւ, երբ բերդին վրայ՝ զարկաւ սասկրցուց կաղերը և կոյրերը, և արժանի եղաւ իւր քաջութեան և յաղթութեան պարգևին. բայց ինչպէս ըլլալը՝ թերի դրված է այդ խօսքով բուն բնագրին մէջ, որ կը ձգեմք ներհուն խնասանց քննութեանը։

Հ. Ծէ. Լրբ ասուծոյ տապանակը Ամենադարին առնելն էր, կամ ցաւ Դաւթի անկէ վիրցուցնել թերել ի Քերբրոն. դրին տապանակը

տայլի վրայ, և սկսան քերել. և տայլը քիչ մը ծռ-
ուելով՝ տապանակն ալ ծռեցաւ, այն տեղ Ամի-
նադաբին տղայն Ոզա ձեռքը երկնցուց՝ տապա-
նակը բռնելց՝ որ չի ծռի, սուրբ գիրքը կըսէ,
թէ "Բարկացաւ տէր Ոզայ, և ի հար զնա անդ
սատուած վասն յանդգնութեանն, և մեռաւ
անդէն առ տապանակին տեառն առաջի ՚ՅՊ.
(Բ. Թագ. զ. 7)։ Ի՞նչ էր այդ մարդուն մեղքը։

Պ. Ամանք կըսեն, թէ քահանայ չէր՝ և հրա-
ման չունէր, որ ձեռք զարնէ տապանակին՝ անոր
համար պատժըվեցաւ. բայց թէ որ քահանայ
չըլլար՝ այն տեղ գտնըվող քահանայները չէին
թողուր՝ որ երթայ տապանակին մօտենայ։ Ամանք
ևս կսեն, թէ այն հնարեց տապանակը տայլի
վրայ դնելը, որ անկանոն էր, այլ քահանայք
լծակաք ուսերնուն վրայ կառնէին, և այս պատ-
ճառաւ պատժըվեցաւ։ Ամանք ևս կըսեն, թէ
Ոզայ ձեռք ձգելովը թերեւ հաւատոյ թիւն պատ-
ճառեց ժողովրդոց. որպէս թէ սատուած կարող
չէր պահպանել՝ եթէ ինքը չի բռնէր, և այն
պատճառաւ պատժըվեցաւ։ Ամանք ևս կըսեն,
թէ տունց մատնութեան՝ յանկարծ տապանա-
կը ծրուած տեսնելով՝ ապշեցաւ, և վաղվաղակի
շտկեց. որ և յանկարծ պատժըվելը՝ իրեն մեղաց
քաւութիւն համարեցաւ։

Այլ սուրբ Գրիգոր Նարեկացին՝ 'ի խոր-
հուրդ սուրբ եկեղեցւոյ շարադրեալ ճառին
մէջ՝ տապանակը օրինակ առնելով սուրբ եկե-
ղեցւոյ՝ Ոզայի պատժըվելը բարոյականապէս

այսպէս կը մեկնէ. «Ինդ Ոգիէլի անուանս սա-
«տակէ, եթէ ոչ խաչապէս յոգի քեզ ցիցի. ապա-
«նանէ վասնեալ վաղվաղակի առ ժամայն, եթէ
«անանայիներ ընակցու թեամբ երկրասիրաբար
«գենանակոս սայլիւք՝ իբր զանօթի ինչ ձեռնա-
«գենեին բարձեալ ուներցի։ Որով կուսուցանէ
մեզ, թէ Ոգիէլ՝ առանց բաւական ողջախոհու-
և մաքրու թեան, իբր մարմնիներ խաչեալ ջուներով՝
մերձեցաւ ի տապանակն տեառն. և կամ այն տա-
պանակը քաշող սայլին կենդանեացը նման, երկ-
բաժիրու թեան և հեշտու թեան յոժարեալ ըլլա-
լովը՝ աստուածային ազով պատժուելեցաւ։ Յորմէ
օրինակ կառնէ սուրբ վարդապետը, թէ որ մէ-
կը այսպիսի անզգուշու թեամբ՝ առանց սրբու-
թեան և մաքրու թեան ի սուրբ եկեղեցին մըտ-
նայ, կամ մանաւանդ սրբազան խորհրդոյն մերձ-
ենայ, հոգւով մահացեալ և գաւապարտեալ
կրլլայ արդարութիւնքն աստուծոյ, ինչպէս
եղև Ոզիայս հին օրինաց մէջ։

Հ. ԾԸ. Ի՞նչ իմանալէ այն խօսքով, որ անա-
պատին մէջ Մովսէս կը խնդրէր՝ աստուծոյ փառ-
քը տեսնալ. (ԾՆԵՏՈՅ. ԼԳ. 16)։

Պ. Ի՛նչ փառքը մեկնիչներ շատ զանազան
բան կիմանան. ոմանք աստուածային մտաց մէջի
նախագաղտնարանները կիմանան. ոմանք քրիստոսի
մարդ կու թեան փառքը կիմանան, որ այլակերպու-
թեան ժամանակը ցոյց տրվաւ. ոմանք և ա

աստուածային էութիւնը կիմանան։ Այլ Կուռ-
նելիոս այս փառքով կիմանայ այն հրեշտակը, որ
աստուածային անձը կը կրէր, որ ամբոխ ծած-
կուած իրեն հետ կը խօսէր. կուզէր Մովսէս՝ որ
այն ամպը վերցուի, և պարզապէս փառաց կերպը
տեսնայ. և այս պայծառ տեսութեամբը կարող
ըլլայ քարոզել ժողովրդոց աստուծոյ փառքը։

Հ. ԺԹ. Իրը կը հիւանդանայ Ազերայ Ասու-
ոց թագաւորին տղայն, այս թագաւորը Ազայէլ
կը խրրկէ Եղիսէ մարգարէին քով, որ իմանայ՝
թէ արդեօք տղայն հիւանդութենէն պիտի ա-
զատի։ Կերթայ Ազայէլ, և Եղիսէ այսպէս պա-
տասխանի կուտայ, գնա՛ և ըսէ իրեն, «Կենդ-
կենցես». և ենցոյց ինձ տէր՝ զի մահու մեռանիցի».
(Գ. թագ. Ը. 16)։ Արդեօք ի՞նչ պիտի ըլլայ այս
երկու կերպ խօսքին միտքը, որ կենցես կըսէ,
և մեռանիցի կըսէ։

Պ. Սուրբ գրոց մէջ սովորութիւն է, և սեպ-
հական ոճ մի է Եբրայեցւոց լեզուին, որ հրա-
մայական բառը երբեմն ապառնի ժամանակի
տեղ կը գործածուի. ուստի գնա՛ և ըսէ՛ իրեն բառ-
ը, ըսել է՝ թէ պիտի երթաս և ըսես իրեն՝
Կենդ կենցես։ Ու ասկից յայտնի է՝ որ Եղիսէ
երկու կերպ մարգարէութիւն ըրաւ. մէկ մը Ազայ-
էլի երթալ առաջ զուրցելը, թէ մարգարէնե
բառ՝ Կենդ կենցես. և միւսն՝ որ ճշմարիտ է.
թէ Մահու մեռանիցի։ Իրը թէ ըսել կուզէր

մարգարէն, թէ գիտեմ՝ դու պիտի երթաս սուտ զուրցես այսպէս, թէ մարգարէն ըսաւ՝ Կեղծիք կեցցես, ահա քու ըսելիքդ ես մարգարէացայ. բայց ճշմարիտ ըլլալիքը աստուած ինձի ցոյց ալ-ուաւ, Մահու մեռանիցի։

Հ. Կ. Աբիսողոմ ըրուութիւն գործելով իրեն հօրը Դաւթի դէմ, բռնութեամբ հօրը թագաւորութիւնը յափշտակել կուզէր. և երբ Աբիսողոմ պատերազմին մէջ կը մեռնի, ինչո՞ւ այնքան սուգ կը պահէ և կուլայ Դաւիթ այնպիսի զաւակին վրայ. (Բ. Թագաւորաց. ԺԸ. ՃՃ)։

Պ. Պիտէր Դաւիթ, որ Աբիսողոմայ մահուանէն որքան բարիք պիտի յառաջանայր իւր անձին և իւր թագաւորութեանը, և որքան չարիք պիտի խափանէին. քանզի որքան կենդանի էր Աբիսողոմ, միշտ նոր խռովութիւն կը հանէր։ Բայց Դաւթի սուգը և լացը այնպիսի որդւոյն վրայ՝ ոչ մարմնաւոր մահուանը համար էր, այլ հոգւոյն յաւիտենական մահուանը համար, որ այնքան չարութիւն գործելէն ետքը՝ զղջալու և ապաշխարելու ժամանակ չունեցաւ, որով և յաւիտենականաբար դատապարտեցաւ։

Հ. ԿԱ. Աբիսողոմ իւր գլխոյն մազէն կապնի ծառէ մը կախուելցաւ բանակին մէջ փախած ժամանակը. և այնպէս Յովաբ սպարապետը նետով

զարկաւ մեռոյց. (Յհ. Թագ. Ժբ. 9)։ Այդ ի՞նչ
ինչո՞ւ ուրիշ կերպիւ չի պատահեցաւ մահը։

Պ. Որովհետև ապատամբ էր հօրը հրամանին
դէմ, վասն որոյ մեղանչական գտնուելոցաւ առ-
ուծոյ դէմ և բոլոր ժողովրդոցը դէմ. քանզի
թագաւորը աստուծոյ փոխանորդ է, և թագա-
ւորին դէմ մեղանչելով՝ նոյ դէմ մեղանչեց.
և ժողովրդոց դէմ մեղանչեց, որովհետև ժող-
ովուրդը այնպիսի աստուածընտիր թագաւորին
կառավարութենէն հանել ուզեց, և անիրաւ-
բար պատերազմելով՝ իւր հօրը զօրքերը և իւր
զօրքերը ջարդել կուզէր, վասն որոյ աստուա-
ծային արդար վճիռը այնպէս ուզեց, որ երինի
և երկրի մէջ տեղ կախելով մեռնի։

Է. ԿԲ. Այրը Յովաբ զօրապետը Դաւթի կոչ-
մանէ Աբէլ քաղաքը և Բեթմաքայ պարիսպը
պաշարէր էր՝ կործանելու դիտաւորութեամբ,
խնամատուն կին մի ելաւ պարսպին վրայ, և Յո-
վաբը կանչեց, ասաւ իրեն. «Դան ճառէր յա-
«ռաջիւն՝ և ասէին. հարցանելով հարցաւ ՅԱբէլ
«և Ի Դան. եթէ պակասեցուցի՞ն, եթէ աս-
«պատակիցի՞ն, հաւատարիմք Իսրայէլի, հարցա-
«նելով հարցին ՅԱբէլ, և ապա եթէ պակա-
«սեցուցանիցին։ Այս եմ խաղաղարար հաստա-
«տութեան Իսրայէլի. և դու խնդրես կոտորել
«զքաղաքս Իսրայէլի, ընդէր ընկղմես զժառան-
«գութիւն տեառն. (Յհ. Թագ. Բ. 18)։ Այս

խօսքէն բան մը չի հասկցվիր , ի՞նչ պիտի ըլլայ միտք բանին։

Պ. Ը.դարև. միթէ խօսք մի է այդ , որ բաւական իմաստուն կինը , որով ըսել կուզէր , թէ յառաջուց կը զուրցեն և կըսեն . երբ հակառակութիւն կըլլար Աբէլի և Դանայ մէջ , նախ կը հարցուներէին՝ թէ հնազանդութիւնը պիտի պակասցրնե՞ն մի , այսինքն ապաստամբ պիտի ըլլա՞ն այն հնազանդութենէն՝ որ Իսրայէլի հաւատարիմքը դրին։ Պէտք է այժմ եւս այնպէս ընել , նախ հարցուներ Աբէլ քաղաքին , և յետոյ թէ որ պակասցրնեն հնազանդութիւնը՝ պատժվին։ Ը.ուէրասին քաղաքին բնակչէն կըսկսի այն կինը ըսել . Եա՛ ոչ թէ ապաստամբ եմ , այլ խաղաղարար հաստատութեան եմ Իսրայէլի՝ իմ իմաստուն խորհրդականացս շատութեամբ . և առանց հարցուներլոյ ջարդել կուզես այսպիսի մայրաքաղաք մը , և աստուծոյ ժառանգութիւնը ջնջել։ Ը.հա՛ այս է կնոջը լսած խօսքին միտքը։

Հ. ԿԳ. Յայտնի է՝ որ Դաւիթ մարդարէին ժամանակը Իսրայէլի մէջ կոտորիչ հրեշտակ իներկաւ . որ գիրը կըսէ թէ , «Մեռաւ 'ի ժողովրդէ դնէն անտի 'ի Դանայ մինչև ցԲերսաբէէ՝ եօթանասուն հազար արանց» . (Բ , Թագ. իդ. 15)։ Ը.դէ՞զ կին մարդ չի մեռաւ , որ միայն այր մարդոց համբանքը կը դնէ։

Պ. Ո՛չ. կին մարդ չի մեռաւ . քանզի Դաւիթ

ժողովուրդը համբերելուն համար՝ այդ պատիժը արվաւ ասուած, և համբած ժողովուրդն ալ գէնք կրող և պատերազմող կարիճներ էին, այս պատճառաւ պատժիչները միայն երիկ մարդ էին, և կին չի կար մէջերնին։

Հ. ԿԴ. Պատուիրած էր ասուած Իսրայէլացւոց ազգին՝ որ այլազգեաց հետ խնամութիւն չընեն, ինչպէս կրսէ "Եւ մի առնիցես զիւնամութիւն ընդ նոսա, զդուստր քո մի տացես ուստեր նորա, և զդուստր նորա մի առնուցուս ուստեր քումդ։ (Բ. Օրէնաց. է. 3)։ Սողոմոն թագաւորը ինչու այս հրամանին դէմ՝ Եգիպտացւոց փարաւօն թագաւորին աղջիկը իրեն կնութեան առաւ, ինչպէս գրած է "Եւ ի հաստատել թագաւորութեանն Սողոմոնի, խնամութիւն արար Սողոմոն ընդ փարաւօնի արքային Եգիպտացւոց, և էառ զդուստր նորա։ (Գ. Թագ. գ. 1)։

Զ. Ո՞ւ կնոջէ՛ սուրբ գրոց անպարտ կը համարին Սողոմոնը այս գործոյն համար։

Ա. Այս՝ սուրբ գիրը գովութեամբ կը խօսի Սողոմոնի համար այս բանին վրայ, և ասուածոյ կամացը հաճոյ և հաւան կերևայ Սողոմոն. քանզի նոր ամուսնացեալ էր այդ փարաւօնի աղջկան հետ, երբ սեղանամբ երևեցաւ նմա ասուած, և բազմապատիկ առաւելութեամբ խնդիրքը կատարեց։

Երկրորդ՝ այլազգեաց հետ խնամութիւն

չը լայ որ ըսվեցաւ , այլազգեաց ազգին անուն-
ներն ալ կըսբրվին , որք են Ամորհացիք , Քանա-
նացիք , Հեւացիք , Փերիզացիք , Խեւացիք , Գեր-
գեսացիք , և Յեբուսացիք , սոնց մէջ Եգիպ-
տացւոց անունը անյիշելի է . քանզի այս բուած
ազգերէն զատ եղած այլազգեաց ազգերը՝ այն-
չափ մոլի և կատաղի չէին կռոց սիրով , և իրենց
աղջիկները չէին յոժարէր , որ իրենց երիկ մար-
դիկը կռապաշտութեան մէջ ձգեն , և կը յու-
սացվէր՝ որ ճշմարտին ոչ պաշտօնեայ կըլլան
Ի՛նչ և իցէ՝ որովհետև օրէնադիրն ասուած մե-
զատարտ չի համարիր Սողոմօնը այս գործոյն հա-
մար , հարկ է որ մէք և ս մեզատրելի չի համարիմք։

Հ . ԿԵ . Սողոմօնեան տաճարին համար սուրբ
գրոյն մէջ կըսվի . «Եւ ՝ի շինել տան . . . մուրճ
(չէքիճ) և տաւնդայն քար և երկաթի՝ ոչ հնչեաց ՝ի
շինել նորան . (գ , Թագ . զ . 7)։ Այս ի՞նչպէս
կըլլայ՝ որ տաճարը մը շինվի , և երկաթեղէն գոր-
ծիքի մը ձայն չը լայ շինած ժամանակը։

Պ . Շինուածեան վերաբերեալ բոլոր նիւ-
թերը՝ քարեղէն , փայտեղէն , և այլն , այնպէս
տաշած և կոկած և պատշաճաւորէս մը չափած յար-
մարէր էին , մինչ զի գործածուածուածեան ժամանակը՝
ամենեն մեկուն իւր տեղը գիտնալ և շարել պէտք
էր։ Այս անունք որ քեւեռով հաստատուած բուն
էին , որոց մուրճ պէտք էր , անոնց քեւեռները
որած այր չէր , այլ ոլորած ոյ (պուրմալը) ոչ որ աք-

ցանով տեղը կանցունէին՝ ձայն չի հանելով։ Եւ այսպէս այս խորհրդով ըրին, որ սորվեցընեն ժողովրդոց՝ թէ անշուշտ և անզգայ իրաց առդամ լուռութիւն կը վայլէ այն տեղ, և իրենք ալ այն տուրբ տանը պատիւը պահած ըլլան։

Այն՝ որ օրինակ էր այժմեան տուրբ եկեղեցւոյս՝ այսպիսի յարգանօք Սողոմոն թագաւոր կը մեծարէ. մեզի ի՞նչ կերպ պարկեշտութիւն կը վայլէ ունենալ տուրբ եկեղեցւոյ մէջ, որ օրինակ չէ, այլ նոյն իսկն է։

Հ. ԿԶ. Բոլոր մարգարէներք աստուած ընտրեց իւր կամքը քարոզելու համար. ինչո՞ւ միայն Եղիայի՝ Այր ոչ կրավէ, և ուրիշներուն չըսվիր։

Պ. Այ՞ն Եղիայի՝ Այր աստուծոյ ըսվելուն պատճառը շատ է։

Նախ՝ զի կուստութեամբ անցոյց իւր կեանքը. քանզի Եղիայի և Եղիսէի ամուսնութեան համար բան մը գրված չէ, ինչպէս Եսայիայ և Սամուէլի համար ևս գրված չէ. և որովհետև կուսութիւնը առանձին անմարմնոց բնութիւնը կը վայելէ ըստ Սիրացւոյն՝ և անապականութեան մատ է, վասն որոյ Այր ոչ ըսվեցաւ Եղիա։

Երկրորդ՝ Եղիա նախանձախնդիր եղաւ աստուծոյ փառացը՝ իւր արտին բորբոքմամբը, և գուրսէն իրը կրակ կերևար, ինչպէս որ ինքը կըսէր. «Նախանձեցայ զնախանձ տեառն աստուծոյ զամենակալին»։ Եւ այս նախանձը Սիրոք

հոբ կանուանէ, ըստ այնմ՝ «Յարեաւ Եղիա մարգարէ իբրև զհուրս. (Սիրաս. խբ. 2)։ Լուրովհետև աստուած իմանալի հոբ կրսվի, Եղիա ալ աստուծոյ նմանութիւնը ունենալով՝ ասվեցաւ Ա՛յր աստուծոյ։

Երրորդ՝ Ա՛յր աստուծոյ բլալը ինքն Եղիա յայտնեց՝ երկինքէն կրակ իջեցնելով. (Գ. Թագ. ա. 9)։ Հանգի յիսնապետները ծաղրաբանութիւն ընելով՝ ասին իրեն Ա՛յր աստուծոյ. և ինքն ալ իրաւցընէ Ա՛յր աստուծոյ բլալը հաստատեց՝ երկինքէն կրակ իջեցնելով։

Չորրորդ՝ Ա՛յր աստուծոյ ասվեցաւ՝ իբր անկեղծ վարքին և աշխատութիւն չընելով բրած ապառնալեացը համար, ինչպէս որ քրիստոս Նաթանայէլի համար ըսաւ՝ Ճշմարիտ Իսրայէլացի՝ իբր անենանգ բարուցը և խղճմտանացը մարդութիւնը նայելով։

Հինգերորդ՝ Ա՛յր աստուծոյ ասվեցաւ, որ աստուծոյ պէս հրաշքներ կընէր, երկինքը փակելով և բանալով՝ մեռեալ յարուցանելով՝ վերացման օրը ջուրը բաժնելով։

Հ. ԿԷ. Աստուծոյ խոսակցութիւնը մարգարէից հետ՝ միայն Եզեկիէլի հետ շատ կըլլայ, և Ովդի մարգոյ կանուանէ. և ուրիշներուն այս անունը չի տար. ասոր պատճառը ի՞նչ պիտի ըլլայ։

Պ. Արուեստելիս շորս մարգարէից մեկնութիւն յառաջաբանութիւնը մէջ այսպէս կըսէ, շորս

Քերովբէները՝ որ Եզեկիել տեսաւ, խորհրդապէս շորս մարգարէները կը նշանակեն, որոնք սպասաւոր են նախկին ճշմարտութեան և անընդունակ իմաստութեան։ Բանդի առիւծը կը վկայէ Եսայեայ, եզն՝ Երեմիայ, մարդն՝ Եզեկիէլի, և արծիւն՝ Դանիէլի։

Բ. Մարդ՝ առիւծը Եսայի մարգարէին օրինակ ըլլալը յայտնի կերևայ իւր խօսքերէն՝ որ կըսէ, «Այսպէս ասաց ցիս տէր. գնա՛ դու անձամբ անձին դէտ լինիջիր, և զոր ինչ տեսանիցես՝ պատմեսջիր դմա. (Գ. Լ. իա. 6)։ Իբրև դարձեալ՝ հատար 8. «Եւ կոչեաց առիւծն (ըստ այլ թարգ.) կացի զտիւն ողջոյն և զգիշերն ամենայն՝ ի վերայ բանակին»։ Բանդի առիւծը իւր զգուշութեանը համար օրինակ է դէտի կամ պահապանի։ Սուտ Եսայի կը կանչէ և կոչուայ, և կայծակահար է առիւծի նման ըսելով՝ «Ո՛ւր երկին, «և ունկն դիր երկիր. . . վայ ազգի մեղաւորի. «ժողովուրդ որ լի է մեղօք, սերմն ժանտ, որ«դիք անօրէնք, թողին զտէր, հայհոյեցին զա«նուն Իսրայէլի, օտարացան և յետս կացին. . . «լուարո՛ւք զբան տեառն իշխանք Սոդոմացւոց, «ունկնդի՛ր օրինացն աստուծոյ ժողովուրդք Գո«մորացւոց. . . . զիարդ եղև պոռնիկ քաղաքն «հաւատարիմ լի հաւատով՝ յորում արդարու«թիւնն հանգուցեալ էր՝ և արդ սպանողք ե«ղին, իշխանք ձեր ապստամբք գողակից են գո«ղոց։ սիրեն զկաշառս, վրիժագործք. (Գ. Ա. 1)։

Եզն՝ Երեմիայի օրինակ էր, յայտնի է իւր

անձանձիր ջանքէն, որով հերկեց աստուծոյ արարչ՝ այսմիջոցն Իսրայէլի ազգը, և միշտ նեղուն թիւն քաշեց Հրէաներէն, որոնք վերջապէս իրրև զոհ աստուծոյ մատուցին, և քարկոծելով մարտիրոս ըրին։ Ի՛նչ անոր խօսքերը, «Եւ ես իրրև ըզգառն անմեղ (ըստ Եբրայեցւոց իրրև զեզն) վարեալ ի սպանդ՝ ոչ գիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդս՝ և ասեն, արկցո՛ւք փայտս ի հաց նորա, և ջնջեսցո՛ւք զնա յերկրէն կենդանեաց։ (Գլ. ԺԱ. 19)։

Ա՛յրդն՝ Եզեկիէլի օրինակ էր՝ ինքն ասուած սրբոց։ քանզի երբ իւր հրամանը Եզեկիէլի կը յայտնէր, միշտ որդի մարդոյ կանուանէր։ Ի (Ռէ Գլ), այսպէս կըսէ. «Եւ խօսէր ընդ իս՝ և ասէր, որդի՛ մարդոյ՝ կաց ի վերայ ոտից քոց՝ և խօսեցայց ընդ քեզ։ Եւ թէ՝ «Որդի՛ մարդոյ, ես առաքեցից զքեզ առ որդիսն Իսրայէլի՝ առ ազգս ուրացողս։ Եւ թէ՝ «Որդի՛ մարդոյ, ա՛ռ քեզ ագիւս մի, և այլն։

Ա՛րծիւն՝ օրինակ էր Դանիէլի։ քանզի Դանիէլ շատ իմաստուն էր իւր ժամանակակից մարդկանցմէն։ Ուստի աստուած ծաղը ընելով Տիւրոս թագաւորը՝ որ ինքը զինքը շատ իմաստուն կը համարէր, կըսէ. «Մի՞թէ իմաստնագոյն ես դու քան զԴանիէլ, ամենայն խորհուրդ չէ ծածկեալ ի քէնոյ։ (Եզէ. իբ. 3)։ Քանզի Դանիէլ ամենևին գինի չէր խմէր, և արծիւի նման բարձրաթռիչ դէպ ի երկինքը սլանալով մտաք, և միշտ ընդ աստուծոյ խօսելով՝ յաւիտենականու-

թիւնը կը նկատէր , իբր թէ արժիւ ի աչքով մեր մեսաւ հետեւալ տարիներուն ան ընդ հատուիթիւնը , և համառ եղաւ աշխարհի վրայ ապագայ բաներուն։

Հ. ԿԸ. Ինչո՞ւ Սիրոմբէն կայծակամբ մերձեցաւ Եսայի մարգարէին շրթանցը. (Եսայի. զ. 6)։

Պ. Կրուանելիոս կրսէ՝ թէ մարգարէին շրթանց մեզբը պատժելու և քաւելու համար՝ կայծակամբ այրեց. քանզի Եսայի մեղանչեց Ոգեան չի սասան լրմը , որ սեղանին կայծակունքը և խունկը յափշտակեց. ուստի կայծակամբ պատժեցաւ , ինչպէս որ և Սիրոմբէն կրսէ՝ «Ահա մերձեցաւ այս ի շրթունս քո , և հանցէ զանօրէնութիւնս քո , և այլն»։

Հ. ԿԹ. Ի՞նչպէս իմանալ պէտք է մարգարէին այն խօսքը , որ կրսէ՝ «Գնա՛ ժողովուրդիս , մնա՛ ի շուն մարդանս քո , փակեա՛ զդուռս քո , թաղիր առ ժամանակ մի՝ մինչև անցցէ բարկութիւնն ահաւոր»։ (Եսայի. իզ. 20)։

Պ. Խորհրդականաբար այսպէս կը մեկնէ Կուանելիոս , «Գնացէք մի՛ մարտիրոսք՝ մի՛ արգելք ի գերեզմանս , և այն տեղ ենջեցէք ժամանակ մը , մինչև որ անօրէնների պատժեմ , և յետոյ կարթնցնեմ ձեզի մահուան քնէն՝ երջանիկ կենացը արժանացնելու համար։

Հ. Հ. Տեսլեամբ երևեցաւ Դանիէլի՝ որ չորս գազան կի լայր ծովէն, որոց առաջինը էգ առիւծի նման թեւաւորէր. երկրորդը արջու նման էր. և երրորդը ընձու նման. և չորրորդը ահեղ և զարմանալի։ Այս չորս գազաններով ի՞նչ պէտք է իմանալ. (Դանիէլ. է. ՁԵ)։

Պ. Այս չորս գազանները՝ չորս թագաւորութիւնք են. էգ առիւծը՝ Ասորեստանեայց տէրութիւնն է. արջը՝ Պարսից տէրութիւն է. ընձը՝ Յունաց տէրութիւն է. և չորրորդ գազանը՝ Հռովմայեցիք են։ Այս չորրորդէն ելլան պիտի տասն եղջիւրք, այսինքն տասն թագաւորք՝ և այն ի ժամանակս կատարածի աշխարհի։ Այս փոքրիկ եղջիւրն՝ է նեռն, որ յաղթէ պիտի երիք թագաւորաց, և յետոյ մնացեալ եօթն տէրութիւնները յոժարութեամբ պիտի հնազանդին նեռին։ Այսպէս կըսէ Կուռնելիոս։

Հ. ՀԱ. Ինչո՞ւ համար մարգարէից խօսքերը խրթնութեամբ գրեցան, և ո՛չ պարզապէս։

Պ. Այդ հարցմանդ այսպէս կը պատասխանէ Երոնիմոս. «Այսուքն՝ թէ սուրբ գրանքն «են հիւսեալք գժուարութեամբ, և մանաւանդ «գպտէս մարգարէք՝ որք են լի առակօք. վասն «զի գժուարութիւն բանից պատիցէ զգժուա- «րութիւն մտաց, զի մի գիւրապէս արձակիցի «սուրբն՝ շանց, և մարգարիտք՝ խոզաց, և սըր- «բութիւն սրբոց՝ ապստեղեաց։

Հ. ՀԲ. Լսորս. Թագաւորին այսինքն Ագեբայ որդւոյն զօրապետը Նեեմանն Ասորին էր՝ որ բորոտեալ էր. այս Նեեմանը Յովրամայ Իսրայէլացւոց Թագաւորին քով խրկեց՝ ինչ և ինչ բժշկեցաւ. և որովհետև Նեեմանն և իւր Թագաւորն ալ կռապաշտ էին. Նեեմանն բժշկիլովն ասուռածապաշտ եղաւ, և եկաւ Եղիսէի շնորհակալութիւն տալ, և յետոյ այսպէս ըսաւ, «Լաւեցէ՛ սէր զծառայ քո՝ 'ի մտանել տեառն «իմոյ 'ի տուն Ռեմմոնայ երկիրպագանել նմա, «յորժամ յենուցցու 'ի ձեռս իմ, և երկիրպա«գանիցեմ 'ի տանն Ռեմմոնայ. . . և քաւեսցէ «սէր զծառայ քո վասն բանին այնորիկ։ Յետ ա«սէ Եղիսէէ ցՆեեմանն, երթայ խաղաղութեամբ. (Գ, Թագ. Ե. 18)։

Ի՞նչք բանին այս է, որովհետև Նեեմանայ Թագաւորը կռապաշտ էր. և Նեեմանն Եղիսէի կըսէ, թէ Թողութիւն տուր ինձ, որ երբ իմ Թագաւորս Ռեմմոնայ կռքատունը կերթայ երկրպագութիւն ընել՝ հարկաւ ես ալ հետը կը գանըվիմ, և ձեռացս վրայ կռթընելովն երկրպագութիւն ըրած ժամանակը՝ յայտնի է որ ես ալ գլուխս պիտի խոնարհեցընեմ հետը, ինձի Ներողութիւն ըրէ՛ այս բանին համար։ Այն ալ կըսէ՝ թէ երթայ խաղաղութեամբ, որ կերևայ՝ թէ աղաչանքը ընդունուած է. այս ի՞նչպէս իմանալու է։

Գ. Այդ հարցմունքին վրայ շատ վիճաբանութիւն կըլլայ մեկնչաց և աստուածաբանից մէջ։ Ամենք պարզապէս այդ խօսքը կարդալով՝ Նե-

Էմանայ գործն ալ գաստապարտելի կը համարին, և մարգարէին տուած պատասխանն ալ, իբր թէ կնոջ աւորութիւն էր (կրանն) Ի հաւատոյս. մոքով տուած պաշտելը՝ և յայտնապէս յաշխ մարդկան կուապաշտ ձևանալը։

Մանք և ս կուզեն՝ որ երկուքն ալ բամբասանքէ ազատեն, այդ խօսքը՝ անցեալ մեղացը կը վերաբերեն, իբր մարգարէն աղօթք ընէ Նէէմանայ համար՝ որ անցեալ կուապաշտութեան մեղացը՝ ներողութիւն ըլլայ, կամ թէ ս այդ շար սովորութիւնը իրմէն վերցրէ, որ սովորութիւն ըրած էր՝ իբր թագաւորին հետ Ռեմանայ կուռքին երկրպագութիւն ընելը։

Ա. այս միտքը բնագրին չի վայլեր։ Ուրեմն ըստ մեծագոյն մասին ոչնամիտ մեկնաց և տուռաժարանից ասելի է, թէ Նէէմանայ խօսքը իբր անցեալ կուապաշտութեանը համար չէր, և ոչ ալ հրաման խնդրելէր՝ յաշխ մարդկան երկրպագութիւն ընելու կուռց, և Եղիսէ ալ այդ մաքը թոյլատուութի չըրաւ։ Ա. ՍԼ ԼՈՒ կուքաւուն երթալ մի էր թագաւորին հետ, և թագաւորին երկրպագութիւն ըրած տեղը՝ ձեռք տալ իրեն, որով հարկ կըլլար իրեն ալ խոնարհիլը։

Նէէմանայ այս գործողութիւնը արտաքին պարզ՝ և քաղաքական պաշտօն մի էր, որ թագաւորին կընէր՝ ոչ միայն կուռատանը մէջ, այլ ամէն տեղ՝ ուր որ կերթար թագաւորը։ Ի. Նէէման կատարելապէս միտքը յայտնեց Եղիսէի, ոչ ծածկաբար՝ այլ յայտնապէս բոլոր

Աստուծոյ առջին, որոնք այն տեղ գտնվելուն իրեն հետ. քանզի գիտցաւ ճշմարտապէս, թէ ո՛չ գոյ աստուած 'ի վերայ երկրի։ Այս խոստացաւ այնուհետև մատաղ չընել օտար աստուածներու՝ այլ միայն տեառն երկնի և երկրի. ուստի Իսրայէլի երկիրէն հոգ ուզեց, որ հետը Դամասկոս տանի, և այն տեղ առանձին տեղուն մը կանգնեցնէ՝ յայտնապէս աստուած պաշտելու համար։

Այդ՝ օտար աստուածներու այսպէս յայտնի գուրս ձգելը, և բոլորին առջին Իսրայէլին աստուծոյ պաշտօն մատուցանելը՝ բաւական էր ամէն կերպ կասկածը և կեղծաւորութեան միտքերը իրմէն վերցընել, որ բոլորին ալ յայտնի ցոյց տրվաւ՝ թէ այն գործը քաղաքական պաշտօն մի է միայն իւր թագաւորին, բայց խղճմտանքը չի տանելուն համար Եղիսէէն ներողութիւն խնդրեց։ Այս այսպէս ըլլալը՝ և Նէէմանայ միտքին շիտակութիւնը՝ Եղիսէ աստուածային հոգւոյն շնորհքը գիտնալով, թոյլ տրվաւ Նէէմանայ ո՛չ մարդկօրէն կարծելու, այլ երկնաւոր լուսով, որ ինչպէս իւր աստիճանին վրայ աստուածպաշտութիւնը ինչպէս մը չի բերելու։

Հ. ԺԳ. Այսպէս մարդասիրութիւնը մէջ գրված է, «Խուռն հարկանիցեն ելօթն կանայք «զառնէ միոջէ, և ասիցեն՝ հաց զմեր կերիցուք, և հանդերձ զմեր զգեցցուք, բայց միայն «անուն քո կոչեսցի 'ի վերայ մեր, քակեա՛ 'ի

«մէնջ գնախատենս մեր։ (Ֆ։ 1)։ Այս խօսքով ի՞նչ պէտք է մեզի իմանալ։

Զ։ Երկրորդ գլխոյն մէջ Հռովմայեցւոց ձեռքովը Երուսաղէմի կործանումը կը մարգարէանայ, և այս չորրորդ գլուխէն ետքը՝ այն կործանմանէն ինչ որ կը հետևի՝ այն ցոյց կուտայ։ քանզի այնքան մարդ պիտի ջարդուին, թէ սղոսթեամբ՝ թէ պատերազմաւ՝ և թէ ուրիշ կերպ նեղութեամբ, որ հազիւ եօթն կնկան մէկ էրիկ մարդ մը պիտի իյնար։ Այսպէս կը մեկնեն Հերոնիմոս և Պիւրեղ ըստ նկարագրական մեկնութեան։

Լակ սուրբն Բարսեղ՝ եօթն կանայքը հին օրինաց բոլոր ժողովարանն է կըսէ։ իւր հացովը՝ այսինքն իւր օրէնքովը ըլլալով՝ կը բռնէ մէկ մարդ մը՝ այսինքն գրքրիստոս, կուզէ որ հոգևորապէս թեան նախատինքէն ազատի։ ահա այս ալ յարմարական մեկնութիւն մի է։ Այլց մեզի խորհրդական մեկնութիւնմը տալ կը վայելէ, որ եօթն կնիկով՝ այնչափ ժողովուրդը կիմանամք՝ որք ի հեթանոսաց եկին քրիստոնէական հաւատքին, որք քրիստոսի սիրով հաստատ ուներլով այն հաւատքը, կըսեն՝ մեք մեր հացը կուտենք։ իրբ թէ որ հաւատք կուզես, ահա քանանացիին հաւատքին նման հաւատք։ եթէ կուզես հաւատքը բարի գործով զարդարեալ ըլլալ՝ իրբ հանդերձով, ահա քեզ Ջաքէոսին գործոյն նման գործ, որ իւր ընչից կէսը աղքատաց տրվաւ, և որուն որ զրկանք ըներ էր՝ չորեքկին ջնորհաբէնը

տրեալ, միայն քրիստոնէական անուանը մեր վրայ բլլայ։ Ի երցու մեր վրայէն նախատանաց առնուելը, այսինքն հեթանոս բառը, և մի՛ ասէր՝ «թէ ո՛չ ուրիք առաքեցայ, եթէ ո՛չ առ պչխարս կորուսեալս տանն Իսրայէլի»։

Հ. ՀԴ. Խորհուրդ գրքերը գիտութիւնը կը գովեն. ինչու համար Սիրաք կըսէ, «Որ յաւելանայ ի գիտութիւն, յաւելանայ ի ցաւս» (Սիր. ա. 18)։

Պ. Հմարիտ է, քանզի որոյ որ քաղցր կերեւայ խնամատութիւնը, և անով ալ առաքինութիւնը, լեղի կերեւայ իրեն բոլոր մարմնաւորը զբաղանքները՝ այս է ըսելն Յաւելանայ ի ցաւս։ Քանզի կըսէ Օգոստինոս, «Յետ ճաշակման հոգւոյն՝ դառնանայ մարմինն»։ Լաւ՝ գիտութեան մարդուն շատ ցաւալի կերեւայ շատ մարդոց վարքը, ինչպէս որ Դաւիթ կըսէր, «Հայեի յանապատս ոչինչն և մաշեի, զի զպատուիրանսն քո ո՛չ պահեցին» (Սաղ. ՃԺԸ. 158)։ Հմա այսպիսի ցաւերէ՝ որ կատարեալ գիտութիւնը իւր գիտութենէն կառանայ. վասն որոյ ասաւ Սիրաք, «Որ յաւելանայ ի գիտութիւն, յաւելանայ ի ցաւս»։

Հ. ՀԵ. Լատայի մարդասէրն քերանով կըսէ սատանան Հրէից ժողովրդեանն, «Ո՞վ է՝ որ տրիտանակից լինի քեզ, երկու ինչ հակառակ կան քեզ,

կործանում են և բեկում են, սով և սուր։ (Ծա. 19)։ Զ՚դդ՝ երկու բան, և շատ յայտնեց։ այս ինչ միտք պիտի ըլլայ։

Պ. Կործանում են և բեկում են՝ պատիժ քաղաքին է, մի է։ սով և սուր՝ պատիժ քաղաքացոց է, այն ալ մի է։ ահա այսպէս երկու երգաբ բան աւանդարկեալ հարցմանդ։

Հ. ՀԶ. Ինչ պիտի ըլլայ Եսայի մարգարէին բանին միտքը, որ կըսէ՝ «Մի լցցի անդ տարաժամ աւուրց, և ծերք որոյ ոչ իցէ լցեալ զժամանակս իւր, զի երիտասարդ որդին՝ հարիւրամեան, և որ հարիւրամեանն մեռանիցի, մեղաւոր և անիծեալ կոչեսցի։ (կե. 20)։

Պ. Զ՚դդ խօսքը այսպէս կը մեկնեն. Տարաժամն աւուրց՝ (այսինքն տակաւին չի հասած) երախայ (այսինքն տղայ) կանուանէ, որ շատ օրեր և տարիներ ունի իւր հասակին մէջ, բայց խմաստութեան և բարի բարուց կողմանէ՝ երախայ է։

Զ՚դդ՝ աւուրց երախայ բառը կիմացվի մանուկ հարիւր ամաց։ իբր թէ քրիստոսի ժամանակը ճշմարիտ քրիստոնեաները մէկ հասակաւոր չէին ըլլար. որոնք իրենց բարուց թիւրութեամբը և թեթեւութեամբը մանկունք են, բայց ամէնն ալ կենաց մաքրութեամբ և շնորհք և առաքինութեամբ կըլլան այր կատարեալ. թէպէտ ասոնց մէկ ըղմէկն յարմար

չեն գար. քանզի ոմանք մեծ կըլլան արքու-
թեամբ՝ և ոմանք փոքր։

Դարձեալ՝ հոգևորական ծնողքն մկրտու-
թեամբ՝ սակաւ առուրց երախայ չեն համա-
րիր, այլ որպէս շնորհիւ կատարեալ արանց՝ ա-
ռաքինութեամբ կատարեալ կըլլան իսկոյն, ինչ-
պէս էին առաջին քրիստոնեաներն։ Այս խօսքին
միտքը այս ըլլալը հեռուներալ խօսքն յայտնի է,
նէ ծեր՝ որ ո՛չ լուսաւորեալ է, այսինքն՝
որ նոր օրինաց մէջ երախայ չըլլար, և ո՛չ ծեր
առուրքք՝ այսինքն որ իւր օրէնքը չի կատարէր
առաքինութեամբ. ապա ծերքն քրիստոնեու-
թեան մէջ՝ նեմանապէս և մանկունք՝ կը կատա-
րեն իրենց տարիները առաքինութեամբ։

Այլց որ կըսէ՝ Կրոնաւոր որդին հարիւրա-
մեան, և այլն. այսպէս կը մեկնըվի. նոր օրէնքին
մէջ մեղաւորս հաւատացեալ չի մեռնիր, այսինքն
նոր օրինաց մէջի հաւատացեալ մեղաւորը եկե-
ղեցիին դուրս չի ձգվիր՝ չի անիծվիր, մինչև
հարիւր տարեկան չըլլայ. հարիւր տարեկան ըսա-
ծը՝ տարի մի իմանար, այլ անոր կըսվի հարիւր
տարեկան որ՝ ինչպէս հարիւր թիւը կատարեալ
համրանք է, նոյնպէս հարիւր տարեկան այն պիտի
իմանանք, որ մեղք կատարեալ եղած կըլլայ՝ և
մեղք գործելը իրեն սովորութիւն կըլլայ, և
ինքը և անամօթ կանուանի։

Այսկից կիմացվի՝ որ ապիրատութեամբ մեղան-
շողը եկեղեցիին դուրս չի ձգվիր, մինչև որ մե-
ղաց վրայ սովորութիւն ըլլալու հասակը կատար-

եալ չբլայ , ահա այնպիսին պիղծ և անիծեալ կլսվի . այնպիսին է հարիւրապատիկ ծերը , այն է՝ որ կլսվի հարիւր տարի կան մեռած։

Լաւ՝ ամենք այսպէս կը մեկնեն , քրիստոսի և կիրակոսեանց մէջ մանկուներ անգամ՝ որ 'ի տուրբ աւազանէ կը ծնանին , իսնաուռ թեամբ և քրիստոնէական աստուածութեամբ կատարեալ մարդիկ են . և ասկից կը հետևի՝ որ տարիքով կատարեալ եղողը՝ եթէ 'ի շնորհաց լրութեանէ թերի ըլլայ՝ մեղաւոր և անիծեալ կանուանի։

Հ. ՀԷ. Կրուզեմ տարմիլ Եղեկիէլ առաջին տեսլեան մեկնութիւնը՝ որ 'ի գլուխն մէկ մինչև 'ի վերջ գլխոյն . բայց երկար ըլլալուն համար համառօտելով մը գրուցցեմ , որ պատմածը տուաւ «Լսեցէք նոա թիւրն Եղեկիէլ (երբ ժողովրդոց «հետ էր 'ի ժամանակս գերութեան 'ի Բաբելո- «ն) Մինչ կայր յերկրին Քաղդէացւոց 'ի վերայ «Քորբար գետոյ , անդ եղեն ձեռն տեառն 'ի «վերայ իմ , և ահա հողմ մրրկեալ . և ամպ և «հուր՝ և փայլատակումն գոյր 'ի հիւսիսոյ։ «Լոյն ամպ , անտարագոյն 'ի ծայրս՝ երևէր ու- «նեալ շուրջանակի իբր լուսազին վերջաւորս «կամ քրանցաւ Իսկ 'ի մէջն՝ վառումն գոլորշ- «եաց իբրև հուր շառագոյն ճառագայթեալ , «և բնրէր զնմանութիւն բազմագունի ակամուր «Ի մէջ հրոյն երևէին կենդանիք չորիցն կեն- «դանեաց , որք թուէին իբր բազկացութիւն

“հրէշաւոր. ձեւ իւրաքանչիւրոց առ հատարանկ՝
“էր ըստ կազմուածեան մարմնոյ մարդոյ, այլ ոչ
“նոցա կձիրակարաշխ՝ նման ոտից որձուց, և
“կայծակուն՝ թռչմանիւն՝ ի նոցանէ իրրև՝ ի
“հրացեալ պղնձոյ։ Իւրաքանչիւր՝ ի նոցանէ՝
“ունէր չորս թեւս, յորոց երկուքն տարածեալ՝ ի
“վերուստ իրրև հանդերձք ծածկէին զմարմինս
“իւրեանց, և երկուքն էին բացեալ և սաւառն-
“եալ՝ իրր՝ ի թռչիչս պատրաստեալս։ Ի նեղբուստ
“թեւոց նոցա երանէր երկու ձեռն մարդոյ, և
“զի անցնիւր՝ ի հրէշից անտի էին՝ ի չորեսին
“անկիւնս մեծի կառաց. վասն այնորիկ յամենայն
“անկիւնս կառաց երեւէին երկու ձեռք մարդոյ։
“Ի կրծոց մարդոյն երանէր պատանոց, և՝ ի վերայ
“նորա գլուխ մարդոյ. առ որով՝ ի վերայ աջոյ
“թիկան էր գէմք առիւծու, և՝ ի վերայ ձախոյ
“թիկան գէմք եզին, և՝ ի վերայ գլխոյ մարդոյն
“ցցուեալ կայր՝ և իրր թէ անտի ելեալ՝ գլուխ
“արծուոյ։ Ի՞նչ չորք գէմք միացեալ հայէին
“միաբան՝ ի մի կողմն, և՝ ի շարժիլ իւրեանց ո՛չ
“դարձուցանէին յետս զերեսս, այլ իւրաքանչ-
“իւր հանդէպ երեսաց իւրեանց գնացին ուղիղ
“առ մի կէտ, ո՛չ յաջ և յահեակ խոտորեալ,
“յորս կողմն հրամայէր նոցա աստուած՝ երագս
“ընթանային և թեթեւս դառնային. բայց միշտ
“ընդ գիծ ուղիղ հանդէպ երեսաց իւրեանց։
“Հոգմ էր նոցա առաջնորդ և ուղղիչ, ընդ որ
“կոյս շնչէր՝ ընդ այն վարէր զնոսա, և չընթա-
“ցին նոքա թռուէր կայծականց թռչմանիւ և

«փայլատականց հատանիլ։ Լոյն ինչ հայեր նզե-
«կիսել հրացմամբ ի հրեշս այնոսիկ, եւ ոչ զհետ
«նոցա կարաս քարանիս, այլ նոքա ոչ ձգէին
«զնա, եւ ոչ ընդունայնին յառաջոյ իրրեւ ընդեալ
«ի նա. բայց միայն զի իւրաքանչիւր գազանէր
«մնաս առ մի անիւ։ Լարածուն էին անիւքն, եւ
«կերպարանք նոցա եւ գործուած նման միմեանց՝
«որպէս թէ ի մի գազափար գործեալ։ Լոյս ի
«գնալ իւրեանց այնպէս զուգահեռ ընթանայ-
«ին, զի ի մազէ ոչ թեքէին տրտաղոյ գծի, եւ
«իրր մի միայն անիւ երեւէին։ Լոյս շարժուին
«նոցա ոչ կոյր ընթացք, քանզի լի էին աչօք
«շրջանակք նոցա. եւ այնպէս իմն երեւէին որպէս
«թէ տեսանել զնանապարհ ընթացքին իւրեանց։
«Լոյս թէպէտ ոչ շարժէին ի ձգելոյ գազանա-
«ցին, բայց այնպէս եշուէին զգնացս իւրեանց
«ընդ գնացիսն գազանաց, զի ընդ նոսա գնային,
«ընդ նոսա վերանային, եւ ընդ նոսա զուտ զի առ-
«նուին բան վարելոյ հոգմոյն եւ ամպոյն. եւ երբ-
«էր հոգի կենդանւոյ թեւան լինիլ յանիւսն։
«Հատատուն թիւնն կամ երկինք այնր հրաշա-
«տեսիլ կառուցն, որ տարածեալ ձգէր ի վերայ
«անուցն եւ ի վերայ գլխոյ գազանացն՝ բեր-
«զուտիլ ակամն վանուցն՝ որ զօրէն հայելւոյ ե-
«րեւեցուցանէր փայլակնացայտ կայծակունս՝ եւ
«ցոլմունս հրոյ, որով եւ տեսիլ հատատուն թեւանն
«ահաւոր իմն երեւէր. գոյն անուցն՝ նման էր
«ականց թարշշի, կամ որպէս ընթեռնու բան-
«նին՝ ծովագոյն. եւ շարժուին նոցա իրրեւ մրրիկ

«ինչ, որպէս թէ շրջիցի անիւն ի մէջ անուցն։
«Եւ զ նոցա ի տառառնելն հնչէին իբրև զձայն
«ջուրց բազմաց. այլ յորժամ բաղխէին զիմն
«ի միոյն, հնչէին իբրև զձայն պատերազմող
«բանակի, իբր շաչիւն զինուց, շառաչիւն կա-
«ռաց, փռնչիւն երիվարաց, հնչիւն փողոց, գո-
«չիւն զօրաց, և ոռնոռձայն բազմութեան, որ և
«էր իբր երրորդ իմն ձայն և սահարկու ամբո-
«խուն։ Եւ վերայ հաստատութեան՝ որ ի վերայ
«կառուցն, զոյր ամենայն իբրև զսեպհական շա-
«փիւղայ, և ի վերայ ամենայնի՝ նմանութիւն
«կենդանեաց մարդոյ, որոյ առորին մասն մի-
«ջոցք շարի ի խառնարհ նմանութիւն հրոյ. իսկ
«վերին մասն իբրև զսեպհական ական բազմագունի.
«և յաշացն երևէր բոց հրոյ ցոլանալ շուրջա-
«նակի. և շուրջ զամենայնմիւ տարածէր նմանու-
«թիւն աղեղան՝ որ ձևանայ ի երկինս։ Այս սե-
սիլբին մէջ երևցածներուն խորհուրդը ի՞նչ
պիտի ըլլայ։

Գ. Այս սատուածացոյց սեսիլքը՝ երևելի
մեկնիչք զանազան կերպիւ կը մեկնեն, մասնա-
ւանդ խորհրդական մեկնութեամբ. բայց մեք
յոմանց մեկնչաց առնալ զդրսական մեկնութիւն
առին՝ դնենք այս սեղ, որ յարմար կու գայ պա-
տրաստայից ժամանակին. ապա մէկ մէկ մասն առ-
նելով սեսլեան մէջի խօսքերը՝ զսա զսա խօսիմք։
Հոյց տրվաւ սատուած Եզեկիէլի այս սեսլեանս
մէջ, Երուսաղէմի կործանման նշանը մօտ ժա-
մանակէ մը։

Մրդ՝ որ ասաւ, «Հրէշ քառադէմ և քառաթեւակեալ ի յորեսին անկիւնս կատաց»։ Մրդ՝ Նաբուքոդոնոսոր թագաւորն է, որ պատրաստ էր ուներնալ իւր ցեղին մէջ՝ Իսրայէլացւոց Յուդայի ցեղին թագաւորութեան՝ յորս անդամ գերի ընելը. առաջին անգամին իւր մեծ պապը՝ Մանասէ թագաւորը գերի ըրաւ, որ Յուդայեան ցեղին թագաւորն էր. երկրորդ՝ ինքը գերի ըրաւ Յոյակիմ թագաւորը։ Երրորդ՝ գերի ըրաւ Յեքոնիա թագաւորը. չորրորդ՝ պատկաս ունացածնելու Սեդեկիա թագաւորին գերութեամբը կատարեցաւ։

Ասոնց կերպարանք՝ որ էր գլխաւոր ի հրէշն այն, որ և յինքն ունէր պատուաստեալ զայլ հրէշս, նա ինքն էր Նաբուքոդոնոսոր թագաւորն, քանզի Երուսաղէմ քաղաքին կործանմանէն ետքը՝ ինքը պատրաստ եղեր էր գլխաւոր ըլլալու։

Ուրեմն՝ Պարսից թագաւորութիւնը խմացիր։ Երեք՝ Ասորեստանեայց թագաւորութիւնն է, որ այն ժամանակը Բաղդէացւոց լծոյն ներքև ինկած էր։

Չորրորդ՝ որ ամբարձեալ ունէր զգլուխն ի վերայ այլոց, Մարաց թագաւորութիւնն է, որ այն միաբանութեանը մէջ՝ Նաբուքոդոնոսորայ հետ ծոմային կրթութիւն կընէր՝ և կը զօրանայր, և պատրաստ եղած էր ուրիշներուն վրայ ձեռի երլալ, որ Արտաշէսի և իւր որդւոյն Դարեհի ժամանակը եղաւ, որ իւր իշխանութեանը

ներքև ը առաւ Պարսից ազգը՝ Ասորեստանցիներ-
ը՝ և Քաղդէացիներն ը՝ որ այժմ միաբանեալ
են Եբրայեցւոց դէմ։

Ի՞նչ որոշութիւն երեսաց շորից հրէշից՝ ուղ-
ղեալ ի մի կողմն, և յառաջխաղաց հանդէպ
երեսաց իւրեանց, այն երեք թագաւորաց սերա
միաբանութիւնը ցոյց կուտար՝ որ Եբրայեցւոց
ազգը նեղեն։

Կնճռակ որթաւ յոտս, ուրիշ փոքրիկ իշխանու-
թիւններն ը ցոյց կուտար, ինչպէս Փղշտացիք՝
Եդոմայեցիք՝ Ամմոնացիք, որոց եղջիւրը որթաւ
եղջիւրի նման տակաւին ակար էին զարնելու,
բայց և այնպէս՝ իրենց եղուանդները օգնութեան
դրին Երուսաղէմի կործանմանը։

Խաներն՝ արագութեան նշանակ են։ Թռչք և
փայլատակունք՝ կարճր խոսութեան նշանակ են։

Ձեռն մարդոյ ի շորեսին անկիւնս, նշան է
ընդ հանրապէս կորստեան ըստ և յատկապէս ըստ, որ
պատրաստ էին ընել՝ ամենն բանի ձեռք զարնելով։

Ընթերցն ի աչաց, և զոր ընթացաց ի գնացս
ընդ գազանաց, ասելք զիւնս որոց արագութիւնք
օրինակ են, որոնք ամենն բան կը կատարեն իրենց
գլխաւորին հրամանաւ ը. և ցուցակ են արթութեան
և զգաստ ըլլալու պահպանութեան վրայ, որ ա-
մենեին ճանապարհ չի տան փոխանակեան զարնը-
ված Եբրայեցւոց։

Լոռ ծովագոյն ասելով անուանեն, ցոյց կուտար
զօրքին անհամար բազմութիւնը, որ ծովու նման
ամենն կողմ ցրուած էին։

Պատանք՝ որք ի սկզբան տեսլեանն յառաջադէմ գնային, և զի բնա իւրեանց ի գնալն յետս ընդդէմ ոչ դարձուցանէին, ցոյց կուտան ձիաւորք զբրքերբ, որ դառնալու չէին իրենց երկիրբ՝ մինչև չի կործանեն Երուսաղէմ քաղաքբ։

Լոյս յերկրորդումն տեսլեանն՝ զի երևէին գրնալ և ի դառնալ, ցոյց կուտան ձիաւորք զբրքերուն յԵգիպտոս երթալ զարմանելբ, և Եգիպտացիք փախցընելէն եռքբ իրենց երկիրբ դառնալին։

Լ.թուն՝ որ էր ի վերայ հաստատութեան կառացն, և մարդն նստեալ ի նա՝ ցուցանէր զաստուած, որ իւր ամենակալութեամբբ այս ամենբ պիտի ըլլար։

Լ.ղեղն՝ որ կայր շուրջ զաթոռն, ցոյց կուտար՝ որ յետոյ աստուած պիտի հաշտվի ժողովրդեան հետ, և Երբայեցւոց ազգբ վերանալն պիտի նորոգվի։

Լ.հան գրեան մեկնութիւն տեսլեան Եզեկիել մարգարէին, թէպէտ վարդապետք շատ խորհրդաւոր մեկնութիւն կուտան, և այս տեղ մեզի պէտք եղածբ բաւականաչափ էբ։

Հ. ՀԸ. Նախբը մեկնելէդ եռքբ, այս հատուածս յայտնութիւնբ և ասել, որ նոյն մարգարէին յայտնեցաւ ոչ տեսլեամբ՝ այլ ըսելով. «Եւ տեսի ձայն թևոց գազանացն սաստառնելոց ընդ միմեանս, և ձայն անուանց զհետս նոցա, և ձայն

շարժման։ (ԵՂԻ. գ. 13)։

Գ. Ի՞նչ ձայնը ցոյց կուտար՝ այն թագաւորաց միաբանութիւնն է, որ առաջին անմիջին մէջ ըսինք, որ միշտ չի պիտի մնայ. և յետոյ այն միաբան ելոյթները մէկզմէկու վրայ պատերազմ պիտի բանան. որ կատարեցաւ Ասորեստանայ թագաւորութիւնն որը, և Պարսից ազգը նոր ասնեց, և յետոյ Քաղդէացւոց ազգը և Պարսը հնազանդեցոյց, և ամէնն ալ իւր իշխանութեան ներքևը առաւ։

Հ. ԺԹ. Շատ ատեղ սուրբ գրոց մէջ՝ Գոգ Աբրահամու գրված է, ի՞նչ հասկընալու է այդ խօսքը։

Գ. Սուրբն Դիոնէսիոս՝ ասող ասոց և բանական հանգիստը կիմանայ. քանզի ինչպէս որ ողջոյնը իրենց ծնողաց գոգը՝ անհոգ և անելիկիւղ կը հանգչին, նոյնպէս ասող ասոց գոգը՝ այն երանելական հանգստանքը մէջ հանգիստ կը լլան. և իրենց կամացը հակառակ բան մը ամենևին չի կրնար տիրել։

Հ. Զ. Հարցուցած հարցմունքիս նման՝ երբեմն սուրբ գրոց մէջ՝ Երկիր կենդանեաց կըսվի. ի՞նչ պիտի ըլլայ այդ կենդանեաց երկիրը։

Գ. Երկիր կենդանեաց ըսելով՝ արքայութիւնը իմացիր, որոյ փառքը վայելողները՝ մահկանացու չեն ըսվիր. նոյնպէս երթերական երկինքն ալ՝ որ անմահ հրեշտակաց բնակարան է, այն ալ երկիր կենդանեաց կըսվի, քանզի բնակիչները անմահներն։

Հ. ՁԱ. Դժոխքին համար երբեմն սուրբ գրոց մէջ ինչպէս համար գեհենն ալ կրսին։

Պ. Իմանք առաջին կուսակալներն իրենց որդիքը բահաղ կուռքին զոհ կընէին, որ Ամոնացոց չաստուածն էր. կը բերէին տղայքը՝ պիղծ կուռքին բերանը կը դնէին՝ որ փորը կիջնար՝ և կայրէր, որուն իրենց կոյր մտքը կըսէին թէ չաստուածները յափշտակեցին։ Լոյս կամ կուռքին գիրկը կը դնէին, և ներքևէն ալ կրակ վառելով կայրէին. կամ երկու ձողի ծայր կանցուցնէին տղայքը՝ և կուռքին բերանը կուտային։ Լոյս այդ զոհեալ տղայոց լացը և ողբը ծնողքները չէր լսելու համար՝ կուռց շարաւորաց քուրմերը կրակարանին թմբուկով (տաւուլով) դափով (թէֆով) աղմուկ հանել, այս անշահ ձայներուն պատճառաւ՝ այսպիսի տեղերուն գեհ՝ կամ գեհենն կրսէր. և որովհետև դժոխքին մէջ ալ անողորմ տանջանք կրլայ դատապարտելոց, վասն որոյ անոր ալ գեհենն կրսին։

Հ. ՁԲ. Դանիէլի մարգարէութեան մէջ Նաբուքոդոնոսոր թագաւորին համար կրսէր, «Մարդկանէ հալածեցաւ, և խոտ իբրև զարջաւուտէր, և ի ցօղ երկնից մարմին նորա ներկաւ, և այլն». (ԴԱՆԻԷԼ. Գ. 30)։ Մարդ ե՞նք բոլորովին գազան եղաւ մի։

Պ. Իմանք կարծեցին՝ թէ մարդկայնին գոյացութիւնը ձեալով, միայն մարմնոյն արտաքին ձևը

փոխակերպեցաւ՝ վայրենի անասունի նման։ Նմանեալ ասէ կրսեն, թէ ամենեքեան իրական փոփոխութիւն մը չեղաւ մարմնեին մէկ մասին անգամ, այլ արտաքին երեւոյթը միայն այլակերպեցաւ, ինչպէս որ կոխարդուութեան մէջ կը պատահի, որ առջեւի եղած իրաց կերպերը այլայլելով՝ այնպէս մը կերեւցուն, որ իրօք այնպէս չէ։ Այնպէս թագաւորը ուսանողները, կրսեն թէ իրենց վայրենի անասունի նման կերեւար, որ բնքը իրականապէս այնպէս չէր։

Այս ոմանք եւս այս երկու կարծիքէն զուրս կրսեն, թէ ոչ իրօք անասունի նման եղաւ, եւ ոչ ուսանողները այնպէս եւ ուսանային բնքը՝ կամ այնպէս կերեւար, այլ միայն խելքը ցնորած ըլլալով՝ բնքը զինքը վայրենի անասուն կը համարէր, վասն որոյ անասունի կերպակուր կուտէր՝ անասունի բունի մէջ կը բնակէր՝ անասունի որպիսութիւն կունենար։ Այլ սուրբ ուսուցչապետն վարդապետը կրսեն Նաբուքոդոնոսորայ երազոյն վրայ՝ այսու երեւցած ծառին արմատոյն շուաւաւ իրին համար, որ կրսուի՝ «Թողուլ երկրամասին եւ պղնձապատ»։ (Դանիէլ. գ. 12)։

Իսկ Դանիէլ՝ որ երազը կը մեկնէր, այդ երկամեան բուն համար բան չի խօսիր։ Եւ երկրնքէն եկած ձայնն ալ այդ երկամեանը չի յիշատակեր, որ Նաբուքոդոնոսոր արմատն ժամանակը ըսէ։ Եւ շատ գ ժուարութիւն կը լլայ թագաւորին փախչիլը եւ պահվիլը անասունի մէջ՝ եւ թէ կոպված ըլլայր երկամամ։ ուրեմն կերեւայ՝ թէ Նաբուքո-

գոնասոր չի կասպիցաւ, և թէ այն երգոցն մէջի երկամիներդ՝ պարզ այլաբանութիւն մի էին, ցոյց տալով՝ թէ այն եօթն տարիներ մէջ այն անասունները գուրս չի պիտի ելլայ, այլ անեքրեցին զորս թէ այն տեղ կապեալ պիտի մնայ։

Եւ կրեն տատուածաբանք, թէ կրսի այն երգոցն մէջ «Սիրա նորա 'ի մարդ կանէ փոխեցի, և սիրտ գազանի տացի նմա»։ Այլ տատուածուոյց մեկնիչքը այն երգոցն՝ իւր մեկնութեանը մէջ չի քներ այդ բառերդ՝ և զատ մեկնութիւն չի խոսիր, այլ ընդհանրապէս մը կրսէ, «Ընդ գազանս անապատի եղիցի բնակութիւն նորա, և խոտ իբրև արջառոյ ջամբեսցին նմա»։ Եւ ո՛չ Նաբուքոդոնոսորայ երկինքէն եկած ձայնին մէջ այդ բառերդ կը կրկնիլին, ասկից իմանալ պէտք է որ՝ այս ալ այլաբանական մտքով լսեցաւ, որ գուշակութեամբ առելի հասատատութիւն մը ըլլայ՝ գազանաց հետ բնակելոյն անապատին մէջ, և այն տեղ բնակելուն պէտք չէր ո՛չ նեղբին և ո՛չ արտարին այլափոխութիւն կերպարանաց, և ո՛չ ալ իրեն կամ ուրիշին անուրջքին մէջ այլափոխեալ երևնալ։

Եւ և ս կրսին, թէ «Ընդ գազանս անապատի քաժին նորա. . . 'ի գալար վայրին»։ Այս բառերն յայտնի կը ցոյց այն ամենը, որ սահմաներ էր Նաբուքոդոնոսորայ՝ անասունի նմանիլ՝ այսինքն խոտ ուտել, որ առանց մշակութեան բնութենին կը բուանի. և ուրիշ կերպիւ մը նմանութիւն չի ունենար Նաբուքոդոնոսորայ՝ անասունի նմա-

նիլը, այլ միայն կերակուրի կողմանէ՝ որ խառ
կուտէր. և այս այսպէս ըլլալով հարկ չէ ըսել,
թէ չորս ոտքէն գնալով անասունին նման խառ
կը կրծէր. և խառ ուտելով ծառի բողջոջ և
արմատ կրծելով ապէրք չէր յիմար և խելացար
ըլլալ, մինչև որ ինքը զինքը անասուն կարծէ.
որովհետև իւր կենաքը ազատելու համար հարկ
եղաւ իրեն փոխուիլ և պահպիլ անասուն մէջ
անելու ոյժ ի մարդ կանէ, և ուտէլ անասուն մէջ
գանելիսն։

Թէ ոմանց բառնալու նման ինքը զինքը վայ-
բնին անասուն համարէր, և անասունին ախորժակ
ունենար, այն անասուրը իրեն զբօսարան կը լլար.
ուր տեղ ասուած ինքը պատժոյ համար խրկէր
էր։ Թէ միոքն ալ վրան չը լլար և չի գիտնար
մարդ ըլլալը, կարօղ չէր այն անասունական յիմա-
րութեանքը մէջ գտնուած ի միտս իւր բերել,
և ոչ ալ իւր զղջումին ուշանալը իրեն մեղք կը
համարէր. քանզի յիմար ըլլալով ազատ խշխա-
նուելու թիւն չունէր դատնալու և զղջալու։

Եւ յիրաւի մարդ կայնին յիմարութեանքը յի-
մար էր, քանզի երկար ժամանակ իւր յանանութ-
թեանքը մէջ մնալով ի նեղջոյ պատուհասին, ա-
բաց մը չաշխատեցաւ առաջի ասուածոյ խոնարհ-
հիլ։ Թ. յոգիսի յիմարութիւն ընդ հանրապէս բո-
լոր մեղաւորներն ալ ունին, որոնք մեծ մարդ-
թեան մը մէջ երկար ժամանակ մնալով մինչև
որ այն մարդութիւնը իրենց վրայ կը տիրէ, յի ոչ
յանանութիւն ընել կուտայ իրենց, թէպէտ

միշտ ազատ են զղջալու՝ բայց չեն զղջար, և մարիկ կրնան իրենց շար սովորութիւնքը քան թէ բանականութիւն լուսոյն. և ոչ նիթ չեն իմանար՝ կամ անձնիշխանութիւն չունին, այլ չեն կամիր՝ որ ինքը զինքնին նուաճեն թէ որ անուշց բուսնին պէս Աստուծոյ յիմար եղած էր, և ինքը զինքը վայրենի անասուն մը հասկցած էր, թէպէս թշուառ էր. և իւր թշուառութիւնը չի գիտնալով կը նեղսրտէր, բայց չէր իմանար. և իւր տանջանքը չիմանալով այն պատիժը իրեն հանգիստ կը հատարէր՝ և իրը զուարճութիւն. այսպէս են յիմարութիւն սովորական գործքերը՝ որ միշտ խելացնոր եղողները կերև ցրնեն։

Այլ անպատմելի նեղութիւն և դատնութիւն Աստուծոյ ինոսորին սրտին այն էր՝ որ իրեն պատիժ էր, ինքը զինքը մարդ գիտնալը՝ թագաւորը ըլլալը, և ժողովրդոց ապստամբութիւն երկիւղէն, որ իւր կարծիքովը ազատնէին պիտի ինքը, ակամայ փոխիլ և գազանաց հետ բնակիլը, և անասուն պէս խոտ ուտելը։ Բանի լսելով այն ահարկու ապստամբաց աղմուկը՝ որ միաբաներ էին իրեն դէմ, անհնարին երկիւղիւ փախուստ տալաքէն, և գնաց բոյն գրաւ անասնաց ծառերուն մէջ, և այն ուղղ անուն՝ ի մարդ կանէ կեցաւ երկնից ցօղոյն նեղքն, և կրնց անձրև և ձիւն և օդոյն ապտութիւնը և ցրտութիւնը և բոլոր ճնաստակար հողմերը։

Եւ ժամանակէ ետքը հանդերձները մաշելով

մի՝ մեռաց, և գլխուն մազը և մօրուքը առնուն մազի նման խառնելոյ ցաւ, և ղունդերը թուշնաց մազիլի նման եղաւ, և բերանը նեղհարացաւ և չորցաւ, և մարմինը օդոյն խառնուն թնդնելն պղնձի գոյն եղաւ և ցամաքեցաւ, գրեթէ լոկ մարմոյ մը պատած մեռելի ոսկորներու նման բան մը եղաւ, միայն թէ կենդանուն թեան հոգի մը ունէր վրան, և մարմնոյն բոլոր ձևը այլանդակ եղեր է։ Բոլոր աստուածարանք միայն այսպէս "Ներքոգնոյոյ թագաւորին կերպը փոխեցաւ կըսեն, և այն ալ ոչ յանկարծակի՝ այլ դանդաղ։ քանզի և ինքն "Ներքոգնոյոյ ուրիշ կերպիւ փոխուելն թիւն մը չի խօսիր՝ գլխուն և կաժնին պատմած ժամանակը. ապա և հաստատակաց կարծիք է, որ թագաւորին աստուծին կերպարանքը և ձևը չայլափոխեցաւ։

Հ. ԶԳ. Որդին միածին յաւիտենական գիտութիւնքն, և կը գաւանիմք ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ. ինչուան հանար հայրն աստուած թերեալ Դաւիթ մարգարէին կրսէ աստ որդին. "Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ։ (Սաղմ. բ. 7)։

Գ. Այդ բանին մէջ Այսօր բառը ժամանակ ցոյց չի տար, այլ անժամանակ մշանջենաւորութիւն. քանզի մեր մէջ և բոլոր փոփոխական իրաց մէջ՝ Այսօր բառը կը զանազանի երեկուան և վաղուան օրէն, բայց աստուծոյ Այսօրը՝ ան-

բաժանելի յաւիտենականութիւն մի է. ուրեմն այսպէս իմացիր Աստծոյը, որով անընդհատ հաղորդի որդւոյն աստուծոյ 'ի հօրէն աստուծոյ Աստուածային՝ ինչպէս որ կը հաղորդէր յաւաջ քան զլինելն աշխարհի, ինչպէս որ կըսէ՝ «Յաւաջ քան զարուսնակ ծնայ զքեզ». (Սաղմոս, ՃԺ. Ճ)։

Երբ կըսենք՝ բանն յաւիտենական ունի կամ կարաւ զծագումն իւր 'ի հօրէ աստուծոյ, այդ բառերը թերի կերևան բառի ազբաստութեան պատճառաւ. քանզի չունիմք այնպէս բառ մը՝ որ հասանողական ցոյց տայ ներկայ և անցեալ և ապառնի ժամանակը՝ անշարժելի և անբաժանելի ամենայնմբ մը. ապա Աստծոյ որ կըսվի, յաջորդական ժամանակ մի իմանար, այլ յաւիտենականութիւն՝ որ ոչ սկիզբն ունի և ոչ վախճան։

Հ. ԶԴ. Հրէից ազգը քրիստոսի գալստեանը չի հաւատալուն վկայութիւն կառնեն իրենց՝ թէ յոտնի օրերը պիտի ըլլայ մարգարէին ըսածին պէս, «Եղիցի յաւուրս յետնոս յայտնի լեառն տեառնդ». (Եսայի, Բ. 2)։ Ա՝նք ի՞նչպէս իմանանք այս յետնի օրը։

Պ. Ասպէս կը մեկնեն Կուռնելիոս այս բանը. «Յաստկապէս քրիստոսի ժամանակը յետնի կըսվի, քանզի քրիստոս է վախճան օրինաց և մարգարէից. և յետնի կըսվի նայելով 'ի սկիզբն և 'ի մեռելն աշխարհիս»։ Ասեմք թէ՝ ևթէ 'ի ը-

կզբանէ աշխարհի բոլոր ժամանակը բաժանես, առաջին՝ միջին՝ և յետին, կամ երեք օրինաց ժամանակի բաժանես, բնութեան օրէնք՝ Մովսիսական օրէնք՝ և Շնորհական օրէնք, այն ժամանակը Շնորհական օրէնքը կը լայ վերջին, որ անկէ ետքը ուրիշ օրէնք չի պիտի գայ, ապա այն օրինաց ժամանակին կըսվի յետին օր։

Հ. ԶԵ. Սուրբ կուսին յղութեան ժամանակը՝ աւետիս արքօղ հրեշտակը քրիստոսի համար ըսաւ, «Տացէ նմա տէր աստուած զաթոռն Դաւթիայ. (Ղ.-Հ. ա. 32)։ Այդ՝ քրիստոս Դաւթի թագաւորական աթոռը չի նստաւ, ի՞նչ իմանալու է այդ Դաւթի աթոռ ըսելովը։

Պ. Դաւթի աթոռ ըսելով մարմնաւոր աթոռ չի պիտի իմանամք, կամ Դաւթի Սիոն քաղաքը՝ կամ Երուսաղէմ. մանաւանդ աթոռ անուանով՝ թագաւորական իրաւանց իշխանութիւնը պիտի իմացվի. և այսպէս քրիստոս ունէր Դաւթի թագաւորութիւնը իբր որդի և ժառանգ գոլով։ Մէկէա իւր փառքը և հրամանը մարմնաւոր թագաւորի նման չէր գործ ածէր. այլ ինչպէս որ աստուած գոլով՝ խոնարհութիւն գործեց, նոյնպէս հեզութեամբ և խոնարհութեամբ թագաւորեց. բայց երկրորդ գալստեան ժամանակը գործ ածէ պիտի ամենն կերպ փառքը, և անոնք՝ որ չէին ուզէր իրենց վրայ թագաւորելը, յաւիտենական մահուամբ պիտի կորնչցնէ։

Հ. ԶՁ. Պարիսամ աստուածաշունչս կոչս կը գտանեն ամենայն եկեղեցիք. ինչու՞ համար որդին միածին կին կանուանէ կանոյ Գալիլեացւոց հարսանիքին մէջ, ըսելով՝ «Կի՛ն զո՞ չեմ Հասեալ ժամանակ իմ». (Յովհ. բ. Դ)։

Պ. Սուրբ գրոց մէջ կին անուանը հասարակ է թէ կուսից և թէ ամուսնացելոց. ինչպէս և Յովսեփայ ալ ըսելեցաւ, «Ա՛ռ քեզ զմարիամ կին քո». (Մաթ. ա. 20)։ Լաւ յայտնի է՝ որ խրատէն յղացեալը 'ի հոգւոյն սրբոյ էր։ Յակոբ նահապետը իրեն համար նշանեցած Ռաքէլ աղջիկը՝ իրեն կին կանուանէր։ Բանդի ինչպէս հաց անուանը՝ ընդհանրապէս իմաստուն հացին և բաղարջ հացին ալ կըսուի, նոյնպէս կին անուանը. ինչպէս որ և առաջինը 'ի կուսէ ըսելուն տեղը 'ի կնոջէ կըսէ՝ այսպէս, «Առաջին աստուած զորդի իւր, որ եղև 'ի կնոջէ՝ և եմուտ ընդ օրինաց». (Գաղատացւոց. դ. Դ)։

Հ. ԶԷ. Սուրբ աստուածաշնչի կուսութիւնը ուրացողները՝ աւետարանչին այս խօսքովը կը հաստատեն, «Ո՛չ Գիտաց զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկն». (Մաթ. ա. 25)։ Այս խօսքէն կը հետևցընեն՝ թէ ուրեմն յետոյ այնորիկ գիտաց։ Ա՝նք ի՞նչպէս իմանանք այդ խօսքը։

Պ. Ա՝ինչև՝ ըսած բառը միշտ ուսհմանուած ժամանակ ցոյց չի տար սուրբ գրոց մէջ, այլ երբեմն յաւիտենականութիւն։ Այսպէս հայրն

աստուած Դաւթի բերանով կըսէ միածին որդ-
ւոյն, «Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եղից ըզ-
թշնամիս քո պատուանդան ոտից քոց» . (Սաղ.
ճԺ. 1)։ Արդ՝ թշնամին իւր ոտքին ներքևը
դնելէն ետքը՝ ձգէ՞ պիտի իւր որդին յաջ կողմն,
քա՞ւ լիցի. այլապէս իմանալու է և աւետա-
բանին խօսքը։

Իսկ Յոհան Ոսկեբերան կարի յարմարապէս
կը մեկնէ այս բանը. «Ո՛չ զիարաց՝ ասէ, Յովսէփ
«զկոյսն, մինչև ծնաւ զորդին, այսինքն թէպէտ
«ի հրեշտակէն լուեալ էր, թէ յղացեալն ի
«Հոգւոյն սրբոյ է, այլ չէր ամենևին
«հաստատ ի գիտութիւնն՝ մինչև ծնաւ զորդին,
«զոր ի յերկնից ի հրեշտակաց ապատուսուցեալ,
«և ի յերկրի ի թագաւորաց երկրպագեալ ետես։
Ուրեմն կատարեալապէս չի գիտցաւ սուրբ Կու-
սին արժանաւորութիւնը՝ մինչև իւր անդրանիկ
որդին ծնաւ։

Հ. ԶԸ. Իսա կը ներհակին ասելով, ի՞նչպէս
անդրանիկ կըսուի քրիստոս, եթէ ուրիշ եղբայր
չունէր իւր մօրմէն։

Պ. Անդրանիկ կըսուի՝ ոչ եթէ իրմէ ետքը
ծնանող եղբարցը նայելով, այլ յառաջ ծնելոյն
համար, թէ և չունենայ իրմէ ետքը ծնած եղ-
բայր։ Եթէ այսպէս չըլլար՝ անդրանիկ չէր հա-
մարուիր՝ յառաջ ծնածը՝ մինչև որ երկրորդը
ետքէն չի ծնանէր, և այս ճշմարիտ չէ ըստ օրի-

նացն Մովսէսի։ Բանզի հին օրինաց մէջ հրաման էր, որ ամէն անդրանիկ զաւակը ծնանելուն քառասուն օրն ետքը՝ տաճարը կը տանէին առաջի աստուծոյ. (Ղեւ. ԺԲ. 4)։ Ի՞նչ թէ մինչև քառասուն օր մայրը ուրիշ զաւակ կը ծնանէր, որ յետոյ առաջին ծնածը անդրանիկ համարվէր. ապա յայտնի է՝ որ եթէ ունենայ և եթէ չունենայ ետքայր, անդրանիկ կըսվի յառաջ ծնելուն համար։

Հ. ԶԹ. Յովհաննու աւետարանին մէջ գրված է՝ «Եւ այսորիկ էջ յետուս՝ ի կարիտասայսմ, ինքն և մայր իւր՝ և եղբարք իւր». (բ. 12)։ Եղբայր անոր կըսվի՝ որ մէկ հօրէ և մէկ մօրէ ծնած կըլլայ. ուրեմն կնրեւայ՝ թէ աստրը Պօյան ուրիշ զաւակ ալ ունէր, կամ իւրմէն կամ Յովսէփէն։

Պ. Աստուածաբանք չորս կերպիւ եղբայր կայ կըսեն աստրը գրոց մէջ։ Ախ՝ բնական, որ մէկ մօրէ կըլլան, և այս կերպիւ քրիստոս եղբայր չունէր, քանզի աստրը աստուածածին քրիստոսէ զատ զաւակ չունէր. և Յովսէփ ալ չունէր որդի, քանզի կոյս էր՝ ինչպէս շատերը կը վկայեն։ Երկրորդ՝ որ մէկ ցեղէ կամ մէկ ազգէ կըլլան, եղբայր կըսվին։ Երրորդ՝ եղբայր կը համարվին, եթէ ազգական ըլլան իրարու։ Չորրորդ՝ եղբայր կըսվին՝ որոնք իրարու հետ եղբայրական սէր ունէին։

Այդ՝ եղբայր կլսվին քրիստոսի, ուշ եմք Յովսէփայ որդիքն են՝ ուրիշ կնիկէ ըլլալով՝ ինչպէս վարդապետք ասանք կըսեն. ապարէն եղբարք կլսվին քրիստոսի՝ սիրելի աշակերտները, մանաւանդ Ջեբեդեայ որդիքը Յակոբոս և Յովհաննէս մեծ ազգական էին, աստուածածնի մօր քրոջը տղաքը ըլլալով. քանզի Սաղոմէ՝ Ընտայի քոյր կըսվի, ինչպէս որ կը վկայէ Կուսանելիս. և ուղիղ չէ՝ Սաղոմէ՝ Յովսէփ աստուածահօրը աղջիկն է ըսելը։

Հ. Ղ. Յովհաննէս Մկրտչին ծնունդը՝ Ղուկաս աւետարանիչ պատմելն յետոյ, կըսէ, «Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով. և էր յանապատս մինչև յօր երևելոյ նորա Իսրայէլի». (Ղ. Գ. 80)։ Այդ ե՞րբ ինչ հասակի էր՝ որ գնաց, կամ ինչո՞ւ գնաց յանապատս։

Պ. Մանուկ կըսեն՝ եմէ տասն և ութ ամսուան էր՝ որ մայրը տարաւ յանապատս, և այն տեղ պահվեցաւ և ձեռամբ հրեշտակի սնաւ. ոմանք երեք տարեկան էր կըսեն, և ոմանք հինգ տարեկան։ Այլ այս տեղ կը մնայ մեզի խմանալ ինչո՞ւ երթալը։ Սուրբն Պետրոս Աղեքսանդրացի և այլք կըսեն, եմէ Եղիսաբեթի մայրը՝ իւր մանուկը յանապատս փախցուց, որ մանկակոտոր Հերոդէսին աչքէն ազատէ։

Լա՞ւ մտրաւ՝ մանկանց կոտորումը Բեթլեհէմի մէջ եղաւ, քայց որովհետև Յուդայի

երկրին հռչակվեր էր Յովհաննու հրաշալի ծը-
նունդը, վասն որոյ երկիւղ կունենային ծնողքը,
թէ չըլլայ որ այն չար բռնաւորը իրենց ման-
կանն ալ քննութեան ելլայ. ահա՛ քան զայս հա-
ւանական պատճառ՝ չեմք կրնար գտնալ։

Է. ՂԱ. Յովհաննէս Մկրտչի համար կըսէ
քրիստոս, թէ "Չէ՛ յարուցեալ ի ծնունդս կա-
նանց՝ մեծ քան զՅովհաննէս, (ուր Ղուկաս կա-
ւելցունէ) մարգարէ մեծ քան զՅովհաննէս
Մկրտիչ, բայց փոքրիկն յարքայութեան երկնից
մեծ է քան զնա". այս խօսքը ի՞նչպէս պիտի
իմանամք։

Պ. Այս հարցմունքդ երեք բաժին ընելով,
երեք պատասխան տալ հարկ կըլլայ։ Այս՝
արդեօք Յովհաննէս մեծ և առաւելէ քան ըզ-
մարգարէ։ Երկրորդ՝ ինչո՞ւ կըսվի մեծ քան
զամենայն մարգարէս։ Երրորդ՝ ովքե՞ փոքրիկն
յարքայութեան։

Առաջնոյն այսպէս կը պատասխանեմ, յիրաւի
Յովհաննէս մեծ և առաւելէ քան զմարգարէ.
քանզի ո՛չ եթէ միայն բերանով մարգարէացաւ
քրիստոսի համար՝ ուրիշ մարգարէից նման, այլ
և մատամբ ցոյց տրվաւ, թէ Սա՛ է որդին աչ։

Երկրորդ հարցմանդ պատասխանն այս է, ա-
նոր համար կըսվի մեծ քան զամենայն մարգա-
րէ, որովհետև ինքն միայն առանձին շնորհք ու-
նեցաւ, քանզի էր ապաշխարող, քարոզիչ, մար-

տիրոս, և մարգարէացաւ մօրը արգանդին մէջ քրիստոսի համար. և իւր յղութիւնը 'ի հրեշտակէն յայտնի եղաւ, ծնած ժամանակը հօրը լեզուն բացուեցաւ, և այլ շատ շնորհքներ ունեցաւ, որ ուրիշ մարգարէները չունէին. այս պատճառաւ կրսի մեծ քան զամ մարգարէս։

Իրրորդ՝ ըսիր, ովէ փոքրիկն յաքքայութիւն, այն է՝ որ ունի փոքրիկ ասպիճան մը սրբարար շնորհաց՝ քան զբարձր ասպիճան մարգարէութեան ունեցողէն, քանզի մարգարէութիւնը ըստ ինքեան չի կատարելագործէր զինքը ունեցողը, և չի կրնար հաճոյ ընել աստուծոյ. բայց սրբարար շնորհքը կը կատարելագործէ՝ և աստուծոյ բարեկամ կընէ. ուստի շատ առաւելէ արդար ըլլալ՝ քան թէ մարգարէ։ Իւ Յովհաննէս առաւել յարգի էր այն շնորհացը կողմանէ՝ որով սրբեցաւ, քան մարգարէութեան կողմանէ՝ որով զարմանալի երևեցաւ։

Է. ՂԲ. Քրիստոսի ծննդեան ժամանակի ընծայաբեր մոգերը, արդեօք ճշմարտապէս թագաւո՞ր էին։

Պ. Որովհետև աւետարանիչը թագաւոր անուամբ չի յիշատակէր, այս պատճառաւ ոմանք ըսին՝ թէ թագաւոր չէին. բայց թագաւոր ըլլալնին վկայութեամբ սրբոց մարգարէից կը հաստատուի. «Գնացին թագաւորք 'ի լոյս քո, և հեթանոսք 'ի ծագել լուսոյ քո». (Եսայի. կ. 3)։

Եւ Դաւիթ կրսէ, «Առաջի նորա նախ Հնդիկք անկցին, և թշնամիք նորա հող կերիցեն։ Թագաւորք Թարսի և կղզեաց պատարագս մատուցանեն նմա, թագաւորք Արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա» . (Սաղմոս . հա . ց)։ Որ ըստ սուրբ գրոց թագաւորք Թարսի բոլորովք, ծովեզերեայ նահանգաց թագաւորներ կիմացուին. ապա կերևի՝ որ այն մոգերը թագաւոր էին։

Հ . ՂԳ . Որ կողմէ եկան այս երիք թագաւորներ։

Պ . Ասանք կրսեն, թէ ասոնց թագաւորութեան երկիրը էր՝ ի ծոցն Արաբիոյ, ոմանք կըսեն՝ ի Սաբայ, ոմանք՝ յերկիրն Մագխանացւոց, որ Էրուսաղէմի հասմամբ՝ յարևելից կողմանէ կիյնան գէպ ի հարաւ, վասն որոյ ասին իրենք ալ, ուստի զաստղն նորա յարևելս։ Եւ ոմանք ալ կրսեն, թէ՝ ի միջագետաց կողմանէ եկան։ Ասոնց այսպէս կարծելն ճանապարհը կարձրցուցանելու պատճառաւ է, որ կարելի ըլլայ ասան երիք օրով Բեթլեհեմ հասնիլ։ Ասանք և Մղբրպաց կամ Պարսից երկիրէն բերել կուտան, ասոնց կարծիքն պատճառը՝ մոգ բառն է . քանզի Մղբրպիք կամ Պարսիկք մոգ կանուանէին իմաստուններն և աստղագէտերը։

Ասատրանիչը թագաւոր չանուանէր՝ այլ մոգ, քանզի այս անունը առաւել յարմար էր

այն երևցած աստղին՝ որ իրենք բերան. և ևս
քրիստոսի մեծ փառք և պատիւ էր երկրպագել
յիմաստնոց՝ քան թէ ի թագաւորաց. քանզի
իմաստունքն առաւել զգօնութիւն և խելացի է քան
զթագաւորս և զիշխանաւորս։

Հ. ՂԴ. Ո՞րք երևեցան մոգուց այն աստղն։

Պ. Քրիստոսի ծնունդէն երկու տարի յա-
ռաջ երևցաւ կրսեն ոմանք. Հերոդէսի յերկե-
մենից և ի խուսարհ եղող մանկունքն որ ջարդե-
լէն առնելով. քանզի կրսեն ըստուգեց մոգերէն
աստղին երևնալը, վասն որոյ յերկեմենից և ի
խուսարհ ըսելով հրամայեաց բրաւ ջարդել։

Լաւ ոմանք կրսեն, թէ մոգերէն զատ ուրիշ
մարդ չէր գիտէր, և իրենց խոսքէն առաւել
յայտնի կերևայ, թէ երբ երևեցաւ իրենց այն
հրաշալի աստղը. յիսուս ծնեալ էր, քանզի ըսին,
«Ո՞ւր է՝ որ ծնաւ արքայն հրէից, զի ասաք
գաստղին նորա, և եկաք երկիրպագանել նմա»։
Այսպէս աստղը ասենալով՝ գիտցան որ փրկիչը ծը-
նեալ էր, յորմէ կը հետևի՝ թէ աստղը քրիստոսի
ծնունդէն յառաջ երևցած չէր։

Հ. ՂԵ. Ինչպէս հերոդի մանկունքը՝ որ ջարդը-
վեցան Հերոդէսի հրամանաւ, խելքի ընթիւն հա-
սած չէր՝ որ յոժարութեամբ քրիստոսի անուա-
նը համար նահատակ ըլլան. և իրենց ծնողքն

ալ կամաք և հաւանութեամբ նահատակ ընել չի տրուին. ինչու՞ և կերդցին մարտիրոս անուամբ առանց ասելոյ կը կատարէ։

Պ. Ինքն յիսուս քրիստոս իրեն աղջակէզ ընդունելոց զկրնէք, քանզի իւր անձին տեղը ապանվեցան մանկակոտոր շար թագաւորին. ուստի և գերասիրաշ մարտիրոս հանարվեցան առանձնական շնորհօք, և նահատակութեան պատկը քրիստոսէ վայելեցին։

Հ. Ղ. Զ. Յիսուսի մկրտութենէն ետքը աւետարանիչները կրսեն, «Յիսուս վարիր հոգւոյն յանապատ՝ փորձիլ ի սատանայէ». արդեօք սատանայն չէր գիտէր որդի աստուծոյ ըլլալը։

Պ. Լմեն ազէկ միտք դրած ըլլար սուրբ գրոց նեղքին խմաստիցը, կրնար գիտնալ. քայց արգիլեց աստուած այդ շնորհաց լուսաբերութիւնը՝ և այն պատճառաւ սարսափութեան մէջ մնացեր է։ Իւր ամբարտաւանութեամբ նայելով՝ անհնար կերևար իրեն աստուծոյ մարգեղութիւնը, մանաւանդ նախատինք կը համարէր՝ մարդարէից գուշակած շարչարանքները յանձն առնելը. և Եսայեայ մարգարէութենէն գիտէր շար սատանայն, որ յիսուս մեծամեծ հրաշքներ պիտի գործէ, կը նայէր՝ որ միանգամ այն ժամանակ այնպիսի բան մը չըրաւ։

Ենդեանն ժամանակը անցած էր Եղեալ քանզի լիցեալ էր, օտար թագաւորաց ենթակայութեան

թեան գալը նորատեսիլ ասողին առաջնորդութեամբը. բայց յետոյ որ մանկակոսոր Հերոդէսին ահէն փախուս յՆեղիպտոս գնաց, սարսափուն ցաւ՝ թէ այլոյսի նուաստ ըլլալ ասուծոյ կը վայելէ՞ մը։ Խմացուս որդի ասուծոյ ըլլալը, երբ անուս սատանեկիս տարեկան եղած ժամանակը տաճարին մէջ նստելը՝ և Հրէից վարդապետաց հետ խօսելը, և այնպիսի գերիմաստութեամբ սրատեսութիւնը. բայց յետոյ Յովսէփոյ որդի խսկան նուաստութիւն ցոյց տալը անանդամ վերսին սարսափուն։

Ո՞կրուս թեան օրը երկնից բացվելը՝ հոգւոյն սրբոյ աղաւնակերպ իջու�ն՝ հօր ասուծոյ վկայելը՝ «Դուն է որդի իմ սիրելի» ասելը. բայց արդեօք էակա՞ն որդի է, եթէ շնորհական որդի, ասոր խսելը չի հասուս։ Նեստ՝ որ յանապատին մէջ քառասուն օր ծոմ կեցուս, կարծեց որդի ասուծոյ ըլլալը. բայց յետոյ երբ քաղցեաս, վերսին սարսափուն ասելով թէ այս լոկ մարդ է Մովսէսի և Եղիայի նման. որովհետև անոնք ալ քառասուն օր պահեցին։

Ո՞ երկնակէս ասուգիս բան մը չի կրցաս խմանալ, թէ նա է խսկապէս որդին ասուծոյ. ինչպէս որ սրբազան առաքեալն Պօղոս և կը վկայէ ասելով, «Ոչ զի յիշատակաց աշխարհիս այսորիկ ծանեաս. զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զտէրն փառաց՝ ի խաչ հանէին» (Ա. Կորն. Բ. 8)։ Ասանկին եթէ սատանային կամ

իւր հեռուն ակաց խելքը հասած ըլլար, թէ յիսուս է որդի աստուծոյ, Յուդայի և Հրէից միտքը չէին թափարէր՝ որ քրիստոսը 'ի խաչ հանեն. ապա չի գիտնալու պատճառաւը սկսաւ անապատին մէջ փորձելով քնելը։

Հ. ՂԷ. Աստուածային երէց կերպ ըրած փորձութիւն հարցմունքները ըսեմ, և պատասխանը տուր։ 'Լսա՝ որ ըսաւ. "Եթէ որդի ես աստուծոյ ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին" (Մաթ. դ. 3)։

Պ. Աստուածային այս բանին դիտաւորութիւնը այս էր, եթէ քրիստոս կարող ըլլայ քարերը հաց ընել, իմանայ՝ թէ ճշմարտապէս որդի աստուծոյ է։ Այլ թէ որ ըսէր՝ չեմ կարող, իմանար պիտի՝ թէ չէ որդի աստուծոյ. և եթէ ըսէր՝ կարող եմ, բայց չեմ կամիր, իմանար պիտի՝ թէ սուտկական մարդ մի է։ Այլ երկու դիտաւորութիւնն ալ ճշմիտ եղաւ. քանզի քրիստոս ոչ կարող ըլլալը՝ և ոչ չկամիլը յայտնի ըրաւ, այլ աստուածային գրով ամաչեցոյց ըսելով, "Գրեալ է՝ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ ելանելոյ" (Մ. Օրէնք. ը. 3)։ Եւ այսպէս փորձիչը իւր փափաքին չի հասաւ։

Հ. ՂԸ. Երիկորդ՝ "Յանձնեսա՛ զանձն ի գագաթն տաճարին, և կացուցա-

«Նէ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ
«ցնա. եթէ որդի ես աստուծոյ՝ արկ զքեզ ասա-
«'ի վայր, զի գրեալ է, թէ հրեշտակաց իւրոց
«պատուիրեալ է վասն քո, և 'ի վերայ ձեռաց
«բարձցեն զքեզ՝ զի մի երբէք հարցես զքարի
«զոտն քո. (Մաթ. գ. 3)։ Այս ի՞նչ պիտի ըլլայ։

Պ. Սրոմէական ասասնայն առաջին փորձութեան հարցմունքին պատասխանը՝ սուրբ գրոց վկայութեամբ ըսեց քրիստոս. այս երկրորդ հարցմունքին կը նայի՝ որ ինքն ալ սուրբ գրոց վկայութեամբ որոշ. բայց բերած վկայութեան մեկնութեան միտքը փոխեց։ Անոր յայտնի է՝ որ աստուած միջնորդութեամբ հրեշտակաց օգնական կըլլայ իւր սիրելացը, եթէ խոհեմութեամբ իրենց գործքը կատարեն կամ կատարեն. և ոչ եթէ լրբութեամբ յայտնի եղած վտանգի մէջ ձգեն ինքը զինքնին։

Խոհեմութիւն է՝ աշտարակէն վար ձգելը ինքը զինքը, յուսալով թէ ես արդար եմ, ինձի բան չըլլար. ոչ՝ ընդդէմ է այս աստուածային հրամանաց։ Ասասնայն գիտէր՝ որ աշտարակէն վար քրիստոս ինքը զինքը չէր նետէր, բայց այնպէս կը կարծէր թէ՝ եթէ որդի աստուծոյ չէ, այս խօսքով իրեն պարծանք մը կըլլայ, և՝ մեզ հպարտութեան կիյնայ. և եթէ որդի աստուծոյ է՝ կը բարկանայ, և կըսէ՝ եթէ զիս վար ձգեմ՝ հրեշտակաց միջնորդութիւնը կամ օգնութիւնը կարօտ չեմ, և այսպէս յայտնի կըլլայ որդի աստուծոյ ըլլալը կամ չըլլալը։ Այլ իւր կարծիք-

ներէն գուրս՝ ուրիշ կերպիւ պապանձեցուց
ինքը քրիստոս, ըսելով՝ «Գրեալ է թէ, ոչ փոր-
ձեսցես զտէր աստուած քո։ Եւ այս երկ-
րորդ փորձական հարցմամբը՝ փորձիչը խայ-
տառակեցաւ, և իւր տարակուսութիւնը անե-
լոյծ մնաց։

Է. Ղեր. Երրորդ՝ «Առեալ ածէ զնա սա-
«ատանայ ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ
«նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի՝
«և զփառս նոցա, և ասէ ցնա, զայս ամենայն
«քեզ տացի՝ եթէ անկեալ երկիրպագանիցես
«ինձ։ (Մատթ. դ. 8)։ Եւ այս ի՞նչ միտք պիտի
ըլլայ։

Պ. Սատանան և երկրորդ հարցմունքներ ը ոչինչ
ըլլալուն համար՝ բանարկուն աշխատեցաւ, որ
բարկացընելու բան մը խօսի։ Տարաւ բարձր
լեռան մը վրայ, և սկսաւ իրր մատամբ ցուցու-
նել՝ թէ այս տեղ Աստուծոյ թագաւորութիւնն
է, այս ինչ տեղ Քաղդէացւոցն է, և այլն. ահա
ասոնց ամենը քեզի կուտամ, եթէ ինծի երկրը-
պագութիւն ընես։ Ինքը իւր հպարտութիւնը
նայելով կըսէր, եթէ այս որդի աստուծոյ է,
պէտք է որ այս խօսքին առաւել բարկանայ՝
ըսելով, ի՞նչ կըսես սով շար բանարկու, ես մար-
դացեալ աստուած ըլլալով՝ քեզի երկրպագու-
թիւն ընեմ. ես ճշմարիտ որդի աստուծոյ ըլլա-
լով՝ քեզի նման շար ծառայի՞ն երկրպագեմ։

Բայց այս անգամ և իբ փափագը չի լեցվեցաւ, և խոյսառակեցաւ առաջինն։ Քանզի առաքեալն մարդկային կերպիւ երևցած էր յետոյ. և միշտ այս հարցմունքը ժամանակը յետոյ այնպէս ձևացաւ, որպէս թէ չէր գիտէր առաքեալը. բայց այժմ մեծ խոյսառակութեամբ հալածեց զինքը, ասելով "Երթ յետս իմ սատանայ. զի գրեալ է, զառաջնորդ քոյդ երկիրպագանիցես, և զնա միայն պաշտեսցես"։ Իբ վաղվաղակի հալածեցաւ պիղծ բանակիցն, և իբ փափաքին գոնէ ձևով մը չի կրցաւ հասնիլ, և որդի առաջնորդը չի գիտցաւ։

Հ. Ճ. Ի՞նչ պիտի ըլլայ այս խօսքին միտքը՝ որ կըսէ, "Ոչ զոյգ՝ ասացի նմա և յաւելցի. և որ ոչն զոյգ՝ և զոր ունիցին, թարձցի ի նմանէ"։ (Մատ. ԺԳ. 12)։

Պ. Խրիստոսի աշակերտները և բոլոր հաւատացեալները, որ հարուստներն առաջնորդութեամբ քրիստոսի վարդապետութեան, երբ սիրով կընդունէին կենվերցուներ երկնաւոր վարդապետը վերատին նոր ծանօթութիւններ առակաց մեկնութեամբ, որք կենվերնային գիտութեամբ՝ փրկութեան հարկաւոր ըլլալուն համար։ Բայց Հրեաները և բոլոր անհաւատները՝ թէ և գիտուն կերևային, բայց ագքատ էին պէտք ըլլալու համաձեռնելն. քանզի չէին ուզեր

որ այն գիտութեամբ ուրիշ ծանօթութիւններ ստանան, այլ նախանձով և հպարտութեամբ ուսնեցածներն ալ կը կորանցընեն։

Հ. ՃԸ. Բրիտաս կրսէ, «Ո՛չ և ես սեսանիցէք զիս, մինչև ասիցէք օրհնեալ եկեալ յանուն սեսառն». (Ղուկ. Ժգ. 35)։ Ի՞նչ պիսի ըլլայ այս խօսքին միտքը։

Պ. Գալիլեայի մէջ էր քրիտաս երբ այս խօսքը ըսաւ, որով կուսուցանէր լսողներուն, թէ ակից զասիլեսս եսքը՝ գուք ալ երբ յԵրուսաղէմ կուգայք, այն ժամանակը կը սեսնայք զիս արմատնեսց օրը, որ այն օր բոլորն ալ զիս կը բարեբանեն։

Հ. ՃԲ. Ի՞նչպէս իմանալու է այս խօսքը. «Ի զատասան եկի յաշխարհս այս, զի որք ոչն սեսանեն՝ սեսցեն, և որք սեսանեսեն՝ կուրասցին». (Յովհ. Թ. 39)։

Պ. Ասուածաբանք այսպէս կը մեկնեն. Յիսուս յաշխարհ եկաւ զասել ընարեալներն՝ յանարդ մարդիկներէն. իբր թէ անոնք՝ որ յասաջ կոյր էին՝ ասուածային խորհրդոց ծանօթութիւն չունենալով, ճշմարիտ հաւասով այն ծանօթութիւնը ստանան և լուսաւորին. և անոնք՝ որ ինքը զինքնին քաջապէս կը համարին, իրենց կուրութեանը մէջ մնան։

Հ. ՃԳ. Լ. սուրբ երրորդութիւնն մարդացեալ անձը միայն որդի գիտեմք. բայց այս գիտացածնուս հակառակ բան մը կիմանամք քրիստոսի ըսած խօսքէն՝ որ կըսէ, «Ո՛չ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն՝ զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին նման գործէ» (Յովհ. ե. 19)։ Լ՚ապա կերևայ՝ որ հայրը աստուած յառաջմանէ մարդեզած էր, որ որդին տեսնելով՝ ինքն ալ մարդացաւ։

Պ. Լ՚ետարանին այդ մէկ խօսքը որ հարցուցիր, այդ առնէն առաջին առնն ալ կարդա՛, որ հարցմունքիդ մեկնութիւնը ըսեմ։ Լ՚հա՛ ասկից յառաջ եղածը այս է. «Իսկոյր ասէին ընդ նմանեալ զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթն՝ այլ և հայրն իւր կոչէր զաստուած, և հաւասար առնէր զանձն աստուծոյ»։

Լ՚ապա գլխաւորապէս կռիւը շաբաթի օրը անդամալոյծը բժշկելն էր. արդ՝ Ճշմարիտ միտք բանին այս էր, որպէս թէ կուզէր ըսել Հրէից. դուք յանցանք կը համարիք ինձի շաբաթի օրը գործ գործելս. ես այնպիսի գործ կը գործեմ, որ իմ հայրս ալ կը գործէ. քանզի ըստ աստուածութեանս՝ մի բնութիւն՝ մի և նոյն կամքն է Ի հայր և յիս. բայց ըստ մարդկութեանս՝ թէպէտ մարդկային կամքս այլ է Ի կամաց հօր, բայց այնպէս հաւանական է կամաց հօր աստուծոյ, որ ոչինչ կրնամ ընել անոր կամացը դէմ։ Լ՚ինչպէս որ ինքը չի կրնար սուտ և մեղանչել, նոյն-

պէս եւ ալ չեմ կրնար մեղանչել. ուստի եթէ մեղք էր եւ հակառակ կամաց Հօր աստուծոյ՝ շաբաթի օր հրաշք գործելը, եւ ուշ եթէ միայն չէի կամէր, այլ եւ չէի կրնար գործել, քանզի չեմ կրնար մեղանչել. եւ ինչ որ կընեմ ես, նոյն եւ բոլորովին մարդ՝ չեմ կրնար ընել ինքնիրեն, այլ 'ի Հօրէ աստուծոյ ինչպէս յայտնութիւն ըլլայ ինձի՝ այնպէս կրնամ ընել։

Ինչ որ Հայր աստուած կընէ՝ ես ալ նոյնը կընեմ, քանզի իւր կամքը եւ կարողութիւնը ուրիշ չէ իմ կամքէս եւ կարողութենէս։ Թէպէտ բոլոր օրուամ մարդ՝ ունիմ կարողութիւն եւ կամք մարդկային զանազան յատուածայնոյն. բայց Հայր կը սիրէ զիս նոյն բոլոր օրուամ մարդ, եւ հաղորդեալ է ինձ կարողութիւն եւ կամք առնելոյ՝ ուշ օրքան ուզեմք եւ ըսեցիք, այլ եւս մեծամեծ՝ որ պիտի ուզենայք եւ զարմանայք։ Ի՛նչ այս է հարազատ միտք հարցմանդ բոլոր մեկնութեան ելելի վարդապետաց։

Հ. ՃԴ. Ինչու՞ համար քրիստոսի կենդանութիւն անուանեցեալ ոչ թէ գիրքին Աւետարան կըսին։

Պ. Քանզի այն ուղղակի հաւաքեալ է աստուծոյ խոսմանց կատարելութեան աւետիսը, ինչ որ խոսացեր էր հին օրինաց մէջ մարգարէից միջնորդութեամբ, որ կատարեցաւ որդւոյն միածնի յաշխարհս գալովը։

Է. ՃԵ. «Չ՝ եթէ հայր դատէ զոք, այլ զամենայն դատաստան եւ որդւոյ իւրոյ». (Յհ. Ե. 22)։ Ո՛չ թէ հայր և հոգի սուրբ հաղորդեն դատողական իշխանութեան։

Գ. Ո՛չ այդպէս կարծէր, ընդհանուր վճիռէ բոլոր աստուածաբանից, թէ գործք սուրբ երրորդութեան առ արտաքս, հասարակ են երից անձանց սրբոյ երրորդութեան։ Այսպա և ընդ որդւոյ դատէ և հայր աստուած՝ և հոգին սուրբ աստուած. բայց այն խօսքը՝ որ կրսէ, «Զամենայն դատաստան եւ որդւոյ», ըստ որում՝ նա միայն դատաւորական կերպ պիտի ունենայ դատաստանին օրը, նա միայն պիտի երևայ ի դատողական աթոռ բազմեալ, նա միայն պիտի խօսի և ասել տայ իւր ձայնը՝ և ինքն պիտի տայ անդարձ վճիռը, արդարոց՝ «Եկա՛յք օրհնեալք հօր իմոյ», և մեղաւորաց՝ «Երթա՛յք յինէն անիծեալք»։

Արդեն էր՝ որ քարոզեց յաւետարանական կենաց փրկութիւն, այն պիտի նոսի յամենա դատողական, որ իւր քարոզութեան հետևողները վայելեն իրենց փառքը և պատիւը, և ունկնդիր չեղողները կրեն իրենց անվախճան տանջանքը։ Զամենայն դատաստան եւ որդւոյ իւրում՝ ասելովը, չիմանաս՝ թէ ժամանակաւոր պարգև մի է ի հօրէ աստուծոյ առ որդի, այլ հաղորդեալ էր անձին որդւոյ ի յաւետարանից՝ աստուածային ծնողութեամբն ի հօրէ. ինչպէս ի յաւետարանից հաղորդեալ էր հայր աստուած իւր միած-

նին զատուածային գոյացութիւնն և զբնութիւնն, նոյնպէս հաղորդեալ էր զկարողութիւն զարգարութիւն և զամենայն կատարելութիւնս։

Այս մերս մեկնութեան առ ի հաստատութիւն այսպէս կրսէ առքն Ամբրոսիոս. «Զամենայն զատաստան ետ որդւոյդ. ետ արդարութեան ծնանելով և ոչ առատաձեռնելով։ Այս առքն Ոսկեբերան կրսէ՝ «Ետ նմա զամենայն զատաստան, զի զատուտ որ ծնաւ զնա»։

Հ. ՃԶ. Պատմէս աւետարանիչ յիսուսի համար կը գրէ, «Եկեալ բնակեցաւ ի Նազարէթ, զի լցցի բան մարգարէին, թէ Նազովրեցի կոչեսցի». (բ. 23)։ Այս խօսքը ո՞ր մարգարէն գրած է, որ չեմք ըսեր։

Պ. Շատ կերպ կարծիքներ մեկնութիւն կայ այդ հարցմանդ վրայ. բայց հաստատակ կարծիք յիսոնն մեկնչաց այսպէս կը հաստատեն մարգարէից խօսքը, և ծաղիկ կանուանեն յիսուս, Եսայի մարգարէի խօսքէն առնելով, որ կրսէ՝ «Եկցէ ծաղիկ յարմատոյ անտի». (ժա. 1)։ Այս որովհետև Նազարէթ բառին արմատը Եբրայեցւոց լեզուով ծաղիկ ըսել է. աւետարանիչը այս նշանակութիւնը նայելով ասաւ, «Զի լցցի բան մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի»։ Իբր ըսել է թէ, յիսուս բնակելովը ծաղիկ անուանեալ քաղաքին մէջ, ճշմարիտ կը լլլայ մարգարէից խօսքը, իբր թէ ծաղիկ՝ կամ ծաղկեցի կոչեսցի։

Հ. Ձէ. Երբ քրիստոս ասէր մեր փարիսեցիին առաջը հրաւիրելիս էր, և այն ասող գանձրիոց օրինակներին յանդիմանելով՝ ըսաւ, «Վայ ձեզ, զի շինէք գերեզմանս մարգարէից, և հարցին ձեր ընդդէմն զնոսա. ապա ուրեմն վկայէք՝ եթէ կամակիցք էք գործոց հարցին ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, և դուք զգերեզմանս նոցա շինէք». (Ղուկ. ԺԱ. 47)։ Արդ՝ այն օրինակներուց հարցը՝ որ մարգարէները սպաննեցին, այո՛ պարտաւոր են. բայց ապայքը՝ որ անոնց գերեզմանները կը շինեն, ի՞նչ յանցանք ունին, որ անոնց ալ վայ կուտայ։

Պ. Դարաւոր սպաննուած մարդոյն՝ փառաւոր գերեզման շինելու՝ շատ պատճառ կուտան վարդապետը, որ և յարատեւին պարագայիցն յայտնի կը լլլան։

Նախ՝ հնարք է շինելիք մեռելոց սպաննուողին փառքին համար. ինչպէս որ նախնի քրիստոնեայք մեծ մեծ գերեզմաններ կը շինէին ի փառս և ի յիշատակ սրբոց մարտիրոսաց։

Երկրորդ՝ փառաւոր գերեզման կը շինելիք յանիրաւի սպաննուողներուն, որ սպաննողին յանդիմանելու համար ըլլայ, և ըստ բաւականին հատուցում ըլլայ այն անիրաւաբար մեռնողին, իբր կեանք չի կրնար տալով՝ մարմնոյն փառքը տրուած ըլլան։ Քրիստոս այս երկու կերպին համար չի խօսիր այս տեղ՝ որ գովելի են, քանզի կը պահանջուին գերեզման շինելու։

Երրորդ՝ կրնայ մարդ հոյակապ գերեզման մը

շինել՝ ապանեցեալ սուրբին փառաւորութեանը համար, բայց պարզապէս հպարտութեան մտաւ՝ որ ուրիշին առջին մեծագործ և բարեպաշտ համարվին. այսպիսի հպարտութիւնը թէպէտ պարտաւելի է, բայց մարդասպանութեան հետ համակցութիւն ունենալ չէ։

Ուրրորդ՝ այսպիսի մեծամեծ գերեզմանները կը շինեն, ոչ եթէ ապանեցելոցին փառքին համար՝ այլ ապանողին կարողութիւնը ցոյց տալու համար, իբր ասել կամելով թէ իմ նախնիքս այնպիսի կարողութեան տէր էին, որ կրցան այսպիսի փառաւոր մարդկանց կեանքը վերցուցանել, որովհետև իրենց կամացը հակառակ եղան. և այսպիսի շար պարծանօք հասարակութիւնը իրենցմէ կը վախցուցանեն. այս մտաւ ապանեցելոցներուն վրայ գերեզման շինելը, հաւանութիւն և կամակցութիւն ցոյց կուտայ ապանողին հետ։

Ա. Հա այսպէս էր և փարիսեցւոց կամ օրինականաց գերեզման շինելը մարգարէներուն մարմնոյն վրայ, և այս պատճառաւ քրիստոս յանդիմանեց զիրենք, և ասաւ, "Ապա ուրեմն վկայէք՝ եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց, զի նոքա կոտորեցին զնոսա (այսինքն զմարգարէս), և դուք զգերեզմանս նոցա շինէք"։

Է. ՃԸ. Իսկզբի և փարիսեցիք երբ կը հարցնեն քրիստոսի շնացեալ կնոջը համար, աւետարանիչը կըսէ՝ "Ի խոնարհ նայելով գրէր մա-

տամբն յերկրիս։ (Յով. ը. 6)։ Ի՞նչ պիտի հաս-
կընամք այդ գրուածքեամբ։

Գ. Համանք կրանն թէ՝ առաքեալը պարզա-
բար կըսէ, թէ «Յիսուս գրէր մատամբն յերկ-
րիս։» Այլց անյարմար չէ այս կարծիքը ոմանց,
իբր թէ այն տեղ՝ որ այնքան ժողովուրդ կայր,
փոշիով լեցուն էր, և այն փոշիին վրայ մատամբ
գրելով՝ աչքի կերևար գիրերը. և կամ ըստ ո-
մանց՝ առատաձայնն աջն ներևելի գոյն մը կը
տարածէր այն գրված գիրերուն վրայ, որ գիւ-
բաւ մը կարդացվին։

Այլ ի՞նչ էր գրածը պիտի ըսես. կերևի թէ
այն ամբաստանողք մարդկանց գաղտնի մեղքերը
կը գրէր. քանզի ըստ առաքելոյն՝ առաջին ան-
գամ գրելէն ետքը ըստաւ, «Ընտրեցէք ի
ձէնջ նախ նա ընկեսցէ քար ի վերայ գորա»,
և գարձեալ սկսաւ գրել։ Որոք լսեցին ամբաս-
տանողք այս խօսքը, ամենեքեան մէկիկ մէկիկ
անկիցն զատվեցան։ Որ թէ հնչէ՞ն վախցան, կամ
հնչեա՞ ուրիշ հարցմունք մը չի կրցին ընել, յայտնի
է՝ որ իւրաքանչիւր ոք իւր գաղտնի մեղքերը
գրված տեսան։

Է. ՃԹ. Քրիստոս բժշկեց Գերգեսացւոց
երկրին մէջ դիւահարը, հնչպէս որ կը պատմէ
Մարկոս առաքելոյն, (Գ. Ե)։ Այս դիւահա-
րին ունեցած դեւերը շատ էին, և երբ դիւա-
հարը քրիստոսի գէմ եկաւ, սկսան դեւերը աղա-

ձեռ քրիստոսի, և ասել. «Ջի մի առաքեցէք զգնեսս արտաքս քան զաշխարհն»։ և այն ան զ խոզի երամակ մը կայր, հրամայեաց զնոսին՝ որ զի ուղարկեն երթան, այն խոզերուն փորը մտան։ այս զիւաց երիս աղաչանքը քրիստոս ընդունեց։ «Եւ իբրև ելին (կրնէ) այրքն ոգիքդ, մտին ի խոզսն, և զիւաց երամակն ի զարհ անտի ի ծովն, և հեղձնուին ի ծովն»։

Այժմ երիս հարցմունք ունիմ այս բանին վրայ։ Առաջ՝ քրիստոս ինչո՞ւ զիւաց աղաչանքը ընդունեց։ Երկրորդ՝ զեւերը որ իրենց ուզելովը՝ խոզերուն փորը մտան, և այն խոզերն ալ ծովը խորտակեցան, առանց ափրոջը յանցանքը ինչ էր որ այդ վնասը կրեցին։

Գ. Քրիստոս զիւաց աղաչանքը ընդունելով երիս բան մեզի իմացուց. մէկ մը որ առանց իւր թոյլատրութեանը զեւերը իշխանութիւն չունին ամենեին մէկը տանջելու, կամ փոքրիկ ինչ արարածոց վնաս մը հասցնելու։ Խոզ ազէկ իմանան կախարդաց հնարանքները, և արտաքսանց բերանով չի խօսին՝ թէ շարը շարով կը փրկուի։

